

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 6-7  
JUIN-JUILLET  
1929  
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԾԿԱՆ ԳԱՆՆԵՎՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## ԱԶԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Աշխատաւորական Կուսակցութեան յաղթանակը Անգլիայում իրաւամբ դարձել է ընդհանուր ուշադրութեան կենտրոն: Եւ այդ զարմանալի չէ բնաւ. առաջին անգամն է, որ, իբրեւ հետեւանք ժողովրդական ընտրութիւնների, մի մեծ պետութեան իշխանութեան գլուխը կանգնում է մի ընկերվարական կուսակցութիւն, առանց գործակցելու բուրժուական որևէ կուսակցութեան հետ: Ճիշտ է, ահա 11 տարի է, որ մի ուրիշ երկրում գոյութիւն ունի մի այլ կառավարութիւն, որ իրեն յորջորջում է ընկերվարական և խոստանում է «երկրագունդը վերածել դրախտի», բայց այս օր այլևս ամենամիամիտներն իսկ գիտեն, որ ընկերվարութիւնը նրա ղէմքին չպար է լսի, իսկ իրականութիւնը ճիշտ հակառակն է՝ հերքումը ընկերվարութեան ամենատարրական սկզբունքների: Անգլիական ընկերվարականներ իշխանութեան կանչելը կարևոր է համարւում և իբրև համեմատութիւն այս իշխանութեան հետ. երկու մեթոդներ իրար են հակադրւում. մի կողմից բոլշևիզմը իր դիկտատորական գործելակերպով, միւս կողմից աշխատաւորականները, որպէս ուսմկավար-ժողովրդագետական ըմբռնումների ներկայացուցիչներ:

Ըստ էութեան այս հակադրութիւնը, ի հարկէ, ճիշտ է. անգլիական աշխատաւորականների և ուսւ բոլշևիկների տարբերութիւնը, կանչուած, նախ և առաջ մեթոդի, գործելակերպի, դրւած նպատակին հասնելու եղանակի մէջ է, ապա միայն՝ նպատակի ձեւակերպման մինչ բոլշևիկները երազում են ընկերվարական կարգեր հաստատել մերկ բռնութեան միջոցով, իսկ նրանք փոքրամասնութեան ուժի վրա յենւած և

այս գործելակերպը համարւմ են լաւագոյնը, միակ հնարաւորն ու գործադրելին, աշխատաւորականները պաշտպանում են հետեւողական ուսմկավարութեան սկզբունքը և իրենց հիմնական գաղափարի յաղթանակը տեսնում են միայն ժողովրդի մեծամասնութեան տիրապետութեան մէջ: Այս համեմատութիւնը ընդունելով հանդերձ՝ պէտք է գոչւանալ, սակայն, անմիջական եզրակացութիւններ հանելուց, որովհետև եթէ բոլշևիզմը իր տասնմէկամեայ տիրապետութեամբ սպառիչ նիւթ է մատակարարւում վերջնական կարծիքներ կազմելու համար, աշխատաւորականների իշխանութեան գլուխ գալու պարագաները չեն կարող բաւարար հիմքեր տալ ուսմկավարութեան արժէքի աւարտական քննութեան համար:

Եւ, յիշուի. ուսմկավարութեան կենտրոնական պայմանը ժողովրդի բացարձակ մեծամասնութեան հաւանութիւնն է. ա՛յն իշխանութիւնն է իրապէս ուսմկավար, որ ստեղծւած է ժողովրդի մեծամասնութեան ազատ կամքով: Մակդոնալդի կառավարութիւնը այս պայմանին բաւարարութիւն չի տալիս, որովհետև Աշխատաւորական Կուսակցութիւնը, ընտրութիւնների ժամանակ, ստացաւ Անգլիայի ընտրողների միայն մէկ երրորդի քէն, իսկ ձայների երկու-երրորդը տրւեց բուրժուազիի ներկայացուցչութեան՝ ազատականներին ու պահանջողականներին: Անգլիայի ընտրական օրէնքի և պետական բարբերի առանձնաշար-կութեան շնորհիւ միայն կեանքի կոչուեց ընկերվարական կառավարութիւնը, որը փաստօրէն փոքրամասնութեան կառավարութիւն է և, իբրև այդպիսին, չի կարող կիրառել կեանքում իր ծրագրի հիմնական մասերը. նա

ոյժ կունենայ այն չափով միայն, ինչ չափով որ բուրժուական կուսակցութիւններից որոշ տարրեր նեցուկ կը լինեն իրեն:

Այդ դրութեան մէջ բոլշևիկեան և աշխատաւորական իշխանութիւնները համեմատութիւնը կը դառնայ բոլորովին սխալ: մինչ բոլշևիկը իշխանութեան գլուխ գտնուած է ըստ ամենայնի իր սկզբունքների համաձայն, այսինքն՝ բունութեամբ, աշխատաւորականները կառավարութիւն են կազմել միայն անգլիական քաղաքական կեանքի տարօրինակութիւնների հետեւանքով և ո՛չ իրենց դաւանանքը հանդիսացող ռամկավարութեան բացարձակ յաղթանակով: Հետեւաբար, եթէ բոլշևիկեան իշխանութեան մինչաջօժեայ փորձը միանգամայն բաւական է համոզելու համար, թէ դիկտատորութիւնը որքան համապատասխանուած է ընկերավարական կարգերի հաստատման գործին, աշխատաւորականները ներկայ կառավարութիւնը, ինչպէս և Մակղոնալդի առաջին դահլիճը, չի կարող ծառայել վերջնական եզրակացութիւնների աղբիւր:

Չպէտք է խաբել առաջին տպաւորութիւնից և այն ջերմ համակրական մթնոլորտից, որի մէջ ծնունդ առաւ Մակղոնալդի կառավարութիւնը: Այդ համակրանքի պատճառը աւելի հոգեբանական է, իբրև հակադրւեցութիւն պահպանողականների ձախաւեր քաղաքականութեան: Դրան մեծապէս նպաստում են և այն անմիջապէս նպատակները, որոնք դրւած էին Աշխատաւորական Կուսակցութեան ընտրական պլատֆորմի հիմք—համաշխարհային խաղաղութեան ամբապնդում, անգլւսալեզուութեան մերձեցում, գինեմիսիութեան ծրագրի, պատերազմի հետ կապւած խնդիրների հաւելաւորար, պայքար աշխատադրութեան դէմ, անխաճանքերի գործաւորութեան վիճակի բարւոքում, մասամբ յարաբերութիւնների վերականգնումը Մոսկուայի հետ և այլն: Բոլոր այս խնդիրները հասունացած պահանջներ են անգլիական հասարակութեան գիտակցութեան մէջ, և պահպանողականների կրած պարտութիւններն այս սապարէզում զգալիպէս հեշտացրին աշխատաւորականների յաղթանակը: Անհաւանական չէ, որ այսուհետեւ էլ այս հարցերի լուծման ժամանակ Անգլիայի հասարակական կարծիքը թեթեւացնէ աշխատաւորական կառավարութեան գործը: Իսկ որքան և կարևոր լինեն մատնանշւած պայմանները, նրանք չեն ընկերավարական իշխանութեան գոյութեան իմաստը:

Ընկերավարական կառավարութիւնը իր ձեռքն աննշլով մի երկրի, մանաւանդ Անգլիայի պէս համաշխարհային դիրք ու դեր ունեցող պետութեան իշխանութեան ղեկը, չի կարող սահմանափակել միայն ընթացիկ հարցերի կարգադրութեամբ: Որքան և կարևոր լինեն խաղաղութեան ամբապնդումը, գործադրու-

թեան կնճիւղ կամ նման հարցերը, դրամատորական տիրապետութեան շրջանակում, նրանք բոլորն էլ կարող են պարփակել բուրժուականապատական կուսակցութեան ծրագրի սահմաններում: Ընկերավարական կուսակցութեան դերը ո՛չ թէ բուրժուական հասարակարգի յղղկումն ու բարելաւումը պէտք է լինի, այլ նրա արմատական ձեւափոխումը: Իր պատմական դերը լրացած դրամատորական ընկերային կարգի փոխարինումը նոր ծննդ ընկերավարական կարգով: Այսինքն այն գործը, որ բոլշևիկները փորձեցին գլուխ բերել հրով ու սրով և պարտուեցին շարաշար:

Սակայն, առանց մարգարէ լինելու կարելի է հշտութեամբ գուշակել, որ հէնց այստեղ երևան կը դայ Մակղոնալդի կառավարութեան աքիլեսեան կրունկը: Եթէ անգլիական բուրժուական — մի մասը յօժար կամքով, միւսը՝ սրտի դժոնդութեամբ — հաւանութիւն կը տայ նրա ընթացիկ քաղաքական ու սնտեսական քայլերին, այն պահուէն, որ Մակղոնալդը փորձէ արմատական փոփոխութեան ենթարկել Անգլիայի ընկերային դրութիւնը, անխուսափելի կերպով կը ծառայայ նրա դէմ և կը վիժեցնէ նրա ծրագրիները: Անհնար է, որ Բոլշևիկն — Լոյդ—Չորջի պահպանողական—ազատական մեծամասնութիւնը խորհրդարանում թոյլ տայ, որ Մակղոնալդը, օրէնդրական կարգով, անցկացնէ Աշխատաւորական Կուսակցութեան ծրագրի հիմնական կէտերը, այսինքն՝ Անգլիայի աստիճանական ընկերավարացումը: ո՛չ մի դասակարգ յօժար կամքով չի կտրում իր վիզը:

Ուստի և Մակղոնալդի ներկայ դահլիճի վրա էլ պէտք է նայել իբրև անցողական երեւոյթի: նա դեռ չի խորհրդանշում ընկերավարութեան վերջնական յաղթանակը Անգլիայում: նրա գործունէութիւնը չի կարող ամբողջապէս յատկանշել ռամկավար ընկերավարութիւնը: նրա կեանքը կարող է լինել աւելի կամ նազ սուսական, նայելով թէ խորհրդարանական դէպքերը ինչպէ՞ս կը դասաւորեն, բայց խորհրդարանական նոր դրութիւնները անխուսափելի են: Եւ եթէ Անգլիայի աշխատաւորութիւնը իրօք վճռել է փարել ընկերավարութեան, այս անգամ նա աւելի մեծամասնութեամբ զէ կը տայ Աշխատաւորական Կուսակցութեան, և սա՛ իսկական ընկերավարական աշխատանք կարող է կատարել միայն այն ժամանակ, երբ խորհրդարանում ունենայ իրական մեծամասնութիւն: Այն ժամանակ և կասկածամիտներն էլ հիմք կունենան դատ ու դատաստան անելու ընկերավարութեան զլխին:

Այս այսպէս լինելով հանդերձ, սակայն, անգլիական աշխատաւորականների յաղթանակը չի դադարում կարևոր միջազգային երեւոյթ լինելուց: նա մատնանշում է մի կողմից բուրժուական կուսակցութիւնների սնան-

կութիւնը ազգային և միջազգային բարդ խնդիրները լուծման գործում, միևս կողմից՝ ընկերավարական գաղափարների յարաճուն զարգացումը նոյնիսկ Անգլիայի պաշտանոցական և աւանդապաշտ ժողովրդի մէջ: Աւելին. նա ազգարար է, առհասարակ, ընկերավարութեան հզօրութեան Եւրոպայում և անվիճելի ցուցանիչ բուրժուազիայի համաշխարհային տիրա-

պետութեան վախճանի մերձեցման: Աշխարհը երկունքի մէջ է. մի տեղ ցաւերը կը լինեն խիստ, ուրիշ տեղ՝ մեղմ: Հետեւանքը ամէն տեղ լինելու է նոյնը — ընկերավարութեան յաղթանակը, նոր, աւելի բարձր հասարակարգի ծնունդը գրամատիրութեան զառամող արգանդից:

# ՓՈԹՈՐԿԱԶԱՅՆ ՄԱՐԳԱՐԷՆ

(Բաժնի մահամ Բառասմանակի առքի)

Օր մը բսած եմ անոր մասին — հայկական Մանցոնի:

Նման են երկու հին ազգերու ճակատագիրները — նման են և՛ անոնց ընդվրումի մարգարէները: Մանցոնիի « Նշանածներ »-ուն (Promessi Sposi) նոյն բախտորոշ դերն էր վիճակած իտալական ճակատագրի՝ յեղյեղումներուն՝ մէջ, ինչ որ «Կայծեր»-ուն՝ Հայոց կեանքին մէջ: Մեծ իտալացիի աշխարհահռչակ առջ վերածը դարձած տեսակ մը նոր Ատուածաշունչ իր գերածնող հայրենիքին համար: Եարք մը սերունդներ աղբիցան ու գործեցին անոր տիրական շունչին տակ: Գիրք մըն էր, որ փոթորկեց սարկութեան հսկայ ճահճ մը: Վէպ մըն էր, որ դուրս կուցեց ժողովրդական խորունկ ծաղբերէն հերոսներու անվերջ բոլբոլի և յարոյց՝ համաշխարհային պատմութեան մէջ ամենէն խնկարկած ու փառարանած դիւցազնամատր: Կոխ մը՝ խոյական՝ անհաւասար՝ ընդդէմ օտար լուծերու — հաբարուզեան և բուրժուան բռնապետութեան — կուր մը, որ տանեակի ու տանեակ տարիներ, գրեթէ ամբողջ մէկ դար կը լափէր Բտալիոյ գաղափարական երիտասարդութիւնը, կոշնչացնէր ցեղին ծաղիկը բանտերու, աքսորավայրերու և մարդկային սպանդանոցներու մէջ...

Ռոմանտիզմի մեծագոյն ռահվիրաներէն էր Մանցոնի: Ռոմանտիկ էր նաև Բաժնի:

Այդ որակումը պէտք չէ, սակայն, առիթ տայ թիւր ուժովոր ըմբռնումներու: Հայոց մեծանուն արևասագէտը հանդէս՝ կուգայ, որպէս միանգամայն նուր, խղճամիտ՝ հետազոտող: Իբրև մէկը այն մտաւորական առաջնորդներէն, որոնց վիճակած էր դարբնելու հին, ընդունակ, քաղաքակիրթ, բայց և ստորուկ, հալածական ցեղի մը ճակատագիրը ան երկար տարիներ թիւրբահայաստանի հողին վրա թափառելով, ամենայն խղճատութեամբ կը դիտէ, կը պրպտէ, կու-

ստմնասիրէ այդ ցեղին տխուր վիճակն ստեղծող, պայմանաւորող բոլոր շարաշուք ազդակները: Եւ ամենէն առաջ, հմուտ վիրահատի անվրէպ բնազդով, մատը կը դնէ հիմնական վերքին վրա — հայ ժողովրդի միտքն ու հողին խեղճիւրող, անոր գոյութեան հիմքերը փորող շարիքին վրա — տնտեսական շարիքին:

Ան գիտէ իր ծանր առաքելութեան բոլոր ճոխքն ու պատասխանատուութիւնը. գիտէ «Սուրբ Գործին» առջևը ցցած բոլոր ահաւոր խոչընդոտները. չուզեր մոլորեցնել իր հազարաւոր երկրպագուները սին, խաբուսիկ հեռանկարներով. ան կուզէ պարզերես մնալ Հայոց պատմութեան, հայկական սերունդներու առջև, կուզէ, որ անոնք Փիսակօի, ձախորդութեան պարագային ջարեր չնետեն Առաքելային վրա, չըսեն թէ Բաժնի թեթևամտութիւն խտացուցեր է ներկիւրը, չըսեն թէ Բաժնի խոչընդոտներ է իրականութեան մոռայն ու սրահարկը և իր «Կայծերեան» ծրագրիներով մղեր է ազգը դէպի կորուստ...

Ան գիտէ այդ բոլորը և կուզէ ցոյց տալ խօսուն, անթխտելի իրողութիւններով, որ «Փոթորիկը» պիտի գա՛յ — և արդէն իսկ ծայր է տւեր — պիտի գայ անխուսափելիօրէն, անկասկա մարդոց ուզելէն կամ չուզելէն: Բնական, տարբերային ճակատագրականութեամբ:

Առանց Մարքսի հատորները կարդացած լինելու, ան գիտէ, որ տնտեսական ազդակը հիմքն է բոլոր մարդկային համայնքներու մտաւոր ու կուլտուրական բարեկեցութեան, մղիչ ու յառաջատար ոյժը՝ նաև բոլոր քաղաքական ու ընկերային յեղաշրջումներու. գիտէ որ ստամոքսի անողոք ճիւղը, նիւթական թշուառութեան յուսահատ գալարումները վերջ է վերջոյ կը լուծուին ըմբոստացումի օրհասական աղաղակի մը մէջ, վերջ է վերջոյ կը յանգնեն փոթորիկի ու սակնուվառյութեան — համայնքի մը մէջ, որ ամենքէ մերժած

ու արհամարհած, մարդկային բոլոր օրէնքներէն դուրս նետած է, և, սակայն, անբան նախիրներու բազմութիւն մը չէ բիրտ, պատմագրւորի, թախառական Նորգա մը չէ, նման ասիական շատ մը Նորգաներուն, այլ օտուած, յառաջադէմ ժողովուրդ մըն է, դարաւոր պատմութիւն մը ընդգրկող և իր արժանապատուութեան հպարտ գիտակցութիւնն ունեցող ժողովուրդ մը:

Ահա թէ ինչու «Կայծեր»-ու առաջին խկ էջերէն՝ Բաֆֆին ուժգնօրէն կարծազանգէ թիրքահայոց տոնասական գուլումի աղաղակը, բազմապատկած ընդհանուր անպահանջութեան մղձաւանջով...

\* \* \*

Կեանքի ծանրախոհ փիլիսոփայ մըն է Բաֆֆի, և ոչ ընդանցական ոլորտներուն մէջ սուսուռող միտք մը: Հայկական շարժման փոթորկածայն մարզարէն չի ներկայանար մեզ, որպէս իրականութեան Նողէն կտրւած գաղափարամոլ գառանցող մը, որ մոլեղնօրէն կը թափահարէ տունքիշտական յարգածողը և տղայական անըլրահայեցողութեամբ կը խաղայ կրակին հետ...

Ո՛չ: Ռոմանտիկ լինելով հանգերձ, անոր միտքը գերազանցապէս իրապաշտ է, գգաստ ու շըջահայեաց: Ապացոյց՝ խոհականութեան այն դեղեցիկ հրահանգները, որ Բաֆֆին — յեղափոխական գործունէութեան տեսարանը — կուտայ իր գաղափարախօս-հերոսներուն: Ամենէն առաջ՝ ան կը հրահանգէ — լաւ քանցնալ հայրենի երկիրը: Այդ առաջնագոյն պայմանն է, կըսէ, անհատի մը զարգացման ու գիտութեան:

Եւ ինքը լաւ էր ճանձցեր այդ հայրենիքը, անոր պատմութիւնը, աշխարհաբանութիւնը, ժողովուրդը, դրացիները, այլ և այլ զեղերը, վարք ու բարքը: Եւ Բաֆֆիական շարք մը վէպերը, նոյն ինքը «Կայծերը», հայ ըմբոստներու գործունէութեան յատակագիծը, մի թէ ձեռնարկ են հայրենագիտութեան:

Հայրենիքը լաւ քանցնալու է... Այդ պարզամը, կարելի է ըսել, leit-motiv-ն է, զեկամարող յանկերգը: «Կայծեր»-ու մէջ և վրպաստեղ անգամ մը ևս կը կրկնէ «այն՝ դրէք երկրորդ հատորի վերջերը, երբ երկարատե քարոզութիւնն իյտայ, իր հասնի Առաջին հրաժեշտի ժամը, երբ ան պիտի մեկնի դէպի «Հնդկաստան»:

— «Վսի՛ր, Ֆարիստ, կըսէ Ալանը, երբ անմեմ մէկտեղ կիցնին Աստաբերդէն, առանց հիմնաւոր գիտութեան մարդ չէ կարող օգնու բերել ոչ իր ազգին... և ոչ մարդկութեան: Ես բերեցի քեզ այստեղ, որ այդ քայլերը պատմեմ քեզ, որովհետեւ մեմք շուտով քաժանելու ենք...»

Գիտ. անցար մեր հայրենիքի... մի նշանաւոր մարդ: Գու քո աչքով տեսար և տեղի վրա ծանօթացար մեր ժողովրդի դրութեան հետ, նրա անցեալն ու ներկայի հետ: Հայրենագիտութիւնը գլխաւոր ուսումնաբն է այն անձանց համար, որոնք ներխուժ են ծառայելու հայրենիքին: Ով որ հայրենիքը չի տեսել, չի քանցել և կամենում է նրա համար մի ծառայութիւն անել,

նման է այն դերձակին, որ մարդուն չտեսած, նրա չափը չտեսած, նրա համար հագուստ է ձևում...

«Մի այդպիսի սխալի մէջ չընկնելու համար, ես ցոյց տւի քեզ մեր հայրենիքը: շատ երկայնքների պատմաբանները քաջատեղի քեզ, շատ տեղերի և շատ ցեղերի հետ ծանօթացար դու: Ես ձգեցի քո մէջ ապագայ յառաջդիմութեան սերմերը միայն: Իսկ գիտութեան լոյսը կը ծիցցի, կանցցի և պողպար կը կացուցանի նրանց...»

Հայրենագիտութիւնը նաև անհրաժեշտ նախապայմանն է հայրենասիրութեան: Անհատի մը գործունէութիւնը կրնայ օգտակար լինել միմեայն այնպիսի միջավայրի մէջ, որու հետ կապւած է ան իր Նողու ամենանորը թելերով: Ինչպէ՞ս կարող էք սիրել բան մը, որուն անձանօթ էք, սիրել հայրենիքը, եթէ չէք ուսումնասիրած անոր բնութիւնն ու պատմութիւնը, ներկան և անցեալը...

Բայց և ինչպէ՞ս սիրել հայրենիք մը, որ խորթ ու դաժան մայր մըն է եղած անհատին համար, ուր մշտապէս տիրել է զժողովրդի արհաւիրքը... Ի՞նչը՞ կարող է կապել հայ անհատը իր հարազատ միջավայրին հետ, ուր անոր կեանքն ու գոյքը ամէն վայրկեան ենթակայ են բարբարոսներու կամայականութեան, ուր պատեր, ընտանեկան սրբութիւնները մշտապէս կախաբեկ են...

Այստեղ Բաֆֆին կը բացատրէ հայրենիքի պաշտամուտքը, հայրենասիրութեան ծագումն ու էությունը: Եւ, բնականաբար, Ռեյնանի ձեռով առաջնակարգ տեղ մը կուտայ պատմական անցեալին, աւանդութիւններուն, յուշերուն ու յիշատակներուն.

... «Հայը չէր ուզում բաժանել իր հայրենիքից: Այնտեղ ամէն մի քայլ, ամէն մի անբալ յիշեցնում էին նրան իր վաղեմի մեծութիւնը: Գիտ բուրբակին չէին անհետացիլ բերդերը, անբացնիքի փրատակները, ասկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրանց իշխանութիւնը: Գիտ մնում էին հին քաղաքների անբակները, որանց փշրամբների մէջ երևում էր հայ մարդու սրիստուն ու ճարտարութիւնը...»

«Վամէրը ոչ միայն իրև կենտրոն հայերի կրօնական կեանքի, պահպանում էին ազգի սրբութիւնները, այլ և ամփոփում էին նախնեաց մտաւոր վաստակները, հին մագաղաքների վրա... Վամէրի մէջ դրած էին շիրիմները հայոց մեծ մարդերի... Աշտիշատի կեղեցիկն Մուշի մէջ կրում էր Սահակ Պարթևի գերեզմանը... Առաջինը վամէր ուներ Մովսէս Խորենացու գերեզմանը... Նայն վամէրում էր Գուրբ «այնագր» փիլիսոփայի գերեզմանը... Վամէն Ռուսմայ, Ռըշտունեաց երկրում, ուներ եղիշի գերեզմանը... Վամէն Մարկկայ ուներ Գրիգոր Նարեկացու գերեզմանը... Վարագայ վամէր ուներ Սենեֆերի Աքրանու գերեզմանը... Վամէն Բասնու — Գրիգոր Մագիստրոսի գերեզմանը... Տարօնի սուրբ Կարապետի վամէր — Մուշեղ և Գայլ Վահանների գերեզմանները...»

Բայց հայրենիքի գիտակցական պաշտամունքը տերտորէն կապւած է ազատութեան պաշտամունքին հետ:

Այդ վերջինն է, որ կը պակսի հայ ժողովուրդին

և հոտ է դժբախտութիւնը Պէտք է անդուլ քարոզութեամբ հասկննել ժողովուրդին ազատութեան արժէքը: «Այս մարդիկը — կըսէ Աւլանը թիրխահայ գոմգւածի մտաին — հասկանում են իրենց դուրքեան բոլոր այլանգակութիւնը, բայց շարժառ հարստահարութիւններին տակ ննչեկով, մինչ այն աստիճան հոգով ու մարմնով թուլացած են, որ շատ բնական են գտնում իրենց վիճակի բոլոր դառնութիւնները: Նրանք կարծում են, թէ այլ կերպ լինել կարող չէր, թէ իրենք ստեղծած են ստրուկ լինելու համար»...

Մեր ժողովուրդի առաջնորդող դասակարգերը — կըրեր ու վաճառականութիւն — երկուքն ալ ծանրաբեռնուած են արասներով, կըսէ նոյն Աւլանը, երկուքն ալ «անպէտացած տարրեր», որոնցմէ ոչինչ կարելի է ակնկալել: Իսկ բուն ժողովուրդի մէջ... զեռ կան կայծեր, որոնց պէտք է շունչ տալ, բորբոքել, մինչև նրանք բոցավառին... Իսկ «դա լինում է տոկուն, հիմնաւոր կրթութեամբ, որպէսզի ժողովուրդն ինքը հասկանայ թէ իր ընդհանուր է ազատութիւնը»...

Այստեղ, սակայն, ազատութեան դադարի շուրջը, երկու տարրեր մարդ կը խօսի Բաֆֆիի մէջ, երկու տարրեր հասկացողութիւններ: Մէկը կարտայայտի Կարօի բերնով, միւսը՝ Այլանի: Մէկը՝ տաք, կրկնուտ, բուն ու անհամբար խառնածքի տէր՝ կը թէլադրէ անանց երկար սպասելու «գործը» դիմել և ըստ կարելոյն շուտ թօթափել օտարի լուծը: Վասն զի, կըսէ, միայն ազատութեան մէջ մարդերով՝ ժողովուրդը պիտի սորվի ըմբռնել այդ ազատութեան արժէքը:

Միւսը, Աւլանը, աւելի պաղարին, հուսարահուլուած ու շրջահայեաց, կը հրահանդէ քայլել հանդարտ, զգուշութեամբ ու խոհեմութեամբ, կըթել, դաստիարակել ժողովուրդը, մինչև որ ան պատրաստ գտնուի ոտքի ելլելու:

Կարծւ, բնութեան հարգատու ու պաշտ գաւազը, կը պատճառարանէ, որ «ազատութիւնը մարդուն ընդարտ քննադրելէն մէկն է և կը մնայ մարդու հետ միասին: Մարդիկ կը հանդուրժեն ստրուկեան լուծը, բայց ակամայ... Հեռացուցէք անոր գլխին բռնութեան ճնշող ոյժը և կը տեսնէք, որ ան ազատ էակ մըն է, ազատութեան բոլոր ստորագելիներով:

Ուշագրաւ է երկու Բաֆֆիներու այդ բանակոխը: Նիհարալ անքան փափուկ է և ընդունելիք որոշումը այնքան ծանր ու պատասխանատու... Ի վերջոյ, կը թւի թէ «կայծեր»ու հեղինակը սինթէզ մը կընէ, կը համադրէ երկու տարրեր հասկացողութիւնները, Կարօի մէջ ևս գտնելով ճշմարտութեան խոչոր բաժին մը:

Աւլանը կըմբռնէ, անշուշտ, որ կարելի չէ, աւել պայմաններում մէջ, սպասել տասնեակ ու տասնեակ տարիներ, մինչև որ կրթութեան, դաստիարակութեան խաղաղ ճամբով, ամբողջ ժողովուրդը հասնի իր իրաւունքին լրակատար գիտականութեանն ու ոտքի կանգնի: Ե դիտու ուժով պահանջել իր ազատութիւնը: Յարաճուն հարստահարութիւնները, պարբերական տվն ու գաղթը և երկրի ամայացման հետապատկերը չէին թոյլատրեր այդքան համբերատար կեցածք: Եւ եթէ լրովին չէ համաձայնը Կարօի հետ — որու ազատութեան հաստատար ներշնչած է ժան ժակ Ռուսօն — եթէ

Կարօի յորդորները կընդունել վերապահութեամբ ու վարանումով, պատճառն այն է, որ կը վախնայ անոր բուն, հապուապ գործելակերպէն, վասնզի անպատրաստ ժողովուրդ մը ոտքի հանելը կապուած է աւանդ վտանգներու հետ...

«Ես մտաւորաւ համաձայն եմ Կարօի հետ, կըսէ Աւլանը, այս՝ ազատութեանը մարդ բնութիւնում է ազատութեան մէջ: Բայց գլխաւոր բանն այն է, թէ ի՞նչ միջոցներով պէտք է տալ մի ննչուած ժողովրդի ակաւտութիւն, երբ հազարաւոր գործը ձեռքեր արգելի են լինում»...

Եթէ Կարօի ուստիական գաղափարը ազատութեան մասին գիտականօրէն վիճելի է, նոյնիսկ անկայուն — ապա միւս կողմէն անվիճելի էր այն, որ թիրքաւայող կացութիւնը, մասնաւորապէս պատերազմին յաջողող շարք մը տարիներու ընթացքին, էր Բաֆֆիին կորուճար իր «նախագիծը»՝ դարձեր էր միանգամայն անհանդուրժելի և աւելի երկար սպասել ու բաւականանալ միայն սերունդներ կրթելով ու դաստիարակելով: Բացարձակապէս անկարելի էր: Սրիմեան բարձրածնէ: Բացարարեր էր այդ՝ զեռ 1878-ին իր վերագործին Բերլինէն, ծանօթ պատկերաւոր խօսքերով...

Անգամ մը ևս վերջիչեցէք այն պատմական օրերը: Վճատութիւնը ծայր էր տեւր հայ ղեկավար շրջաններուն մէջ: Երբ յողածող պատրասնք մըն էր. Մեծ Բրիտանիան, Դիդրալէլի կառավարութիւնը շնականօրէն կը դրժէր իր խոստումը. բոլոր դիմումները — անպարզին, և թիւրք կառավարութիւնը՝ աւելի թշնամի, աւելի անողոք, աւելի ճնշող քան երբեք: Հայիական դատը վիճելու վրա էր և Իզմիրեան Երբ յողածին առթիւ ճառ մը կը խօսէր Աղգային ժողովին մէջ, որ նման էր դամբանականի: Մինչ դաւաններէն կը շարունակէր աղիողորմ գանգատներու տարտիք քրդական յարաճուն բռնութիւններու մասին:

Երկու հոսանք թրջահայ իրականութեան մէջ: Երկու տարրեր, իրերամարտ հոգեբանութիւն: Մէկ կողմէն՝ ըմբոստ երիտասարդութիւնը, քաջալերուած Բուլգարիայի օրինակէն և օգտելով օսմանեան Սահմանադրութեան ընձեռած վաղանցուկ ազատութեան, կը քարոզէին խօսքով ու գրչով — ապստամբութիւն... Ոմանք՝ նոյնիսկ Ազգային ժողովի բեմէն (Ստեփան Փափագեան և ուրիշներ): Միւս կողմէն՝ պահպանողական տարրերը — և անոնց մէջ վրպասան Մերենց — խոհեմութիւն ու համբերութիւն կը պատկանէին Կ. օրօրներով կը քննադատէր «Երիտասարդ Հայաստանը»:

Չարհուրելի երկընդորաքի օրեր... Բաֆֆիին սրբատարով կը դիտար ցեղին երկշտ գարթօնը: Բասնտեղծի դերագայուն հոգին, անտարակոյտ, աւելի ուժով, քան ունէ ուրիշը, արձագանգ կուտար հայ իրականութեան գարհուրանքներուն և ըմբոստացումի ազդակներուն: Միւսը փոխն ի փոխ կը խանդալաւաւէր ու կը դողար, իսկ կտաք՝ վարանումի, տաճնապի մէջ էր: Հրաբալը կը գտար. «Կայծեր»ու վշտանով հեղինակի ներսէն, բայց պատասխանատուութեան անկող գաղտնուր և բարձր խիղճը կը կաշկանդէին անոր գրիչը:

Ամբողջ էութեամբ, այնուամենայնիւ, ան Երիտասարդ Հայաստանի հետ է:

Համբերութիւնն... Ո՛ր: « Անդգայ դիակները միայն Համբերել գիտեն»: Այդպէս կը գրէր «Մշակ»-ի մէջ 1878-ին, ի պատասխան Մեհերեցի և ուրիշներու օրօրներուն:

Իզնատիև, ուսաց դեպպանը, ըսեր էր արդէն. «Հայերը մեռելու տարր մըն են Քիւրբեթոյ մէջ»... Բաճիքին, Հարկաւ, չէր բաժնիք դեպպանին կարծիքը. ան այնքան բարձր կը դնահատէր Քիւրբեթանյայտանի լեռնային շրջաններու հայ բնակչութիւնը:

Բայց և այնպէս, ներքին ձայն մը, անողոք յուշարարի պէս խոհեմութիւն կը թելադրէր վիպասանին: Հրատուխը կը փոթորկէր, լաւան կը հեղեղէր անոր ողջ էութիւնը, բայց սիրտը չէր գործեր գրել — «Հապօ՛մ, ի գէն, օ՛մ անդր յառագ»...

Գրիչը կը կրծոտէ, գրողը անհնարին ճիգ կընէ սանձահանելու ինքզինքը, որպէսզի շտարի յորդահոտու գրացումներէն և չըրծէ ճակատազրական վրէպումներ... ան գիտէ, որ ժողովուրդը իր ճնշող ընդհանրութեան մէջ անգէն ու անպատրաստ է, գիտէ, որ ամենքը Շատախից ու Սասունցի չեն. գիտէ, վերջապէս, որ «հապարաւոր գործիք ձեռքեր արդէն են լինում» հայոց ազատութեան:

Ուստի կը հրահանիէր թխալ քայլ առ քայլ և երկարօրէն «Վայժեր»-ու մէջ կը ծանրանայ ինքնապաշտպանութեան քարոզին վրա...

Հաւատաւոր, սակայն, կը մնայ անխախտ: Բաճիքին յեղափոխական մըն է, և հայ ժողովուրդին կացութեան յեղաշրջումը անոր պատմական-փիլիսոփայական աշխարհահայեացքի գերադոյն պատգամն է, անոր կուս համոզմունքին թելադրանքը:

\*\*\*

Անթիւ, անհամար են շարժման գէժ ծառայած խոջ ու խուժերը — և ամենէն առաջ՝ մեր ներքին անվարքանութիւնը... «Քեռի Պետրոսները», «Ճէր Թողիկները» կան, որ ժողովրդի առաջնորդներն են, բայց իրենց ետական շահերով տարւած և ժողովրդական շահերուն թշնամի: Անոնց մէջէն իսկ՝ պիտի դուրս գան յեղափոխութեան երզնայ ոսոխները—լրտեսներու, մատնիչներու, դաւաճաններու լիզէնը: «Ամէն ժամանակ, կրէ Ասլան, երբ հայի համար որեիցէ դաւաճանութիւն է պատրաստուում, նրա մէջ խառն է լինում... նոյնիսկ հայի մատնիչ ձեռքը: Իս մի պատմական եղեռնագործութիւն է, որ սկսեալ ամենահին գարեբից, խիստ յաճախ կրկնել է մեր ազգի կեանքում»:

Պիտի շարժիլ այնուամենայնիւ, հայկական տարերքը, վասնզի անդգայ դիակ մը չէ ան, այլ ուղեղով ու նհարդերով օժտուած մարմին մը: Եւ որպէսզի շարժումները խառնակ, քառօսյին կերպարանք չառնեն, լաւ է որ անոնք կազմակերպուած լինին:

Ապագան մուժ, անստոր էր: Բայց Բաճիքին միմիայն անը չէր տեսներ այդ մշուշապատ սպազային մէջ: Բացասական ազդակներու հետ — որոնք եղեր են բոլոր ազգերու ազատարբական շարժումներու մէջ — ան կը նշմարէր և քանի մը դարական ազդակներ: Ժողովուրդի առաջնորդներ — կղեր, վաճառականներ — անտարբեր կամ թշնամի, բայց ինքը ժողովուրդը ունի

անվթար առողջ տարրեր, ունի սրտոտ և ռազմունակ կորիզներ: Հայ ազգը, ինչպէս նախին դարերու, մտանապէս այժմ, կարող է ծնիլ գաղափար մոլորանդ սպասաւորներ, որոնք դործի զուխը անցնելով, իրենց հետ կը տանեն զանգաճը: Գաղափարական և ձեռնեղէց փոքրամասնութիւնը չէ՞, որ վարել է բոլոր ազատարար պայքարները Արևմուտքի և Արևելքի մէջ... Ինչը Բաճիքին — այդ փոքրամասնութեան իմացական պարագլուխը Հայոց մէջ — իր հանճարեղ զբոյժ իսկ, կարող էր շղթայազերծել յոյսի և հաւատքի, խանդավառութեան և արիւթեան հզոր ալիք մը ցեղի գգալուն տարրերուն մէջ... Հաւատ ու խանդավառութիւն, որոնք այնքան հրաշքեր գործեր են ժողովուրդներու պատմութեան մէջ...

Դրական ազդակ մը կարող է լինել և համերաշխ գործակցութիւնը երկրի ոչ-թիւրք տարրերու հետ — Զուլամբեկի կիսանկախ նստորականներու, ջրղական որոջ ցեղերու և այլն: Եւ Բաճիքին կը հրահանէ իր գալիք աշակերտներուն՝ ձգտիլ համաձայնութեան գալու այդ տարրերուն հետ ու կը յանձնարարէ ընտրել լեռնոտ վասպուրականը, իբրև շարժման կեդրոնավայր:

Ոչոր դաշնակից մըն ալ ինքը Հայոց բնութիւնն է, — լեռներն ու ձորերը:

«Մեր գլխաւոր օգնակցն է մեր երկրի բնութիւնը. կըրէ Ասլան... Վաճ-Տասը իր անմաշտիլի լեռներով, իր անդնայտար ձորերով և իր նեղ փապարներով մի հսկայական ամրաց է... Այստեղ շատ անգամ հռոմայեցիք, յոյները, պարսիկները, մարերը և արաբացիք կորցրել են իրենց լէգէոնները: Վաճայ ցահանգը բնութիւնից պարտաստուած է հայերի համար ազատ կեցութեան կեդրոն լինելի»...

Ասոնք բոլորը դրական, յուսատու ազդակներ են, բայց «Վայժեր»ու հեղինակը հաշի կտանէր, անտարաւոյս, նաև արտաքին ուժերու միջամտութիւնը — Ռուսաստանի կամ արևմտեան պետութիւններու աջակցութիւնը: Ան չէր կարող անգիտանալ, որ 1826 թւականէն մինչև 1878-ը Բալկաններու միջև Լիբանան, Արևելքի բոլոր ջրիտանեայ ժողովուրդները, ապրստամբելով ու արիւն թափելով՝ յարուցեր են արտաքին ուժերու միջամտութիւն և ազատագրեր թիւրքական լուծէն: Կատարածի վտանգն ևս ըստ երևոյթին չէր վրիպեր անոր պայծառ տեսողութենէն, բայց այն կը սեպէր անխուսափելի ու անհրաժեշտ շարիք մը: Գիտէր, անշուշտ, որ ոչ մի ժողովուրդ չէ ազատագրելու առանց մեծամեծ արհաւիրքներու և զոհբերութեանց...

Ան չէր կարող, անգամ ամենաև յոռետեսութեան մէջ, նախատեսել այն հրէշաւոր դաւերը, որ նիւթեց հայկական դատի գէժ դիւանագէտ աշխարհը և, մանաւանդ, ուսական, լրատնոյթեան դիւանագիտութիւնը...

Ազգակ մըն էր, դրեմն, նաև դրսի միջամտութեան հաւանականութիւնը: Սակայն, խղճամիտ քարոզիչը չուզէր պատրանքներով կերակրել իր հայկական լսաւորներ: Կարծես նոյնիսկ գիտակցաբար կը խոսացնէ ան ներկը, որպէսզի ըմբոստացող հայութիւնը իր վերապաց իդէալիզմին մէջ մնայ գգասու ու ինքնամոփ,

լարէ իր բոլոր ննարդերը և ապաւինի միայն ու միայն իր սեփական ուժերուն :

«Օտարի օգնութիւնց մեզ չառ չկայ, կըսէ Աւսանը... Ողորմութիւն խնդրողի երեսը միշտ սև կը լինի և քակը դատարկ : Մարդ պէտք է իր սեփական աշխատութեամբ և իր ուժովը սուփ կանգնէ... Երբեք օտարը մարդու համար չէ մտածում, քանի որ նա ինքն իր մասին անհոգ է»...

Կուզէ ըսել, որ օտար կարող է, ի հարկէ, հետաքրքրուի և շարժուի, եթէ ինքնապէս մեր մասին հոգանք...

\*\*\*

Ինքնօգնութիւն, ինքնապաշտպանութիւն... Կարօի և որսորդ Աւօի մշտնջենաւոր յորդորներն են՝ ուղղւած թալանւող ու խողտանկաւոր թրքահային : Եւ հայկական շարժումը, մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը երկար տարիներու ընթացքին եղեր է գրեթէ բացառապէս ինքնապաշտպանութիւն, գէնքի փոխադրութիւն, ժողովուրդի զինաւորում ու մարզում...

Այսօր իսկ, չէք կարող առանց խորին յուզմունքի կարողալ որսորդ Աւօի և Կարօի պաղատաւորին յորդորները իրենց փոքրածիւր, տակաւին երկչոտ ու վարանտ հետևորդներուն : Ահա կտոր մը ծերունի որսորդի իմաստասիր քարոզէն, ուր կարծածէր իր առնական հաւատամբը ինքնապաշտպանութեան գաղափարի, ազատութեան և յեղափոխական փոքրամասնութեան մեծագործ էութեան մասին...

«Մարդ կայ, որ հազար մարդ արծէ : հազար մարդ կայ, որ մի մարդ չարծէ : Կարօն, Աւսանը և Սագօն էլ մարդիկ են, այն գիւղացիք էլ մարդիկ են (կականարկէ խումբ մը հայ զինուկներուն, որոնք նոր յանձներ էին իրենց նախիրը բերելու հրոսակներուն, առանց ունէ գիւմարութեան) : Կարօն ալ իր երկու ընկերներով գացելու կուտով յետ խլեր էր աւարը : Մ.Վ.)... Երկուսի մէջ այնքան զանազանութիւն կայ, որքան առիւծի և կատիկ մէջ»...

«Ո՞վ կարող է ստրկացնել մարդուն, եթէ ինքն մարդը ցանկութիւն չունի... Մարդ ինքն է թոյլ տալիս ուրիշներին նստել իր շինքին վրա : մարդն ինքն է պատրաստում իր համար ստրկութիւնը...»

«Ամբողջ աշխարհը մէկ կուի դաշտ է, ուր ցօրեղն անգօրին կլանում է, ոչնչացնում... Բանը շատութեամբ մէջ չէ : Գլխաւոր բանը սրտի մէջն է... Թէ ուզում ես այս աշխարհում ապրել, պէտք է գայլի հետ գայլ դառնաս... Գլուխդ մի՛ խոնարհեցրա, թէ չէ ծածուկներ շատ կը գտնուեն : ողորմած եղիր դէպի քեզանց տկարները, բայց թշնամուդ մի՛ խնայիր»...

Մեզմէ ո՞ր մէկը չէ յուզելը մինչև սրտին խորքերը, կարողալով այն հետաւոր ու բախտորոշ օրերուն, Կարօի այս պատանեկան բաժակահաճուր, ուղղւած իր ըմբոստ ու նոյնպէս պատանի դասընկերներուն, ընթրիքի սեպանի շուրջը, երկրագործ մենաւոր տաղաւարին մէջ, պիշեռային խորհրդաւոր լուսութեան պահուն :

Կը նկարագրէ հարազատ ժողովուրդի անմխիթաբ վիճակը, պարբերական սովն ու զաղթը, ողբն ու հեծեծանքը, և ահա վերջապէս...

— «Մենք որ բոլորիլ ենք այս սեղանի շուրջը...»

մեր մեծ մասը հայր, մայր, տուն, ազգականներ չունի... բոլորը կարած են անյայտութեամբ մէջ... Մենք երեխայութիւնից փորձիլ ենք այն ամէն գառնաբիւնները... մեր ամէն մէկի սրտում դեռ մնացել են անբժշկելի այն վերքերը, որ ստացել ենք բռնութեամբ կռուիւն ձեռքից :

«Ընտանիքը կարողացաւ մեզ այնպէս դատարարել... որ ձգէինք մեր վզից ազայ լուծը... որովհետև նա ինքն ստրկացած էր : Գայրոցը, որի աշակերտներն ենք... աւելի հաստատեց մեր ստրկութիւնը... Քառանայ վարժապետը մտգուց մեր մէջ կոյր հնազանդութիւն — խոնարհելի և հպատակելի ամէն իշխանութիւնների...»

«Բայց գտնուցաւ մի ձեռք, որ դուրս բերեց մեզ դպրոցի... փոսեցնող մթնոլորտից... կանգնեցրեց մեզ ուղիղ ճանապարհի վրա... Եւ մեմք նւիրեցինք մեզ ժողովուրդի բարօրութեան գործին... Խմբի՛ք այն գործի աշողութեամբ համար, որ մեր սուրբ ուխտն է»...

(Բաժակները զարնեցան մէկ մէկու և ներկաները խմեցին որսորդ Աւօի կենացը, բոլորը միաձայն գոչելով — «Կեցցէ՛ բարի գործը»...\*)

\*\*\*

« Գտնուցաւ մի ձեռք » . . .

Գտնուցան հարիւրաւոր և հազարաւոր ձեռքեր, դիւցազունները վէրի էջերէն անցած կենդանի իրականութեան արեւնոտ կրկնաբ, որսորդ Աւօները հրապարակ իշան լեզեններով...

Եւ անոնց Գործը — «Բարի Գործը» — երկու տասնական տարիներ թաւախելով կուրենքու և արհաւիրքներու մէջէն, եկաւ յանգաւ — օսմանեան ընդհանուր վերելվարումի ալիքին մէջ — 1908-1914 թւականներու կացութեան, երբ հայ ժողովուրդը կը թևակոխէր վերածնութեան շրջան մը, երբ դարեւրով չարչրկւած երկիրը կը տեսնէր, վերջապէս, ապահովութեան ու յարաբերական ազատութեան կազմարկի յոյսը և, հակառակ բոլոր խոչ ու խուժերուն, կը կազմակերպուէր ու կը զօրանար...

Բայց վրա հասաւ բախանեան, ապա համաշխարհային պատերազմը, և ամէն ինչ վերստին տակն ու վրա եղաւ : Վերաշինուող ու վերածնուող հայրենիքը նորէն կործանեցաւ, այս անգամ արդէն իր փրատակներուն տակ առնելով թրքահայ ժողովուրդի մեծ զանգուածը և խելով հարիւր հազարաւոր դէհեր նաև կովկասեան հայութեան :

Որսորդ Աւօները վերստին յայտնեցան իրենց սիգիֆիան աշխատանքի վրա, և նորէն հնչեցին երկրի ու գաղութներու մէջ երեմիականներն ու անէծքները յաւիտեական քաւութեան նոխազին՝ հայ ազատագրական շարժման ու անոր դրօշակակիրներուն դէմ : Հնչել էին այդ անէծքները դեռ շատ առաջ, համիդեան ջար-

\*) Ընթերցողը չպէտք է մոռնայ, որ Բաժակն կը գրէր գրախնդիչ միլիտանի մշտնջենաւոր սպանալիքի տակ և յաճախ հարկադրւած էր արտայայտուելու եզնպետեամբ բարբառով :

դերէն յետոյ : Որտեղ Աւծեհրու կազմակերպութիւնը դրւեր էր մասնապարտի աթոռին վրա, և «Կայծեր»ու հեղինակը գամէր էր անարգանքի սրինին...

Ինչն աւելի դիւրին գործ, քան այդ անարգ քարկոծումները : Այսոր անոնք կը տեղան առանձին կատաղութեամբ մը Երկրին մէջ, Հայ ժողովուրդի յետին թափթփուկներու արեւտական ու գոռոզ բարձրունքներէն :

Եւ քառասուն տարւան Հայ դրական ասպարէզին վրա, ուր քննադատի ու դատախազի պաշտօնին մէջ սէրտէրններու և արեւոյններու հետ քայլեր են նաև դիպլոմատոր Համալսարանականներ, — մենք կարօտ մնացինք, որ մէկն ու մէկը այլ չկտրու ու խոհական դատախազներն տար քիչ—չատ յուրջ, ատարկայական ու անշատ քննադատութիւն մը Հայկական Ազատամարտի և Բաֆֆիի գործին շուրջ, — քննադատութիւն մը՝ Համաձայն գիտութեան, այսինքն ճշմարտութեան :

«Կայծեր»-ը լոյս տեսնելէն քիչ յետոյ, Հրապարակ նետուեցաւ մեծալինից ամբաստանագիր մը, որու հեղինակը — մեր պահպանողական և ուղղման տէրտարներէն, «Հայկունի» կեղծանունով — ոչ միայն կը ժխտէր տաղանդի ունէ նշոյլ Փայալուկից Հանճարին մէջ, այլ և իսպառ գայն սեղնելու, ոչնչացնելու նպատակով, կը դիմէր պարզ հաստնութեան, — կը յայտարարէր ի լուր ցարական կուսակալութեան, թէ Բաֆֆիին խոտորարար մըն է, յեղափոխական մը, նման ուս «նարողովոյնցներու» և թէ Ասլաններն ու Մարօները ընդօրինակումն են ժեխարամներու և Պերովսկայաներու...

Այո՛, դեռ վիպասանի կենդանութեան օրով, արդէն կը պոռթկար անոր դէմ Հայկական սև, անողբ, կործանարար կիրքը...

\*\*\*

Բաֆֆիները, սակայն, անխոցելի են իրենց Հանճարի բարձունքներուն վրա : Հայոց Ողբագոսի դազաթներէն՝ Մեծ Սգաւորը արբաՀատանքով կը դիտէր չկամ ու գոհճիկ հողիներու այդ ախուր բունկումները, որոնք անգամ մը ևս անոր առիթ կուտային՝ անդրադառնալու Հայ աշխարհի ներքին խոցերուն, Հայկական մտայնութեան հին, խորամտտ, աղաղակող արասներուն վրա, զոր այնքան կատաղութեամբ խարաներ էր իր ծաւալուն գրականութեան մէջ...

Բաֆֆիին ինքը, իբրև գրող-արեւտանգէտ և իբրև մարդ-քաղաքացի, մարմնացումն է Հայկական ցեղի լաւագոյն յատկութիւններուն : Եւ անոր գործը՝ Հարազատ արտադրումն է նոր, Երիտասարդ Հայաստանի առնական խոհերուն ու սենչանքներուն : Կապը, սակայն, չի խզիր հնի և նորի միջև : Ան չի խզիր Հայոց պատմութեան ոսկեղարևան և նորագոյն շրջանին միջև :

Գրերու խոր թմբիրը — ծնունդ արտաքին պատճառներու, բնակայական անհասանում սարսափներու — ժամանակաւոր դաղար մըն էր միայն՝ Հայ մշակութիւնի անդիմադրելի և անքննելի հոսանքին մէջ... Բաֆֆիի գրական ստեղծագործութիւնը, կարելի է ըսել, առաջին հոգո՞ ճառագայթումն է — այլ դարաւոր

խաւարէն վերջ — Հայկական հին Հանճարին, որ տւեր է Եղիշէներ...

Գրողը, այո՛, կանձնաօրէ հայրենիքը : Մուսլ, կոյրական, աղէտաշունչ, ինչպէս Հայաստանի ճակատագիրը : Վշտի, օրհասի մոնէխները գուցէ երբեք այնքան դաժանօրէն, այնքան բուռն կատաղութեամբ չէին հնչեր Հայ գրականութեան մէջ :

Սակայն, վիշտը բաֆֆիական քնարի միակ լարը չէ : Վշտի ազդակներուն հետ շարունակ կը տեղայանթ ու որոտ, կը լրինէ վրէժի, ցասումի անկող ժախթումներ, որ կը յիշեցնեն Վարդանանց օրերը : Նոյն գիծն անցաւ և Բաֆֆիի իմացական ժառանգին — Ահարոնեանին :

Կարելի է լինել մեծ արտիստ մը, առանց լինելու մեծ մարդ մը : Հարիւրաւոր օրինակներ կարելի է բերել բոլոր ազգերու պատմութեանէն : Մեր վիպագիրը կը միացնէ, կը Համադրէ երկու կարգի մեծութիւնները, գեղեցիկ ներդանակութեան մը մէջ : Ան ասուածային բնութեանը Հաղորդակից է և՛ իբրև գրող և՛ իբրև մարդ : Աստածներու, ողբիպեաններու գերդաստանին կը պատկանի և՛ իր ասնճարով և՛ իր բարձր բարոյական արժանիքներով : Բնութեան շքեղ պարզները կը կրէր իր ուսերուն վրա շնախարհիկ Համեստութեամբ ու անտարբերութեամբ, իսկ այդ արդէն ամենէն էական յատկանիշն է ճշմարիտ մեծութեան և շատ քիչներու մենաշնորհը :

Մոյլ ու անհոյթ Հանճարներէն չէր, որոնք կապահինի իրենց բնատուր ձիւրքերուն, շատ չեն տքիր և թեթև ճիգով կը նսանեն իսո՞ք ու անմահութիւն : Անոնք կը սահին հասանքն ի վար, Բաֆֆիին կը բարձրանայ հասանքն ի վեր, մաքուրով ամենէն դժնդակ արգելքներուն դէմ : Ան չի գոհանար բնութեան առատ օժիտներով, այլ կաշխատի շարաշար, ձգտելով ըստ կարելոյն թեղմաւորի բնութեան շնորհը և օգտագործել, իր վատաբախտ ցեղին Համար, իւրաքանչիւր վայրկեանը իր վաղանցիկ գոյութեան : Մարմնացած ճիգ է ան և մարմնացած գոհողութիւն :

Հիւզօ, Զուլա, Ֆլորեն և արևմտեան գրականութեան այլ Հականեր աշխատեր են օրակին 3-4 ժամ միայն : Ստեղծագործ աշխատանք, գԺակին և հիւժիի : Բաֆֆիի Համար 16-18 շախատաժամն ալ սովորական բան մըն էր, անշուշտ : Մտքի ու երևակայութեան ինչ գանձեր պիտի արտադրէր աշխատանքի ու բեղմնաբերութեան այդ տիտանը, եթէ սպրէր Հիւզօի մը, Տոյստոյի մը չափ... Բայց ի մեծ դժբախտութիւն Հայ մշակութի, ան պիտի մեռնէր պայծառ, նոր թևակոխած իր տաղանդի լիակատար Հասունութեան շրջանը... Պիտի մեռնէր վաղաժամ, վասն զի հեքրուճեանն ճիւղեր կրէր՝ յետ շահկուր կորսնցուցած ժամանակը : Կը կրէր իր արիւնսով, իր նեարդերու թանկազին հիւթով...

Ժամանակակիցներէն մէկը — չեմ յիշեր ո՞վ և ե՞րբ — Հին օրերու իր Հակերճ յուշերուն մէջ արձանագրեր էր քանի մը բառով — վիպասանի պատու դրացուճիլի բառերով — յուղէլ մոնէպեանի մը, որ այն օրերէն ի վեր խոր տպաւորութիւն չի յիշողութեանս մէջ : Բաֆֆիի թիֆլիսեան բնակարանին դիմաց, տղէտ, պատու Հայուհի մը, որ շատ անգամ գիտեր էր գիչ-



րային խաւարին մէջ, դիմացի լուսամուտին ետեւը, ճրագի աղօտ լոյսին տակ տեղնող խորհրդաւոր մարդը, ըստ էջ հայ գրագէտի մը.

— Այդ մարդը քուն ու հանգիստ էլ ունի, Միշտ գրում է և արտասում...

Ի՞նչ պաթիթիկ, սրտամորմոք տեսարան... Եւ, անշուշտ, ճշմարտութիւն մըն է պատահին վկայութիւնը: Մարդ մը, հսկայական կարողութիւններով, որ կամոսփին հրաժարուէր էր աշխարհային բոլոր վայելքներէն ճգնաւորի պէս մեկուսացեր ու անմաստուր եղեր էր ծանր, հոգեմաշ, տաժանակիր աշխատանքի մը, յանուն իր գծաբխտ ցեղի բարօրութեան:

Կը գրէր և կաճապարէ՛ր: Կարծէք, այն խորհրդաւոր, աներևոյթ ոյժը, որ կը ներշնչէր իր վիթխարի գրականութիւնը, այն ոյժը, որու հըր ու հըւ գործիքն էր իր հրեղէն գրիչը, անողոք յուշարարի պէս կը մրմնջէր իր ականջներուն. «Աճապարէ՛, վասն զի հաշւած են օրերդ»...

\* \* \*

« Միշտ գրում էր և արտասում »...

Այո՛: Չինայե՛ց ինքզինքին: Փոյթ չէ, թէ կը փշուրէ... Եւ փշուրեցաւ: Անձ հողի մըն էր փոքրիկ մարմնի մէջ: Հերոսական ճիգերուն չդիմացաւ փխրուն մարմինը: Եւ ինկա՛ւ հսկան, գրեթէ յանկարծամահ, ընդամենը յիտուն և շոր տարեկան հասակին մէջ: Եւ անոր իրական մեծութիւնը գզացին միայն մահէն վերջ, ինչպէս որ յայժ, սաղարթախիտ կազնիի մը բովանդակ մեծութիւնն ու պերճանքը կը դիտեն միայն ծառին խորտակելէն ու գլորելէն յետոյ, անոր վիթխարի, գետնաթաւալ դիակին վրա...

«Րաֆֆին կը մեռնի՞»... «Րաֆֆին մեռա՛ւ» — դեռ կը հնչէ ականջներուս հեռագրական բոթարեր զօղանջը Ետե՛լի մտայլ րարձունքներուն, սակէ՛ Ա՛ տարի առաջ:

Եւ խաւարեցաւ վայրկեանարբ Հայոց Երկնակամա-

րը՝ զրկելով իր ամենավառ ճառագայթաւէտ ասողէն: Եւ սուգ հազու հայ աղատատենչ երիտասարդութիւնը, կրօնցնելով իր մեծագոյն կուռքը:

Եւ սուգ հազան Հայոց երկնաբերձ լեռներն ու անդնդախոր ձորերը՝ կրօնցնելով իրենց անմահն Արնգահարը...

Մահ մը — անմահութիւն մը: Մահէն վերջ Րաֆֆին աւելի կենդանի է, քան մահէն առաջ: Մարգարէի մեծ սուերը պիտի շարունակէ խանդավառու և խթանելի դաղափարական հայ աշխարհը, մինչև որ կատարուի «Կայծեր»ու հեղինակին պատմական առաջելութիւնը, մինչև որ իրականանայ «Ունիթիկ» «Վարդանի երազը», մինչև որ հայ բազմատանջ ժողովուրդը վերստանայ իր ազատ ու անկախ գոյութեան իրաւունքը...

Ինչքան ալ թերի, անկատար լինի փոթորկածայն բանաստեղծի գրական ստեղծագործութիւնը, ան պիտի մնայ հոյակապ կոթող մը տանն և հինգ դարու հայ մշակոյթի պատմութեան մէջ և գալիք սերունդները երաստագիտութեամբ պիտի խոնարհին այդ կոթողին մեծութեան, ուժին ու զեղեցկութեան առջև:

Եւ եթէ բախտը այսպէս եղկելիօրէն չդաւաճանէր մեզ, եթէ գէթ այս վերջին փորձութիւնը խնայէր մեզի, և կարմիր բունութեան հեղեղը՝ իր դաշնակեց սև ուժերուն հետ՝ հեռու մնար մեր վատարախտ հայրենիքէն, եթէ «Ձայն տո՛ւր ո՛վ ծովակ»-ի մարգարէութիւնը շարունակէր մնալ իրբ կատարւած իրողութիւն և հայկական եռագոյնը ծածանէր Մասիսի դիմին, ինչպէս 1918-1920 անժողանալի թշուառներուն, — Րաֆֆիի մահուն այս քառասունամեակը պիտի տունէր տարբեր ձևով մը, քան մամուլի թուուցիկ տեսութիւններով: Ան պիտի կատարէր, որպէս համազգային շքեղ, նւիրական տոնախմբութիւն և հայոց մայրաքաղաքը, ամբողջ Հայաստան աշխարհը խանդավառ ապրիլով մը պիտի սարքէին այն մարդուն, որ սիրտ մը տուաւ հայ ժողովուրդին...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

I

Մեր իրականութեան մէջ, գաղութային ինդիքներին լուծման մասին, գոյութիւն ունի երկու տեսակէտ — բոլշևիկեանն, որի արտայայտիչն են կոմունիստները Հայաստանում և Հօփի հետևորդները արտասահմանում, և դաշնակցական, որին, ըստ էութեան, յարում են և ազգային միւս հոսանքները:

Ինչո՞ւմն է այդ տեսակէտների էութիւնը: Ի՞նչ ձևով են ուզում լուծել գաղութային ինդիքները հայ կոմունիստները:

Այս անբնի կան մի շարք պատասխաններ խոր-

հրդահայ հրապարակախօսութեան և վարիչ անձերի յայտարարութեանց մէջ, որոնք բոլորն էլ, վերջի՛ հաշուով, յանգում են միևնոյն հիմնական եզրակացութեան: Ահա դրանցից մի քանի օրինակներ:

Հայ բոլշևիկներից գաղութների վրա առաջին լուրջ ուշադրութիւն դարձնողը եղաւ Ա. Մեսանիկեանը (Ա. Մարտունին): 1923թ. հոկտեմբերին նա հրատարակեց « Գաղութահայ աշխատաւորութեան » ուղղած մի գրքոյկ-կոչ, որով գալիս էր «մի քանի միտք արտայայտել արդէ Հայաստանի և գաղութահայութեան մասին»: Այդ մտքերն էին...

Ամենից առաջ, ի հարկէ, անպատում լուսանք

Դաշնակցութեան հասցէին: Յետոյ՝ ինքնագովութիւն ու փառաբանութիւն խորհրդային իշխանութեան: Եւ ապա —

«Թո՛ղ գաղութահայ աշխատաւորութիւնը իմանայ, որ Հայաստանը ուշի ուշիով հետեւում է նրա իւրաքանչիւր քայլին... Պէտք է, որ այդ աշխատաւորութեան ու խորհրդային Հայաստանի միջև ձգուած լինի ամուր կամուրջ: Եւ նա անասան կը լինի, երբ ընկին Դաշնակցութեան դիակի վրա: Այսպէս աւելի լաւ կը լինի: Կարթագէնը պէտք է կործանել... Սա՛ է, որ մենք նորից ու նորից ասում ենք գաղութահայ աշխատաւորութեան»:

Ուրեմն, անողոք պայքար Դաշնակցութեան դէմ: Այ՛ս՝ մէկ պարտականութիւն, որ խորհրդային իշխանութիւնը դնում է հայ գաղութներին վրա:

Երկրորդ՝ «Եւրոպան գտում է դէպի խորհրդային կարգերը: Ի՛նչ դիրք է բռնում կամ բռնելու է նրա հանդէպ հայ աշխատաւորութիւնը գաղութներում»: Այս հարցի պատասխանն էլ որոշ է Մեասնիկեանի համար. —

«Մեր նպատակն է աշխատանքի և խորհուրդների տիրապետութիւնը բոլոր տեղերում... Աշխատանք մեր յեղափոխութեան ծաւալման համար որդ Արեւելքում, ինչպէս և Եւրոպայում»: Պէտք է, որ «գաղութահայութեան լայն շրջաններում համատարած դաշակաբար լինի խորհրդ. Հայաստանի բարգաւաճումը և, առհասարակ, խորհրդային կամ բանտարանային յեղափոխութեան ծաւալումը ամենայն տեղ»:

Ու եզրակացութիւն. «Կապուել խորհրդ. Հայաստանի հետ, օգնել նրան ինչով կարելի է, վանել նրանից նացիոնալիստական ու դաշնակցական իդէոլոգիան — սա առհասարակն է գաղութահայ աշխատաւորութեան և, առհասարակ, գաղթականական հայութեան ազատութեան ու ապագայի երջանկութեան»: «Մեր գաղութահայ աշխատաւորներից ու եղբայրներից մենք մի բան ենք պահանջում՝ մաքրել ՚հին իդէոլոգիայից և ձեռք-ձեռքի տւած յեղափոխական բանտարանութեան հետ՝ մտածել ու աշխատել յանուն խորհրդային կարգերի»<sup>\*</sup>):

Պարզ ու վճռական: Ա.Մեասնիկեանը առաջարկում է, որ գաղութահայերը կուր մղեն երկու ճակատի վրա. ներքև՝ Դաշնակցութեան դէմ, դուրսը՝ «միջազգային կապիտալիզմի ու իմպերիալիզմի»: «Այսպէս լաւ կը լինի»...

Մի տարի յետոյ, Մեասնիկեանը նորից վերադարձաւ այդ հարցին, այս անգամ մի ընդարձակ — 93 մեծադրէի էջ — բայց վերին աստիճանի ճապարհ ու թեթեւամտ աշխատութեամբ<sup>\*\*</sup>): Այդտեղ, մի քանի ընդհանուր դիտողութիւններից յետոյ, նա երկարօրէն կանգ է առնում Ռամկավար-Ազատական, Հ. Յ. Դաշնակցութիւն, Հնչակեան կուսակցութիւնների վրա և կրկնում է նախորդ գրքովի եզրակացութիւնները:

Հետեւելով իր հիմնական մտքին, թէ՛ «չի կարող կոմունիզմն ընդարձակ տեղ գրաւել, թէ՛ այդ այդ տեղը դեռ բռնած է, թէ՛ և խարխուլ ու քայքայուող, բայց դեռ չունչ քաշող այն մարմնով, որ Դաշնակցութիւն է կոչում» — Մեասնիկեանը իր գրքի կէսը ներքում է մեր կուսակցութեան և ճիգ է թափում համոզել, որ գաղութահայութիւնը երես դարձնէ նրանից:

Ըստ Մեասնիկեանի, «գաղութահայութեան ծոցում՝ Դաշնակցութիւնը տակաւին ո՛ր է ներկայացնում, բայց նա, ի հարկէ, «սուսահայ կապիտալի և առևտրի ներկայացուցիչն է: Նա կուող է, նա «մարտական» է ընդդէմ բանտարանեան և աշխատաւորութեան»: «Մենք Դաշնակցութիւնը միշտ էլ հաշուել ենք որոշ իմաստով մանր-բուրժուական կուսակցութիւն: Բայց չպէտք է մոռանալ, որ սուսահայ իրականութիւնը, շինելով դասակարգային շերտաւորման կողմից յստակած, ապա ենթարկած լինելով մանր-սեփականութեան և ոչ-խոշոր բուրժուալիստ տնտեսական ու հասարակական ազդեցութեան՝ ներկայացրել է իրենից աւելի շուտ ոչ-կապիտալիստական, ոչ-խոշոր բուրժուական, այլ մանր-բուրժուական պատկեր: Վերջինիս ներկայացուցիչը եղել է Դաշնակցութիւնը: Նա կազմել է հայկական կապիտալի մայր թւը»<sup>\*)</sup>:

Միեթարւենք միայն նրանով, որ միայն Դաշնակցութիւնը չէ՛ այդպէս. նմանպէս և ճամկավարները գաղութահայ և տաճկահայ բուրժուալիստ կուսակցութիւնն են կազմում: Արտասահմանում հայկական կապիտալը և խոշոր ու միջին առևտուրը յստակել է ռամկավարների կուսակցութեան մէջը: Եւ արդէն «Դաշնակցականների ու ռամկավարների միջև կայ հակա նմանութիւն: Նրանք մի խմորից են շինւած, սակայն գահազան կարգավարներով են դրոշմւած». ռամկավարները «խաղղապէս» են, իսկ դաշնակցականները՝ «մարտական»:

Ռամկավարներն էլ նոյն դիրքն ունեն դէպի խորհրդային Հայաստանը, ինչ որ և դաշնակցականները. «Քաոս է, որ մի շարք ռամկավարներ եկան և անցան Հայաստանից՝ լրագրող Դարբինեանը, կարծեմ, պրոֆեսոր Ալախանսը, դրամատէր Կարիկեանը, ճարտարպետ Փաշայեանը: Այժմ իսուում է մի շարք ձեռնարկութիւնների մասին Հայաստանի համար: Կան և խոստումներ: Իսկ ո՞րտեղ է նաղդը...»

«Նաղդը» չկայ... Ինչպէս յետոյ կը տեսնենք, մարդկանց փորձ ցաւը հէնց այդ «նաղդը»ն է, դրամը, իսկ դրամ տուող չկայ:

Աւելի լաւ չեն և հնչակեանները. «Հնչակեանները կուսակցութիւն չեն: Նրանք այժմ աւելի են կարճալուծւած, քան 1897 թվականին և նրանից յետոյ, երբ որպէս ազգային-նացիոնալիստական կուսակցութիւն, տեղի տւին Դաշնակցութեան... Այսօր հնչակեաններն

\*) Ուրեմն, Դաշնակցութիւնը «մանր-բուրժուական կուսակցութիւն» է: Խեղճ Աշուտ Յովհաննիսեան. «Մամ յանցաւար կարծիք յայտնելու համար մարդը գրկեց Կովկասի Բարտուղալի աքոնից ու Բլեց ախար, իսկ Մեասնիկեանի համար արձաններ են կանգնեցնում: Եւ դէռ ասում են, որ արդարութիւն կայ խորհրդային աշխարհում...»

\*) Ալ. Մարտունի, «Գաղութահայ Աշխատաւորութեան», 1923թ. Նիւ-Եօրք:

\*\*\*) Ալ. Մարտունի, «Կուսակցութիւնները գաղութահայութեան մէջ», 1925թ. Բեյլիկ: Լոյս տեսաւ և ռուսերէն քարգմանութեամբ, Թիֆլիսում:

աւելի քան խղճուկ պատկեր ունեն... Պէտք է, որ դադութահայ աշխատաւորութիւնը մէկընդմիջտ վերջացնի իր հաշիւները այդ մարդկանց հետ»:

Հայ երեք կուսակցութիւններէ հետ ապալտ իր հաշիւը տեսնուց և ասպարէզը մաքրուց յետոյ, Մեասնիկեանը անցնում է «միլիտանտ դադութահայութեան» անկլիքին: Կարծում էք նրան նիւթակահնէ և հետաքրքրում, ինչպէ՛ս չէ: «Միմիայն դաշնակցականներն նման մարդիկ ընդունակ են խորհրդային իշխանութեան հետաքրքրութիւնը գէպի գաղութները: Հիմնաւորել նիւթական բարիքներով ու սպասելիքներով»: Ամենքը «թի՛ղ մէկընդմիջտ իմանան, որ Պորհ. Հայաստանը արտասահմանից նիւթական սպասելիքներ չունի»:

Հայտա ի՛նչ է, ուրեմն, Պորհրդ. Հայաստանի սպասածը արտասահմանից:

Երկու բան: Առաջին. «Իրի՛ւ, անողք կոխ նացիոնալիզմի դէմ, որը համեմոյն է Դաշնակցութեան իգէոլոգիայի, հակախորհրդային տրամադրութիւններէ, աշխատաւորութեան յետամնացութեան, ինտելիգենցիայի քաղաքական պոռոտախօսութեան, իմպերիալիստական օրէկնոսցիայի, բուրժուական դիպլոմատիախորութեան և այն յիմար ու վնասակար տրայութեան, որը քարոզող է հայ աշխատաւորութեան շարքերում՝ տեղական իշխանութիւններէ և հասարակութիւններէ վերաբերմամբ (հայ՛) Ամերիկայում սո՛ւս կայ, հայ՛ Յունաստանում յոյնի խաթրի խմացի՛ր, հայ՛ Փրանսայում մի՛ լինի ր ապերախտ և այնն»: Կոի՛ւ «Իր հակաիգիտութեան, ներքին նացիոնալիզմի և տեղական կապիտալիզմի դէմ»:

Երկրորդ. «Մենք, ապալտ կուշած հիւրերս, պէտք է ձեռք ձեռքի տանք տեղական բանւորութեան, միանա՛նք միջազգայնական զաղափորներին և Երրորդ ինտերնացիոնալի դրօշակներէ տակ դուրս գանք ընդհանուր թշնամու դէմ: Այսպէս է լինելու բոլոր դադութահայ բանւորներէ, գիւղացիներէ և, առհասարակ, աշխատաւորներէ տակաւիկան»:

Կոմունիստական շարժումը հայ դադութներում ընդգրկելու է ո՛չ թէ՛ միայն բանւորական խաւերն Ամերիկայում, Փրանսիայում, Պոլսում, այլ և շքաւոր գիւղացիութիւնը, որ առատութեամբ յցրել է նոյն Ամերիկան, Պոլսը, Բուլգարիան, Յունաստանը, Փրանսիան, Եգիպտոսը: Այստեղ Փրոնտը մէկ է, կուլուր միաձոյլ է՝ ընդգէմ այդ երկրներէ բուրժուազիայի, ձեռք-ձեռքի տա՛ծ նրանց բանւորութեան և աղքատ գիւղացիութեան»:

«Հայաստանում կարմիր առաւօտ է: Հայ ազատագրւած բանւորն ու գիւղացին կուզեն, որպէսզի վառ արշալոյսը սիրուի և դադութահայ աշխատաւորութեան վրա»...

Մեկութիւններէ կարիք կա՞ջ: Մեասնիկեանի ծրագրով հայ գիւղացին ու բանւորը Փրանսիայում, Ամերիկայում, Յունաստանում, Ռումանիայում ու Բուլգարիայում պէտք է միանայ կոմունիստներին և նրանց հետ միասին կուի մղէ տեղական դրամատէրերէ և կառավարութեան դէմ, Սիւրիայում պէտք է ձեռք մեկնի արաբ ազգայնականներին՝ դուրս քշելու համար Փրանսացիներին... «Այսպէս լուս կը լինի»: Ո՞ւմ հա-

մար «լուս կը լինի»: Յամենայն դէպս ոչ դադութահայ բանւորի և գիւղացու:

Իր ընկերով «ճայրայեղութիւնները» շտկելու համար էր, որ 1925-ին, Հայցիմկուսի այն ժամանակակից քարտուղար Աշոտ Յովհաննիսեանը հրատարակեց իր «Գաղութնալ խնդիրներ» վտար գրքիչը, որի մէջ գծեց «անմիջական ուղիները» խորհրդային իշխանութեան քաղաքականութեան դադութահայութեան վերաբերմամբ: Այդ գրքիչը մինչև այսօր էլ ծառայում է իբրև ուղեցոյց հայ բուլկիներէ ձեռքին»:

Սա էլ սկսում է կուսակցութիւններէ: Դաշնակցութեան վրա յատուկ կանգ չի առնում, թէ՛ և ամբողջ գիրքը համակւած է հակադաշնակցական կոյր ատելութեամբ: Իր հարածները թափում է դիպուտապէս դամկավարներէ և Բարեգործականի գլխին: Դամկավար բուրժուազիայի քաղաքականութիւնը փաստօրէն ներդաշնակում է Դաշնակցութեան վարքագծին: Տարբերութիւնները ձեւական են: Աւելին: Մասաների վրա ազդելու տեսակէտից Դաշնակցութեան բացառապէս «օպոզիցիան» հանրէջ կարճային իշխանութեան ներկայիս աւելի վտանգւոր չէ, քան ուսկավարներէ կեղծ բարեկամութիւնը: Վերջինս աւելի շատ կարող է մտրութեան մէջ ձգել մասաներին, քան առաջինը»:

Սպանիչ դատաւճիւր հաւատարիմ, հեզ ու խոնարհ ուսկավարներէ համար:

Աշ. Յովհաննիսեանը հրահանգում է — «Պէտք է ազատագրել դադութահայ մասաները բուրժուազիայի խորիւրանքներէ»: Բայց ի՛նչպէս: Մեասնիկեանի՞ առաջարկած միջոցներով: Ո՛չ, Աշ. Յովհաննիսեանը այնքան անխելք չէ, որ շտեանէ, թէ՛ համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան գալիք յաղթանակը և, մասնաւորապէս, արևելքի կոմունիստական յեղափոխութիւնը վաղաւջ դուր է, մինչդեռ մի քանի տասնեակ հազար որբերի ու զաղթականներէ խնդիրը դրւած է օրակարգում այսօր»:

Աշ. Յովհաննիսեանը առաջարկում է դադութահայ խնդիրը դարձնել «խորհրդային իշխանութեան ընթացիկ քաղաքականութեան խնդիր»: Եւ իբրև ճշմարտիկ խնդիր», աշխատանքը դադութահայութեան մէջ նրան ներկայանում է երկու ձևով: Առաջին՝ «գաղութներում պահւած ազգային գոյշքերի և բարեգործական գումարների հարցն է»։ պէտք է լուծել յօդուս խորհրդային իշխանութեան «գաղութահայ բուրժուազիայի տրամագրութեան ներքոյ գտնուող ազգային գոյշքերի, դրանց կեամուտներէ, բարեգործական գումարներէ և այլ կարգի այլ միջոցներէ դուրսագրութեան հարցը, «Գաղութներում կան տակաւին ազգային գոյշքեր և Փրանսիայ, որոնց միակ իրաւատէրն է, անշուշտ, Պորհրդային Հայաստանը»: Գաղութներում գանձում են բարեգործական և այլ կարգի նիւթական արժէքներ, որ այս կամ այն չափով կապւած են Պորհրդ. Հայաստանի անւան հետ... Գաղութահայ բուրժուազիայի ձեռքից է, որ պիտի առնել կամ ստանալ նիւթական այդ միջոցները»: «Պէտք է խել ազգային բարեգործա-

\*) Աշոտ Յովհաննիսեան, «Գաղութնալ խնդիրներ», Պետրիպատ. 1925. Երևան:

կան գոյքերն և դուժարները տնօրինելու մենաշնորհչոյ գաղութաճայ բուրժուակցի ձևովքից:

Երկրորդ պէտք է սրել «գաղութաճայ բուրժուակցի» ներքին հակասութիւնները: «Մենք պէտք է խորացնենք, ըստ կարելոյն, հակասութիւնների այն վիճը, որ բնկնում է ազգայնական կուսակցութիւնների մէջ: «Անհրաժեշտ է ուզել այդ նպատակով գաղութական մասայի գլխավորութիւնը իր դժբախտութեան գլխաւոր հեղինակները՝ ուսմկավար ու դաշնակցական ղեկավարները ղէմ, անհրաժեշտ է, որ նստակեցութիւն ձեռք բերած գաղութաճայ աշխատաւորութիւնը և նրա աջակցութեամբ՝ կարգաւեկրայում գաղութականութիւնը կուր գաղութաճայ բուրժուակցի ղէմ»: «Նպատակ պէտք է դնել՝ թուլացնելու կամ վերացնելու գաղութաճայ հիմնարկների մէջ ուսմկավարականների և դաշնակցականների ազդեցութիւնը»:

Ուրեմն, մի կողմից գաղութաճայութիւնից իսկ «ազգային-բարեգործական Փոնդերը», միւս կողմից՝ գաղութաճայութիւնը շերտաւորել, առաջ բերել գասակարգային կուր և գաղութաճայ բոլոր գործերի, բայց, մասաւանդ, նիւթական միջոցների ղեկավարութիւնը յանձնել «աշխատաւորութեան», այսինքն՝ խորհրդային իշխանութեան կուսակցներին: Եթէ Մեասնիկներ ղնում էր երեսակայական, շատ հեռուոր նպատակներ, սա արդէն որոշ, խիստ գործնական և «քնթացիկ» ծրագիր է: Մնում է գծել այդ ծրագրի իրագործման ձևերը: Ա. Յովհաննիսեանը այդ աշխատանքն էլ է կատարում. նա առաջարկում է հետեւեալ միջոցները.

«Անհրաժեշտ է առաջին հերթին նոր, մասայական հիմունքների վրա դնել Հայաստանի նւթական և տեխնիկական օգնութեան գործը»: Դրա համար՝ վերակազմել Հայաստանի Օգնութեան կոմիտէն — ՀՕԿը: «Այդ վերակազմութիւնը չպէտք է նպատակ ունենայ անմիջապէս բարձրացնելու ՀՕԿի տարեկան մուտքը, այլ շրջելու նախ և առաջ կազմակերպութեան ճիւղերի հասարակական-քաղաքական բովանդակութիւնը ու ղեկը... ՀՕԿը պիտի բռնի զգալի չափերով Եգիպտոսի Բարեգործականի և Հայաստանում գործող Ամերիկեան կոմիտէի տեղը: Ամերից ստալ ՀՕԿը պէտք է իր ճիւղերն ունենայ Հայաստան այն վայրերում, որտեղ մինչ այսօր հաստատւած է եղել բուրժուական բարեգործութեան «մեծ խողովակը»:

ՀՕԿը պէտք է դնել անկուսակցական հիմքերի վրա. «ՀՕԿի ճիւղերն են, որ կուշում են դառնալու նախնական այն անկուսակցական կազմակերպութիւնները, որոնց միջոցով գաղութաճայ մասայանք անմիջապէս կապ են հաստատելու խորհրդ. Հայաստանի հետ»: «ՀՕԿը պիտի դադարի լինել ազգի «կենդանի ուժերի», ազգային դասակարգերի ու կուսակցութիւնների կրկնալիդացիայի սպարդէր: Նա պէտք է դառնայ աշխատաւորական լայն մասաների կազմակերպման մի օրգան, որ վերջ տալով ներհակ դասակարգերի համագործակցութեան սին մտայնութեանը՝ նպաստելու է ազգութեան դասակարգային շերտաւորմանը»:

Հօկը իր փողովներով ու հրատարակութիւններով պէտք է լինի խորհրդային պրոպագանդի գործիքը արտասահմանում: «Առանձին կարեւորութիւն պիտի

ընծայի գաղութաճայ անկուսակցական, մասայական օրաթերթերի տանիքը աշխատանքներին: Նպատակաշարժար կը լինի մանաւանդ և աշտմէական, եթէ գաղութային խոշոր կենտրոններից մէկում տեղական նախաձեռնութեամբ ստեղծէր մասայական այնպիսի մի օրգան, որ միջոցներ գտնէր ազատելու աշխատաւոր մասաներին ուսմկավար և դաշնակցական ինֆորմացիայից»:

Իսցի այդ, գաղութաճայ «աշխատաւորութիւնը չպէտք է սահմանափակի միայն ազգային-կազմակերպական ու ազգային-քաղաքական ներքին շրջանակներով: Յարաբարութիւն ստեղծելով այն կամ այն կերպ աշխատաւորական միջավայրին բարեգործական, պրոֆեսիոնալ և քաղաքական կազմակերպութիւնների հետ կամ մտնելով այդպիսի կազմակերպութիւնների մէջ՝ գաղութաճայ աշխատաւորութիւնը պիտի աւելի բարացնի իր զիրքը ազգային գործերի ընդաւանում, աւելի ոյժ տայ ազգային բուրժուակցի և նրա կուսակցութիւնների ղէմ վարած իր պայքարին, աւելի արգասաւոր դարձնի ազգային կազմակերպութիւնների ու հիմնարկութիւնների մէջ նաճելիք իր ազդեցութիւնը»:

Ինչպէս տեսնում էք, խնամքով մշակւած ամբողջ մի ծրագիր է այս, որ ահա քանի տարի է գործադրւում է Ֆրանսիայում, Միւրիայում, Յունաստանում և այլուր: Հեղինակը վաղուց պաշտօնագրերի՝ վտարւած է Հայաստանից, բայց ծրագիրը մնում է կենդանի: Դժուար չէ տեսնել, որ նրա նպատակը ո՛չ թէ գաղութաճայ աշխատաւորութեան բարեկեցութեան ապահովումն է, այլ կոմունիստական կուսակցութեան ու խորհրդային իշխանութեան քաղաքական հաշիւները, բայց և այնպէս գաղութաճայ բուրժուակցի որոշ տարրեր ու, յատկապէս, ուսմկավարներ ամէն կերպ աշակցում են այդ ծրագրի իրականացման: Հետաքրքրական մի նմուշ քաղաքական անկուսակցութեան կամ, գուցէ, կեղծաւորութեան... .

Որ Աշ. Յովհաննիսեանի գծած ծրագիրը իր ուժի մէջ է և այսօր, որ խորհրդային իշխանութեան հետաքրքրող գաղութաճայութիւնը չէ, այլ գաղութաճայ յոյ գրամն ու ծառայութիւնը կոմիտէի շահերին, և երեւում է և՛ Հայաստանի փողովներով և նախագահ Ա. Յասյանի վերջին բարերամութիւնից: Անցեալ նոյեմբերին, Փարիզում, նա յայտարարեց Հօկի օրգան «Երեւան» թերթում (21 նոյեմբ.) —

«Մենք հայերի հաւաքման քաղաքականութիւն չենք վարում և չենք կարող վարել: Դա չի բխում Հայաստանի բանւորի շահերից: Հայաստանում նշանաբանը շարունակութիւնն է հայ մարտական նայիրոնալիզմի արկածախնդրական քաղաքականութեան և յղի է նոր դժբախտութիւններով հայ բանւորի և հայ գիւղացու համար:

«Մենք չենք կարող «բանալ ղռները», ինչպէս պահանջում են մեր հակաուսուրդները, որովհետեւ մենք պրոֆեսիոնալ քաղաքական արկածախնդիրներ չենք»...

Եւ յետոյ. «Ռորհրդ. Հայաստանի քաների և գիւղացու դասակարգային շահերին չի համապատասխանում «բացէ՛ք ղռները» նշանաբանը, «հայահաւաք

մոն» քաղաքականութիւնը: Հայաստանի կառավարութիւնը Խորհրդային Հայաստանի բանուորի և զիւզացու կառավարութիւնն է: Մինք երբեք «ամենայն հայոց» կառավարութեան յաւակնութիւններ մեր վրա չենք վերցրել և չենք կարող պիտոյնք:

Մարդիկ «պրոֆեսիոնալ» քաղաքական արկածախնդիրները չեն, ուրեմն, ինչպէ՞ս կարելի է պահանջել, որ գաղութները ազգային գոյութեան գործը համարեն իրենց սրտիկ մտիկ և Հայաստանի դոճները փակ չպահեն գաղութահայութեան առջև: «Հայերի հաւաքման քաղաքականութիւնը» «չի բխում Հայաստանի բանուորի շահերից» — գաղութահայերի գրածը, սակայն, «բրիտ» է մ... Մարդիկ «ամենայն հայոց կառավարութիւն» չեն, բայց գաղութահայերի «ազգային-բարեգործական ֆրոնտերի» հանդէպ «ամենայն հայոց կառավարութիւն» են...

Պատգ է, ուրեմն, գաղութահայութիւնը հայ բոլշևիկներին համար հարկաւոր է իրեն գրամի ազբիւր և որպէս թնդանօթի միս — ա՛յս է խորհրդային իշխանութեան վերադիրումը գէպի հայ գաղութները:

II

Մենք դիտմամբ այսքան շատ վկայութիւններ քաղեցինք հայ բոլշևիկներին գրածներէից ու խօսածներէից «գաղութային խնդիրներէ» մասին, որովհետեւ արտասահմանեան հայութեան որոշ խաւերում մինչև այսօր էլ դեռ այն համոզումը կայ, թէ Երևանի վարչչները ազգային կառավարութիւնն են Հայաստանի և դուրսը գտնուող հայկական գանդաձոնների համար: Մեանիկեանները, Յովհաննիսեաններն ու Եսայեանները ջախջախիչ հարած են ստալիս այդ համոզման: Պակարկ լրացրեց «Հայաստանի վարչպետ» Ս. Տէր-Գաբրիէլեանը, որ վերջերս խորհուրդներին համագումարի ամբիոնից յայտարարեց ի լուր աշխարհի, թէ ինքը ամբողջապէս հաստատում է Ա. Եսայեանի Փարիզում արած յայտարարութիւնները, թէ՛ «մենք երբեք ամենայն հայոց կառավարութեան յաւակնութիւններ մեր վրա չենք վերցրել և չենք կարող վերցնել»...

Մենք կարող էինք բուլշևիկներին գաղութներում ունեցած գործունէութիւնից էլ բացմաթիւ վկայութիւններ բերել՝ ցոյց տալու, որ խորհրդային իշխանութեան համար գաղութահայութիւնը միջոց է և ո՛չ նպատակ, բայց արտասահմանում ո՞ւմ յայտնի չէ այդ ամենը: Այսօր ո՞ւմ համար գաղտնիք են թ՛. Կամսարականների ու Գր. Վարդանանների բացմածախս առաքելութիւնների նպատակը, Ծաւվերդեանների ու Փիրուսեանների շահատակութիւնները Պրտում, Յուսեստատում ու Ֆրանսիայում, Հօկերի մտանձիղերի ու Կոմկուսի «հայկական հատաձոնների» մուժ գաւերը ամէն տեղ, «անկուսակցական» թերթերի և դանազան դաւանափոխների ու վարձկան մտաւորականների «անհասարակներ» ծառայութիւնը խորհրդային իշխանութեան: Խօսել այդ ամենի մասին նշանակում է ջուր ծեծել սանդի մէջ. ամենքը գիտեն, ամենքին յայտնի է, որ խորհրդային իշխանութեան և հայ գաղութներին միջև բացած է մի անանցանելի վիճ, որը ոչնչով կարելի չէ լեցնել: Հիմա արդէն միայն անյոյս միա-

միտները կարող են բուլշևիկներին քարիք սպասել գաղութահայութեան համար: Կա՛մ անսահման կեղծաւորներն ու շահախոնքներ, որոնք ամէն բանի մէջ իրենց հաշիւն են փնտրում. ինչո՞ւ չօգտուել և բուլշևիկներին: Չէ՞ որ — Ալիարսը՛ դժակ, մարզը՛ դանակ. կտրէ՛ ու կեր:

Գաղութահայութիւնը արդէն եկել է — կամ եթէ չի եկել, պիտի գայ այն եզրակացութեան, որ ինքը պէտք է սնորհին իր ճակատագիրը անկախ նրանից, թէ իր մասին ի՞նչ են մտածում Երևանում ըստմամ իշխանաւորները: Բուլշևիկները՛ իրենց համար, գաղութները՛ իրենց համար: Այս, ի հարկէ, չի նշանակում, թէ գաղութահայութիւնը Հայաստանից էլ ձեռք պիտի քաչէ. խորհրդային իշխանութիւնը մի բան է, Հայաստանը՛ ուրիշ բան:

Արդ՛ աւսպիտի պայմաններում ի՞նչ է դիքը գաղութահայութեան, ի՞նչ է մտածում նա իր գոյութիւնը սպաւորելու, իր վիճակը բարելաւելու, իր սպազան աւելի հաստատուն հիմքերի վրա դնելու, ազգային ինքնապաշտպանութեան համար:

Ի՞նչ է մտածում, ի՞նչ է խօսում, ի՞նչ է դրում: Եթէ ուշի ուշով հետևելու լինենք դաշնակցական, հնչակեան, ուսկիավոր և անկուսակցական թերթերի գրածներին ու հրատարակող արտայայտած մտքերին, կը նկատենք հետևեալ հիմնական տեսակէտները, որոնք բնդհանուր են ամենքի համար.

Ա. Ներկայ մեր գաղութները այն չեն, ինչ որ էին պատերազմից առաջ, երբ կողմում էին պանդխտութեան և մասնակի ջարդերի հետևանքով: Այժմեայ գաղութահայութիւնը ազգի մի խոշոր հատուածն է, համարեա մի քառորդը, որ զանգւածօրէն դուրս է եկել հայրենիքից և անհամբեր սպասում է վերադարձի հնարաւորութեան: Հետևաբար, այժմեայ մեր գաղութային քաղաքականութիւնն էլ պէտք է լինի սարերտառ զգալութիւնը միայն միջոց էին Մայր Երկրի համար, այժմ՛ նաև ինքնանպատակ:

Բ. Քաղաքական, տնտեսական և այլ պատճառներով գաղութահայութիւնը սպրում է օտարացման վտանդի տակ:

Գ. Օտարացման դէմ պայքարելու և ազգային հաւաքական գոյութիւնը սպաւորելու գլխաւոր միջոցներն են՝ 1) նիւթական ու բարոյական կենդանի հարողակցութիւնը Հայաստանի հետ, 2) գանազան երկրներում ապրող հայերի տեղափոխ և բնդհանուր կազմակերպութիւնը. 3) ազգային-մշակութային աշխատանքը. 4) հետապնդել, որ գաղութահայ գանգաւանքը լինեն քաղաքականապէս հասուն, տնտեսապէս՝ բարգաւաճ և ազգային տեսակէտով՝ առողջ:

Կարճ ասած՝ ազգային հաւաքման, ինքնամփոփման, գոյութեան կուրի, ինքնապաշտպանութեան տեսակէտն է այս:

Բացի բուլշևիկներին, այս տեսակէտի վերաբրմամբ ամենքն էլ համամիտ են: Ես այս տեսակէտը անանցիկ դաշնակցական, որովհետեւ Դաշնակցութիւնն է նրա ամենէն աւելի լիակատար արտայայտիչն ու եռանդուն պաշտպանը, բայց կարելի էր անանել և՛ ազգային:

Եթէ սկզբունքի մասին ամենքն էլ համաձայն են, ի՞նչ է արոււմ այդ սկզբունքի իրականացման համար:

Տեսակէտներէ միութիւնը գործունէութեան էլ միութիւն ստեղծում է:

Ո՛չ, չի ստեղծում:

Գաղութիւնների բայթարման ձգտողները՝ բոլշևիկները գործում են մէկ ճակատով: Գաղութիւնների միութիւնը պաշտպանողները պատակուած են ու Հակառակորդ մէկը միւսին, շէն Հաւատում իրար և փոս նե փորում միմեանց ոտքի տակ: Մինչդեռ բնական պիտի լինէր, որ ընդհանուր թշնամու մէկ ճակատի Հանդէպ ստեղծւէր և պաշտպանողների մէկ ճակատ: Թշնամին հարւածում է առանձին-առանձին, աշխատում է պատակաւել գաղութները, մէկ Հատուածի բուռնցքով ձեծել միւսին: «Աշխատաւորութիւն», «բանուոր» բառերը նրա բերանում դատարկ հնչիւններ են, որովհետև բոլշևիկները գաղութներում ո՛չ թէ աշխատաւորութեան միջոցով բուրժուազիայի դէմ են պայքարում, այլ յենւելով Հարուստ խաւերի վրա՝ պատակուած ու քայքայում են աշխատաւորական գանգաւանները:

Ինչո՞ւ չի ստեղծում գաղութաճայ ազգային Հոսանքների Համերաշխ միութիւնը: Իրական արգելք գոյութիւն ունի:

Մեր կարծիքով՝ ո՛չ, գոյութիւն չունի:

Համերաշխութիւնը անհնար Համարողները առաջ են բերում մի շարք պատճառներ: Ամենից առաջ՝ վերաբերումը դէպի խորհրդային իշխանութիւնը: Համերաշխութեան նախապայմանը, հասնելու, խորհրդային իշխանութեան ճանաչումն է. ընդունեցէք, որ խորհրդային կառավարութիւնը Հայաստանի ու հայ ժողովրդի օրինական, հարազատ կառավարութիւնն է և յետոյ խօսենք Համերաշխութեան մասին:

Հարցը այսպէս դնել նշանակում է, առհասարակ, դէմ լինել Համերաշխութեան: Որպէսզի մենք ընդունենք Երևանի գործիչներին հայոց օրինական կառավարութիւն, պէտք է նախ՝ Հայաստանի ժողովուրդն ընդունէ. երկրորդ՝ պէտք է, որ Երևանի վարիչները իրենք ընդունեն: Բայց մարդիկ չէ՞ որ առում են. «մենք ամենայն հայոց կառավարութիւն չենք», «մենք Հայաստանի դռները չենք բանայ գաղութաճայերի առջև»: Ինչպէ՞ս ընդունել ազգային, օրինական մի իշխանութիւն, որը ինքը իրեն չի Համարում այդպիսին:

Հասկանալի չէ, ինչո՞ւ անպատճառ խորհրդային իշխանութեան ճանաչումը անհրաժեշտ նախապայմանն է գաղութների ներքին Համերաշխութեան Համար: Կարելի է բոլշևիկների մասին տարբեր կարծիք ունենալ, իսկ գաղութների կազմակերպութեան և ազգային կեանքի վերաբերմամբ լինել Համամիտ ու գործակից: Ո՛չ մի կապ չկայ խորհրդային իշխանութեան և գաղութների, օրինակի Համար, թեմական, դպրոցական կամ այլ մշակութային խնդիրների միջև: Թիւրքիստանում օսմանեան կառավարութեան նկատմամբ տարբեր Հոսանքներ տարբեր վերաբերում ունէին — պահպանողականները չլու հանրայակառարութեանը ճանաչում էին սուլթանի իշխանութիւնը, յեղափոխականները կուռում էին նրա դէմ, բայց ազգային մշակոյթի ասպարէզում գործակցում էին իրար:

Ուրիշ պատճառ են առաջ քշում: Համերաշխութիւն, ասում են, չի լինի, քանի կայ Դաշնակցութեան

մեկնադրական ձգտումը: Ի՞նչ է նշանակում այս մեղադրանքը. բանեք փակագիծը: Ինչո՞ւն է Դաշնակցութեան «մեկնադրութեան» ձգտումը:

Ազգային խնդիրներում — Երկրում թէ գաղութներում — մենք, առհասարակ, դժուար ենք ժողովրդական ընտրութեան սկզբունքը: Օրինական ընտրութիւն. թո՛ղ քէն որոշ իշխանութեան ընդթը — ուսմակաւորութեան տարրական պահանջն է այս: Մենք կամենում ենք, որ գաղութաճայ ազգային կազմակերպութիւնը դրսի ուսմակաւորական հիմքերի վրա: Մեկնադրութիւն է այս: Այն ժամանակ ամենամեծապիւրական երկրները Անգլիան ու Ամերիկան են և ամենաուսմակաւորը՝ Ռոքհոլային Ռուսաստանն ու քեմալական Թիւրքիան...

Մեկնադրութեան մասին խօսողները լաւ է, որ լեզուի տակի քարը Հանեն և պարզ ասեն, թէ՛ ընտրական սկզբունքը, ուսմակաւորութիւնը Հանելի չէ իրենց համար, որովհետև այդ դէպքում ժողովուրդը իր քէն կը տայ Դաշնակցութեան, իսկ իրենք դէմ են Դաշնակցութեան «մեկնադրութեան»: Մարդիկ պերպաւստում են հրատարակել իրենց հաւատոյ Հանդանակ կազմող սկզբունքներից, թողնել, որ գաղութները փշանան անիշխանութեան երեսից, միայն թէ... Դաշնակցութեան «մեկնադրութիւնը» չլինի: Ի՞նչ տարբերութիւն այս և բոլշևիկեան մտայնութեան միջև:

Մեզ գրաւեցնողը կուսակցական Հաշիւը չէ: Աւելին. եթէ ընդհանուրը Հրատարակում է ստորադասել մեր կուսակցական Հաճը, մենք դրան միտ պատրաստ ենք: Գաղութաճայութեան ազգային կազմակերպութիւնը և ազգային Հոսանքները Համերաշխութիւնը ներկայ պայմաններում մենք համարում են այնպիսի օգտակար գործ, որ պատրաստ ենք «մեկնադրութիւնից» էլ հրատարակել: Այս մասին մեր վերջին Ընդհ. ժողովը ասում է.

«Գալով ազգային-կրթական խնդիրներում՝ Ընդհանուր ժողովը կը հրահանգէ իր բոլոր մարմիններուն պահպանել եղած ազգային կազմակերպութիւնը, ստեղծել նոր ազգային կազմակերպութիւն այն վայրերում մէջ, ուր չկան: Միաժամանակ կը հրահանգէ բոլոր ընկերներուն մասնակցել և աշակցիլ այն բոլոր մշակութային ձեռնարկներուն, որոնց նպատակն է հայը հայ պահել գաղութներում մէջ: Այս ասպարէզին վրա մեր հիմնական ձգտուելը պէտք է լինի ոչ այնքան անձնաբար ազգային գիտակցութիւնը և հանրային պարտականութեան գազանը՝ ապահովելով լուսագոյն տարբեր մասնակցութիւնը ազգակաւարութեան գործին մէջ»:

Ուշադրութիւն դարձրէք, յատկապէս, ընդգծւած տողերի վրա:

Պարզ, որոշ ու վճռական խօսք է այս, որին կը յաջորդէ և նոյնքան պարզ ու վճռական գործը, եթէ գաղութաճայութեան գիտակցող ու կեդրանի խաւերը, իրօք, անհրաժեշտ կը Համարեն գաղութների կազմակերպութիւնն ու Համերաշխութիւնը:

Ասողներ կան, թէ ներկայ կուսակցութիւնները անկարող են գաղութների կազմակերպութիւնը գլուխ բերելու. դրա համար պէտք է ստեղծեն նոր ուժեր:

Պէտք է առաջ դան չէզոք տարրերը և իրենց ձեռքն առնեն գործը: Տխմար սոփեստութիւն: Լաւ է թէ վատ, հայ ժողովրդի ազգային կազմակերպւած կամքը ներկայացնում են կուսակցութիւնները, և, քանի նորերը չկան, այս կուսակցութիւնները նստեն ու սպասեն, թէ նոր կուսակցութիւններ կը ստեղծեն, առնալով թե՛ թե՛ կամ տուր թիւն է: Մտածել, թէ չէզոք, անկամ և անձեզ դանդաղը ի վիճակի կը լինի գաղութները կազմակերպութեան խոտը ու կամք լարում պահանջող գործը իր վրա առնել, նշանակում է բոլորովին սխալ հասկացողութիւն ունենալ թէ գաղութների և թէ չէզոք տարրերի մասին: Չէզոք տարրը, ի հարկէ, մեծ ոյժ է, բայց միայն կազմակերպւած կուսակցութիւնները դեկալարութեան տակ առանձին — փոշի է:

Արուս է և ուրիշ առարկութիւններ, բայց երբ լրջորէն մօտենում ես նրանց, ո՛չ մի քննադատութեան

չեն դիմանում: Գաղութների կազմակերպութեան և համերաշխութեան իրական արգելքներ չկան: Արգելքները՝ ոմանց համար հոգեբանական են՝ երէկուս քեներն ու սրտցուցութիւնները զժառանգում են մարդկանց մերձեցումն ու իրերահասկացողութիւնը: Ոմանց համար էլ անիշխանութիւնն ու քսուր ուղղակի շահաւէտ է՝ պղտոր ջրում ձուկ որսալու համար: Ձեն ուզում, որ գաղութները կազմակերպւեն իրենց ապօրէն դիրքերից ու շահերից չզրկելու համար:

Այնուամենայնիւ, կամենան նրանք թէ ոչ, գաղութների ներքին և ընդհանուր կազմակերպութեան պահանջը հատուցացած խնդիր է: Դանդաղել, ինչ որ սին առարկութիւններով խոչընդոտներ յարուցանել նրա առջև՝ նշանակում է վատ գործ կատարել հայ ժողովրդի համար:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

## Երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութիւնը

Երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութեան խնդիրը հրատապ հարցերէն մէկն է, որ միշտ ալ մեր կուսակցութեան մտահոգութեան առարկայ եղած է, իսկ այս վերջին երկու Ընդհանուր ժողովներու ընթացքին, աւելի քան զբարեցուցած է միտքերը:

Ինչէ՞ն կառավարող այս մտահոգութիւնը, և մեր կուսակցական մարմինները ի՞նչպէս պիտի դիմաւորեն խնդրել՝ մօտաւոր լուծում մը տալու անոր:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան վերացումէն յետոյ, գէպքերու դահալէժ դասաւորումով, հայութիւնը անբնականօրէն վիճակի մը մասնեցցաւ: Եթէ է այդ անբնականօրէն վիճակը տնտեսական, քաղաքական և Ֆիզիքական մարզերուն մէջ անմիջականօրէն ակընբայի էր և առօրեայ ուշադրութեան առարկայ, անդին՝ կրթական-դաստիարակչական գործը կը դառնար Երկրորդական, երբեմն մոռացութեան տրւած, ու շատ յաճախ (տեւալ միջնակարգ բերումով) անկարելի:

Հայութիւնը գրկելով իր մշակութային կեդրոններէն, կը գրկէր նաև կանոնաւոր և հայի կրթութիւն ստացած նոր սերունդէն: Թափառական ժողովրդի թափառական նոր սերունդը կապաստանէր գանալան որբանոցներու մէջ, ուրիշ տեղ մը հագրւ տեղական նախակրթարան մը կուսարտէր, այլ տեղ կիսաապրատ միջնակարգի մը երեսը կը տեսնէր, իսկ բազմաթիւ ուրիշներ, օտար հաստատութիւններու մէջ կերպով մը իրենց պատանակութիւնը կանցնէին: Այսպէս էր անցնող տասը տարին, այդպէս է և՛ այսօր:

Հայ միջնակարգ վարժարաններու շարքութիւնը պատճառ կը դառնայ, որ մեր նոր սերունդը կիսակիրթ մնայ: Տնտեսական ծանր պայմանները թոյլատու չեն,

որ ան կարողանայ հետևել օտար զօլէճներու և լիսէներու: Իսկ քաղաքական անորոշ կաղութիւնը, ազգային պետութեան բացակայութիւնը և տնտեսական անկայուն վիճակը իրար լրացնելով՝ պատճառ դարձած են, որ հայութիւնը գրկել ուսանողական սերունդէ: Այսօր այլևս զոյութիւն չունին Զւեյցերիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի և այլ կեդրոններու մէջ հայ ուսանողներու տաւար խմբեր, ինչ որ անցնող տասնամակէն առաջ այնքան աչքի կը գարնէր:

Այս բոլորը ցոյց կուտայ թէ մենք կրթական անկաման չըլնան մըն է, որ կը բոլորինք: Այդ ինքնին ծանրակշիռ հարց մըն է, որով պիտի դրօշակ թէ ազգային հաստատութիւնները և թէ Հ. Յ. Դաշնակցութեան համապատասխան մարմինները: Բնական է, ընդհանուր դաստիարակութեան խնդրի կանոնաւորման ու բարձրացումին հետ՝ կը հեշտանայ նաև երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութեան խնդիրն ալ:

Բայց, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր շարքերուն մէջ մտնող կամ կուսակցութեան քաղաքական և յեղափոխական իրէպններուն համակողջ պատանդներու և երիտասարդներու յեղափոխական դաստիարակութեան խնդիրը չի կրնար թողնել յետագային և չի կրնար սպասել, որ հայկական դպրոցները կանոնաւորին, միջնակարգերու ցանց մը հիմնել, ուսանողներ խոնարհ եւրոպական կեդրոններու մէջ, և ապա ձեռնարկէ այդ սերունդէն պատրաստել այն զաղափարական ու յեղափոխական սերունդը, որ աստիճանաբար պիտի երիտասարդացնէ մեր կազմակերպութիւնը և փորձի ու գործնական աշխատանքի բովէն անցած՝ ղեկավարող լիըր դառնայ մեր կուսակցութեան: Մենք ստիպւած ենք մօտենալ նոր սերունդին այնպէս, ինչպէս որ ան

գոյութիւն ունի: Բնականոն պայմաններու մէջ մեր աշխատանքը աւելի զիւրիկն և աւելի արդիւնատու կր-լար: Բայց չպէտք է անտեսել այն պարագան, որ ներկայ անցողական շրջանի մէջ մեզմէ իր պահանջէ աւելի լարած ու աւելի բազմակողմանի աշխատանք, միևնոյն ժամանակ մեզի կրնձեռն մեծազանգուած ատաղճ մը, մտայնութեամբ՝ աւելի բորբոքած, ու իր կիանքով՝ աւելի ատկ յեղափոխական հակումներու:

Ն.Յ. Դաշնակցութիւնը իր գաղափարաբանութեամբ և գործօն քաղաքական շարժումներով ինքնին քաղաքական-յեղափոխական գոյրոց մըն է: Վերակազմութեան ու վերազնահատութեան այս վերջին 7-8 տարիներու ընթացքին, Դաշնակցութիւնը կրցած է իր ընձեռնով, մամուլով և գնառական հրատարակութիւններով հոծ գանգաւորներ գաստիարակել ազգային-քաղաքական և հասարակական-յեղափոխական իդէալներով և ստեղծել ընդհանուր մտածողութիւն մը հայրութեան կենսական ձգտումներու շուրջ: Սակայն, այս գնահատելի կազմակերպական ընդհանուր աշխատանքին համընթաց, պէտք եղած եռանդը չէ թափած երիտասարդ սերունդի կուսակցական գաստիարակութեան վրա: Այդ սերունդի մէջ մասը միայն մտած է ընդհանուր գանգաւորներ մէջ և ասած է միայն այնքան, որքան ստացած են հոծ գանգաւորները: Մինչդեռ այդ գանգաւորներն խոշոր տոկոս մը իր ոգևորութիւնը կտանէ նախորդ շրջանին, իր նկարագիրը կազմած է հին և պայքարող սերունդի մը շունչին տակ, ու այսօր քաղաքական կենսութիւն կը մտնեն աւելի ամրացած իդէալներով և տոկոսներով: Նորահաս սերունդը կրնայ տարիւլ ընդհանուր ոգևորութեան, կարող է ձուլել ընդհանուր մտայնութեան մէջ, բայց կարելի չէ բռնի, թէ ան պատրաստուած է նորոգ կենսի զեկալարը դառնալու: Հասարակական կենսի զեկալարը սերունդի մը կողմէն բարձրանալ, հասունանալ ու որ մըն այ այդ յոգնած սերունդին տեղը գրաւել կարողանալու համար, անհրաժեշտ է պատրաստել մտաւորապէս և հոգեպէս և նկարագրով: Իսկ այդ պատրաստութիւնը պէտք է սկսել պատանի և երիտասարդ տարիքէն, որովհետեւ քաղաքական և յեղափոխական մարդու կազմաւորման արմատները պատանի անհատի հոգու ծախքերէն մէջ ամփոփած են, յեղափոխական նկարագրի հիմքերը այդ տարիքին կը նետուին:

Հսկայ վերելքային մտնելու և շտեմնած պայքարներու շրջան մը բոլորելէն յետոյ, մեր կորուստներու շարանը մեծ է: Պայքարի բովէն անցած սերունդ մը երկրի մէջ և երկրէն դուրս այսօր լծւած է հայոց ազատագրական յեղափոխական գործին և կապի տակաւին պատերազմական հեռի և կենսի մը: Այս շարժումն ու հեղու կենսի ընթացքին Դաշնակցութեան մարմինները լուրջ ուշադրութեան պէտք է դարձնեն երիտասարդ սերունդի յեղափոխական գաստիարակութեան վրա, սրտեմտաբէ ու յարասե աշխատանքով մը պատրաստելու այն սերունդը, որ մեր վաղուայ կենսը վարելու կողմէն է: Մեր մարմինները պէտք է գիտակցեն, որ իրենց հարեալուր և հազարաւոր ընկերները կազմ ու պատրաստ պահելու, կազմակերպական մէքենան լարած ասնելու և մամուլն ու գրականութիւնը լայնօրէն տարածելու աշխատանքներուն չափ կարևոր աշխա-

տանք մըն է տասնեակ մը պատանիներ ու երիտասարդներ բով քով բերել, անոնց հոգիի մէջ բունկցնել յեղափոխական կրակը ու գահողութեան, յանդուրան և տոկոսներովեան նկարագրի մը անսնց նկարագրի:

Աշխարհի չորս կողմը ցրած Դաշնակցական մարմինները հազարաւոր պատանիներու հետ զործ պիտի ունենան, բայց այդ հազարներէն հազիւ տասնեակներ միայն գուրս պիտի գան քաղաքական մարդիկ, որոնք յեղափոխական փշուռ ճանապարհի վրա պատրաստ պիտի ըլլան իրենց կենսը գահելու յանուն հայ ժողովրդի ազատութեան և վերածնութեան ու պիտի դառնան զեկալարները կուսակցութեան մը, որ իր այսօրայն՝ բառատուն տարւայ, և վաղուայ՝ յետուն տարւայ հարուստ յեղափոխական անցնալը անսնց ժառանգութիւն պիտի թողնէ: Հինց այդ քիչ թուով երիտասարդներն են, որ մկի պէտք են: Անոնք իրենց անկուռ հաստքով, գերազանց գոհողութեան գիտակցութեան, յեղափոխական մտաւոր և գործնական պատրաստութեամբ պիտի դառնան այն մղիչ ուժերը, որոնց պիտի հետեւեն հազարաւորներ դէպի մեր նպատակներու իրականացումը:

Առանց այս հոգատար աշխատանքի, 5-10 տարի յետոյ, մենք պիտի ունենանք թուով շատ, բայց որակով միջակ զեկալար նոր սերունդ մը, տարբեր կրթութեամբ, տարբեր նկարագրով և, մանաւանդ, տարբեր դաշնակցական հոգեբանութեամբ մը, որ անմիջական և հարագատ շարժանկութիւնը չպիտի ըլլայ անցնող բառատուն տարւայ իրարայնորդ այնքան կազմաբարակ սերունդներուն: Անշուշտ, ժամանակներն ու փոփոխող պայմանները շատ բան կրնան ուժեղացնել նոր սերունդին խղիիր յար ծանօթութեան և քաղմաթիւ միջակայքներու յարմարելու անհրաժեշտութեան մասին չէ, այլ Դաշնակցութեան հուժեղութեան իւրացման: Դաշնակցութեան հուժեղութիւնը (իւր բոլոր առաջինի կողմերով) պէտք է իւրացնի հարագատներն: Վաղուայ զեկալարութեան կոչումն ունեցող երիտասարդը հարիւրին հարիւր դաշնակցական պէտք է ըլլայ: Ան զինուած պէտք է ըլլայ մտքով (պիտի ուսումնասիրէ Դաշնակցութեան պատմութիւնը, ծրագիրը, կանոնադիրը և, առհասարակ, յեղափոխական-հասարակագիտական գրականութիւնը): Ան պիտի մարմնաւորէ յեղափոխական այն նկարագիրը, որ յատուած է Դաշնակցութեան (կասարեայ մաքրութիւն և շիտակութիւն հասարակական կենսի մէջ, անձնագոհութիւն միջև մահ, մոլորանդ հաւաք դէպի մեր իդէալները և հրաժարում անձնական բարեկեցութեան): Ան պիտի ըլլայ միշտ պատրաստ զինուոր մը Դաշնակցութեան համար, ամէն տեղ ու ամէն պայմաններու մէջ գործելու: Այս էական գիծերու վրա կաւենայ ընդհանուր զարգացումը, գործօն կենսի աստիճանական փորձառութիւնը, յարասե պայքարի ջանքն, ու կը կազմաւորէ յեղափոխական մարդը, դաշնակցական անձնագոհ (Ֆէտայի՝ լայն առումով) տիպը:

Ահա, այս քիչերը պատրաստելու աշխատանքն է, որ Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը իր մէկ որոշումով կը յանձնարարէ մեր մարմիններուն: Մեր մարմինները, գործիչները, մամուլի զեկալարները և, առհասարակ, դաշնակցական զեկալար մտաւորակա-



նութիւնը իրենց անյետաձգելի պարտականութիւնը պիտի համարեն մօտենայու նոր սերունդին, բոլոր ան աշակերտ թէ ուսանող, որք թէ բարեկեցիկ ընտանիքի գաւակ, բանուր թէ գիւղացի, դանապան միութիւններու անդամ, թէ ինքնազուխ ու աշխարհէ կտրւած, ու սովէն ջանք պիտի թափեն մտաւորապէս և հոգեպէս դաստիարակելու այդ երիտասարդութիւնը: Գժւարութիւնները շատ են, բայց վստահօրէն կարելի է ըսել, որ վստահած աշխատանքը հարելին հինգ համեմատութեամբ արդիւնք պիտի տայ. իսկ այդ՝ ինքնին յաճողութիւն է: Մնացած 95 առ հարիւրը պիտի մնայ խանդավառ տարր մը, տարւած մեր մտայնութիւնէն, ու պիտի դայ զօրացնել մեր շարքերը, դանդաձային պայքարը շարունակելու համար:

Այսօր մինը գործ իրենցնանք հաղարւար պատանիներու և երիտասարդներու հետ: Եկարգիտական դաստիարակութեան աշխատանքը կը տարածի բոլորի վրա: Տարիներ յետոյ միայն կարելի է տեսնել թէ անոնցմէ որո՞նք են կրօնեցիակները: Նախորդ վերաբերումը մը չփայտող է. պէտք է թողնել, որ նորահասակները իրենց կրօնը գտնեն կեանքի բովին մէջ:

Ներկայ երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութեան գործին յժւած ժամանակ պէտք է նկատի առնել կարգ մը դիրքութիւններ, ինչպէս նաև դժարութիւնները:

Նպաստուր պարագաները հետևեալներն են. նախ՝ հայութիւնը աթմ աւելի քաղաքական հետաքրքրութիւն և հասունութիւն ունի, քան ունէր անցեալի մէջ. երկրորդ, Հ. Յ. Գաշնակցութեան և հայութեան քաղաքական իրէջանքը այսօր աւելի յստակ, աւելի յառնախազման ու աւելի ընդհանրացած են, քան էին անցեալի մէջ. երրորդ, պատմութիւնը իր ամբողջ անցքերով աւելի համոզիչ դարձուցած է հայ քաղաքական մտածողութիւնն ու աւելի պայծառօրէն կը գծէ մեր ժողովրդի վարակ ուղին, քան անցեալի մշուշապատ իրականութիւնը. չորրորդ, որ ներկայ սերունդը իր բնականոն կեանքն դուրս ձգելով՝ աւելի հանրային տարր մըն է, աւելի զգայուն ու աւելի անհանդիսաքան էր նախորդ շրջաններուն: Այս բոլորը զոյց կուտայ, որ գործելու պարտաւոր մթնոլորտ մը գոյութիւն ունի, հոգեբանօրէն հասած՝ իւրացնելու յեղափոխական իրէջանքը իր կուտակած եռանդը գործադրելու համար:

Միև կողմէ կան դժարութիւններ, որ պէտք է նախատեսել. նախ՝ գարգացման պակասը, որով բացի յեղափոխական դաստիարակութենէ, ուշադրութիւն պէտք է դարձել ընդհանուր գարգացման վրա. երկրորդ, միջավայրի տարբերութիւնը, օրինակ, այսօր ամերիկահայութիւնը ունի նոր սերունդ մը, որ ընդհանուր գարգացում ունի, բայց միայն անգլիերէն գիտէ և անծանօթ է մեր ազգային կեանքին. միւս գաղութներն ալ առաւել կամ պակաս իրենց միջավայրի ապրումներն ունին. ուստի ստիպւած ենք տեղական պայմաններու համեմատ շարժել: Այս կէտի տակ, վիակացիք մէջ, Ամերիկայի վերաբերմամբ կուզեմ ընդգծել պարտականութիւն մը, որ ուշ կամ կանուխ մեր կազմակերպութիւնը պիտի պարտաւորուի կատարել, այդ այն է, որ մենք ստիպւած ենք անգլիերէն

լեզուով դաշնակցական գրականութիւն մը ստեղծել ամերիկահայ հոծ երիտասարդութեան համար: Անոր պիտի մատակարարենք անգլիերէն լեզուով հայոց պատմութիւնը, Գաշնակցութեան պատմութիւնը, յեղափոխական դէմքերու և գործերու նւերուած գրքերինը, մեր ծրարքի և կանոնագրի բացատրականները, հայոց ազգային գաղտի բոլոր փուլերը, ծանօթութիւններ մեր և մեր զբացիներու վերաբերմամբ և այլն: Ամերիկայի հայ նոր սերունդի յեղափոխական կնքումի գործին պէտք է յծին անգլիերէնի տիրապետող և լաւ յեղափոխական անհատներ: Վերջ պէտք է տայ այն մտայնութեան, որ սկսած է ընդհանրանայ, թէ նոր սերունդը կրճածանայ. նախ՝ մենք կատարենք մեր պարտականութիւնը, յետոյ քննադատներ ուժացողները: Վստահօրէն կարելի է ըսել, որ այդ ուժանայու ճամբու վրա գտնող հոծ բանակին բաւական մեծ թւով վաշտեր մեր կողմը պիտի անցնեն և գտնան մեր գրօշակակիրները:

Բացի միջավայրի և կրթութեան տարբերութիւններէն, ներկայ երիտասարդ սերունդը նկարագրի տարբեր պատկեր մը ունի, որ չհետևած կերպով կը զատորոշուի նախորդ սերունդներէն: Նախորդ սերունդներու յատկանշական կողմը զազգափարական տարածութիւնն էր, յեղափոխական հաւատքի և սրբութեան գերազանց ըմբռնումը: Իդէալական երազներով տարւած այդ սերունդները, սակայն, գործնական կեանքի անվարժ էին, կեանքի տարն ու պար տեսած չէին և քիչ էին դիմացիուն: Մինչդեռ Հիմա, 15—20 տարեկան հայ պատանիներն ու երիտասարդները կեանքի բազմաթիւ փորձանքներէ անցնելով՝ գերազանցապէս աղււտ են մարդկային անարդարութեան չարիքներէն, կեանքի ինքնապաշտպանութեան բնազդէն տարած՝ ճկուն են, պայքարի և կուի կարող են դիմանայ և վտանգը կարհամարհեն: Սակայն, այս դժմացիուն նկարագրին հետ՝ իւրացուցած են չարք բացասական կողմեր, օրինակ, խոր հաւատք անոնց մէջ տարած է, կեանքի դառն փորձը գրեթէ բոլոր սրբութիւններն անոնց սրտերէն սրբեր տարեր է: Այս պարագաները նկատի առնելով՝ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել այս վերջին յատկութիւններու վրա: Պատանիներու և երիտասարդներու հոգու մէջ պէտք է վերականգնել յեղափոխական-հասարակական իրէջանքու սրբութեան ըմբռնումը: Նոր սերունդը որքան սրբութեամբ կը պահպանէ իր մօր յիշատակը, նոյնքան և աւելի սրբութիւն մը պիտի նկատէ այն հասարակական իրէջանք, որուն նւերուած է իր ամբողջ կեանքով: Ասկէ գատ, աննշան և անատքի ներշնչումը պէտք է ունենայ, որ իր ապրած անցեալի բերումով՝ անհաւատ ըլլալու բոլոր տեսանքն ունի:

Ինչպէս կը տեսնենք, հին սերունդներուն կը պակասէր գործնական դաստիարակութիւն, փորձառութիւն և տոկունութիւն, մինչդեռ ներկայ սերունդը այս յատկութիւններն ունի դեռ պատանի հասակէն, ու անոր կը պակասի բարոյական խոր ըմբռնումներ, որոնց վրա պիտի կեդրոնացնենք մեր եռանդը:

Մեր այս աշխատանքներու ընթացքին երիտասարդ սերունդի հանդէպ խստապահանջ ըլլալու շնք. անոնք, առայթմ անպտուղ այն նորարար ծառերն են, որոնք վստահօրէն կարող ենք ըսել, վարչայ պտղատու ծառերը պիտի դառնան:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

# ԱՆԴՐԿՈՎՎԱՄԻ ԺՐՋԱՆԱՑՈՒՄԸ

Թիֆլիսում հերթի է դրած Անդրկովկասի շրջանացման հարցը, այսինքն՝ Անդրկովկասը վարչական նոր վերարթածանման ենթարկելու ծրագրերը: Խորհրդային Միութեան միւս երկրներում այդ աշխատանքը համարում է աւարտած. Ուկրայինա, Բելոռուսիա, Թուրքմենիստան, Տաճիկիստան ամբողջապէս և Խորհրդային Ռուսաստանը մեծ մասով արդէն ունեն վարչական նոր կազմ. հերթը հասել է Անդրկովկասին: Անդրկովկասեան խորհուրդների հինգերորդ համալումարը, մայիս 10-ին, Անդրիկ. Ժողովոխորհի կողմից Մոխարաձէի գեկուցումը լսելուց յետոյ, հաստատեց շրջանացման ծրագրերը և յանձնեց նորընտիր կառավարութեան ի գործադրութիւն: Այսպիսով, Անդրկովկասի վարչական նոր բաժանման հարցը դառնում է օրւսյ հարց:

Պէտք է ստել, որ Անդրկովկասը վարչական նոր սահմանագծումների ենթարկելու միտքը առողջ միտք է: Ցարական իշխանութեան դժած սահմանները, որոնք յեղափոխութիւնից յետոյ ջնջեցին, բնաւ չէին համապատասխանում Անդրկովկասի ազգային ու տնտեսական պահանջներին. ուստի ինքնակալութիւնը ստեղծել էր արհեստական վարչական միաւորներ միայն իր տիրապետութիւնն ապահովելու համար: Ցարական վարչական կազմից ամենէն աւելի անիրաււած էր հայ Ժողովուրդը, որ մինչև վերջ էլ չհաշուեց կացութեան հետ և անդադար պահանջում էր վարչական սահմանների վերագծում\*):

Վերջնական սահմանագծում տեղի չունեցաւ և անկախութիւնները շրջանում: Մի կողմից մնացին վեճելի միջանդակական սահմանները՝ Հայաստանի ու Վրաստանի, Հայաստանի ու Ազրբէջանի և Ազրբէջանի ու Վրաստանի միջև, միւս կողմից, մնացին ձև չտուած ներքին վարչական միաւորները: Հայաստանում, օրինակ, վարչական վերարթածանումը սկսեց միայն 1920թ. ամառը և մնաց անկատար յետազայ դէպքերի հետևանքով: Ըստ ընդունւած սկզբունքի, Հայաստանի Հանրապետութիւնը, բաժանւում էր նասանպներին — Արարատեան, Միւնեաց, Երիւզի և Վանադի նահանգներ, որոնք իրենց հերթին բաղկանում էին գաւառներից, գաւառաձառներից և զիւլներից: Նահանգների և գաւառների սահմանները վերջնականապէս չէին ձևակերպուած և, ընդհանուր առմամբ, անցնում էին հին վարչական գծերով, բայց արդէն սկսած էր

սահմանագծման աշխատանքը՝ հիմք ունենալով ազգադրական, տնտեսական և աշխարհադրական-ազգայնական նկատումները: Բնականաբար, այն ժամանակ, երբ Հայաստանը ներկայացնում էր բաւական ընդարձակ տարածութիւն, նման բաժանումը արդիւնք էր իրական պայմանների. նահանգային խոշոր միաւորների հաստատումը արդարացում էր և այն յոյսերով, որ շուտով պիտի կցէին և Թիւրքահայկական հողերը, որով Հայաստանը կարող էր բաղկանալ առնւազն 8-11) ընդարձակ վարչական միաւորներից:

Իրւեկները, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, կանգնեցին տրամագծօրէն հակառակ տեսակետի վրա. նրանք որդեգրեցին մանր վարչական միաւորների ձևը և Հայաստանը բաժանեցին գաւառների. վերջին շրջանում կար 9 գաւառ: Այս սկզբունքը որդեգրած էր ոչ այնքան պետական ու տնտեսական շահերի պատճառով, որքան ոստիկանական հաշիւներով:

Վարչական նոյն սկզբունքը կիրառեց և Ազրբէջանում ու Վրաստանում, ուր նոյնպէս նահանգները վերացեցին և մնաց գաւառային բաժանումը: Եւ այս օր, նոր սահմանագծման նախօրեակին, վարչական բաժանումների տեսակետից, Անդրկովկասը ներկայացնում է հետևեալ պատկերը.

Անդրկովկասը բաժանւում է երեք հանրապետութիւնների — Հայաստան, Ազրբէջան և Վրաստան, որոնք իրենց հերթին բաղկացած են — Հայաստանը՝ 9 գաւառից, Ազրբէջանը՝ 9 գաւառից և Լեւոնայի Վարարդի ինքնավար շրջանից ու Նախիջևանի հանրապետութիւնից, Վրաստանը՝ 13 գաւառից և Աբխազիայի ու Ալարիստանի հանրապետութիւններից և Հարաւային Օսետիայի ինքնավար շրջանից:

Վարչական այս միաւորները տարբեր երկրներում ունեն տարբեր մեծութիւններ: Այսպէս, Ազրբէջանի գաւառներն ու ինքնավար շրջանները կազմած են 10է դայրայից և բոլոր դայրաները 1,102 գիւղխորհուրդներից. գաւառի միջին տարածութիւնը հաւասար է 5,700 քառ. կիլոմետրի 154,3 հազար բնակչով, իսկ դայրայինը՝ 826 քառ. կիլ. 15,700 բնակչով, մինչդեռ Հայաստանի բոլոր գաւառներն ունեն 37 գաւառաձառ և բոլոր գաւառաձառները՝ 827 գիւղխորհուրդ. գաւառի միջին տարածութիւնը 3,300 քառ. կիլոմետր է 97,600 բնակչով, իսկ գաւառաձառինը՝ 808 քառ. կիլ. 19,700 բնակչով: Այլ են համապատասխան վարչական միաւորները Վրաստանում. բուն Վրաստանի, Ալարիստանի և Հարաւային Օսետիայի վարչական միութիւնները ունեն միայն մէկ ստորարթածնում՝ Թեմի, որ միջին տեղն է բռնում գաւառաձառի ու գիւղխորհուրդի միջև, իսկ Աբխազիան բաժանւում է գաւառների և գաւառա-

\*) Այս հարցի մասին սպառիչ նիւթ է տրւած հանգուցեալ ընկ. Ա. Եախիթաբուեանի ուսումնասիրութեան մէջ. —

A. Шахатуния «Административный передель Закавказского Края» Тифлисъ, 1918 г. «Библиотека Арачъ».

մասերի: Վրաստանում կայ 423 թեմի և 121 գելեղխորհուրդ: դաւառների միջին մեծութիւնն է 4,300 քառ. կիլ. 170,000 բնակչով, թեմին՝ 147 քառ. կիլ. 4,9 հազար բնակչով:

Վարչական սահմանների այս անհասարութիւնն ու խալաթաբեկութիւնը, ի հարկէ, չէին կարող աննպաստ կերպով չանդրադառնալ ժողովրդական տնտեսութեան, տեղական բուրձի և իշխանութեան կազմակերպութեան վրա. մի կողմից բուրձիտային բազմատեսակութիւնն ու հակակռօի դժարութիւնները, միւս կողմից՝ վարչական մեքենայի բարդութիւնն ու բազմածախսութիւն: Բացի այդ, անտեսական տարբեր շերտերի միացում միեւնոյն վարչական միաւորի մէջ: Ուստի և զարմանալի չէ, որ վարչական նոր սահմարածանումների պահանջը դարձել է դործօն ուշադրութեան առարկայ:

Խորհուրդների Ծրէ համագումարի հաստատած ծրագրով Անդրկովկասը ունենալու է հետևեալ վարչական կազմութիւնը:

Միջնահարպետական սահմանները թողնում են անփոփոխ: Ձևաբ չի տրուում և Աբխազիայի, Աջարիստանի, Հար. Օսետիայի ու Նախիջևանի իրաւական վիճակին. փոխուում է Լեռնային Ղարաբաղի և Ախալքալաբի գրութիւնը:

Հայաստանը բաղկանալու է հինգ շրջաններից կամ մարզերից — Երևան, Լեռնական, Նոր-Բայազէտ, Լոռի-Փամբակ և Ջանգեզուր: Այս շրջանների միջին մեծութիւնը լինելու է 5,993 քառ. կիլոմետր, 176,000 բնակչով: Մարզերը բաժանելու են 36 գաւառամասերի և գաւառամասերը 824 գելեղխորհուրդների:

Այրբէջանը ունենալու է 10 շրջան — Բագու, Գեանջա (Գանձակ), Շիրվան, Ղուբա, Լեւորան, Ջաղաթախ-Նուխի, Ղարաբաղ և Նախիջևանի հանրապետութիւնը: Ղարաբաղի շրջանի մէջ, ինքնավար հիմունքներով, մտնելու է Լեռնային Ղարաբաղը, «յօժար կամբով»: Այրբէջանի շրջանների միջին մեծութիւնը լինելու է 9,600 քառ. կիլ., 264,000 բնակչով: Շրջանները բաժանելու են մօտ 60 դայրայի, իսկ վերջիններս՝ 1,102 գելեղխորհուրդի:

Վրաստանը իր սահմաններում պահելու է Աբխազիայի և Աջարիստանի հանրապետութիւններն ու ինքնավար Հար. Օսետիան: Միւս մասերը բաժանելու են 6 շրջան — Թիֆլիս, Կախետաի, Գորքի, Ախալցխա, Գուրմայիս, Փոթի: Ախալքալաբի գաւառը վերացելու է և սրբի միացել Ախալցխային՝ կենտրոն ունենալով Ախալցխա քաղաքը: Վրաստանի շրջանների միջին տարածութիւնը լինելու է 9,083 քառ. կիլ. 449,200 բնակչներով: Այս վեց շրջանները բաժանելու են 51 օսայի և 555 գելեղխորհուրդի\*):

Նման վերակազմութիւնը, ասում է «Ջարեա Վաստոկան», քոչ միայն վարչական-կառավարական ծախսերը կը կրճատուի ու տեղական բիւրջին կառուցացնէ: Բարեփոխութեան նպատակները աւելի խորն են: Դրում է ներքին հանրապետական վարչական բաժանումները իարիդ. Անդրկովկասի արագ զարգացող տնտեսութեան և աշխատանքի գանգաւորների ընկերա-

յին-մշակութային կեանքի հետ հաշտեցնելու խնդիրը: Խօսքը Անդրկովկասեան հանրապետութիւնների այնպիսի բաժանման մասին է, որը ոչ միայն կառավարելու յարմարութիւններ տար, այլ և նպաստէր հանրապետութիւնների ընկերվարական շինարարութեան, զարկ տար արտադրական ուժերի առաւելագոյն զարգացման և կառավարութեան ձևերն ու բնոյքը զուգորդէր տնտեսութեան կազմակերպութեան ու ընդարձակման հետաճանքների հետ):

Վարչական նոր բաժանման այսպիսի բարձր յատկութիւններ է վերագրում և Մախարաձէն: Շրջանացման նպատակն է, ասում է նա, «կանոնաւոր կերպով կազմակերպել ժողովրդական տնտեսութիւնը, կեանքի կաշի թոյր տնտեսական ուժերն ու հնարաւորութիւնները և Բրանց մէջ հաստատել ուղիղ փոխարարբերութիւն»:

Մախարաձէն իր զեկուցման մէջ ներկայացնում է նոր շրջանացման հիմունքներն ու ակնկալուող արդիւնքները և, ի միջի այլոց, տալիս է մի քանի հետազոտութեան տեղեկութիւններն ու բնորոշումներ:

«Ինքնարշտումն սկզբունքի յայտարարութիւնից յետոյ, ասում է նա, Անդրկովկասում կազմեցին ներկայումս գոյութիւն ունեցող հանրապետութիւնները Բրանց մէջ մտնող շրջաններով: Երկրորդ ազգային տեսակէտից սահմանազէջ-վերջացնելուց յետոյ, անմիջապէս առաջ եկաւ իշխանութեան կազմակերպութեան, նրա ժողովրդի և աւելի մօտ լինելու խնդիրը և մի ուրիշ խոշոր խնդիր — ժողովրդական տնտեսութեան զեկավարութիւնը: Դեռ 1921թ. վերջից Համառուսական Կենտր. Գործադիր Կոմիտէի մի յատուկ յանձնախումբ այդ հարցը բազմակողմանի քննութեան ենթարկելուց յետոյ, որունց շրջանացման հիմք ընդունելի տնտեսական սկզբունքը... Շրջանացման տնտեսական սկզբունքն որչա՜րք իրականացնել այնպէս, որ նա օգէէր բոլոր ազգերի ու ցեղերի տնտեսական ու հոգևոր զարգացման՝ համաձայնելով Բրանց կենցաղի, մշակոյթի և տնտեսական վիճակի առանձնաշատութիւններին: Նա պէտք է նպաստէր ազգային միութիւնների կատարեալ ծաղկումին՝ Բրանց տնտեսութիւնների զարգացման տեսակէտից»:

Իւ յետոյ՝ «Անդրկովկասի տնտեսական շրջանացման իմաստը դրած է երկու սկզբունք. առաջին՝ գոյութիւն ունեցող հանրապետութիւնների հողերի պահպանութիւնը և երկրորդ՝ շրջանացում ըստ շրջանների, ուսույնների և թեմների»: Վրաստանում ինքնավարութիւնները չեն մտնում ոչ մի շրջանի մէջ և մնում են նախկին վիճակում: Այրբէջանում Լեռնային Ղարաբաղը յօժար կամբով մտնում է շրջաններից մէկի մէջ, ի հարկէ, պահելով ինքնավար շրջանի գոյութիւն ունեցող ուրոյն դրութիւնը\*):

Այսպէս, ուրեմն, Անդրկովկասի վարչական նոր սահմանազմումը որոշած է կատարել «տնտեսական սկզբունքով» ի նկատի ունենալով նաև «բոլոր ազգերի ու ցեղերի տնտեսական ու հոգևոր զարգացումը»: Ուրիշ նկատում գոյութիւն չունի: Այսպէս է հաւա-

\*) Г. З. Райониорованіе З. С. Ф. Р. «Заря Востока», 28. апр. 1929 г.

\*) «Заря Востока», 11 мая 1929.

տացնում Անդրեովկասի ժողովուրդի զեկուցարեւը : Իսկ իրականութիւնը — Ի՞նչ են ասում փաստերը :

Իրականութիւնը ցոյց տալու համար առաջ բերենք մի քանի օրինակներ, որոնք բաւական են երևան հանելու համար այն կեղծիքը, որ դրանք է Մարտարձկներէ հաստատարացումներէ հիմքում :

Օրինակ առաջին — Ախալքալաքի պարագան : Երբ ջանացման նոր ծրարով Ախալքալաքը որոշած է միացնել Ախալցխայի դաւառին : Ի՞նչ հիմք կայ նման միացում կատարելու համար :

Յայտնի է, որ 1916 թիւ յունւար 1-ին, համաձայն սուս դատաւային վարչութեան աւանդներէ, Ախալքալաքն ու Ախալցխան ազգայական կայմի տեսակէցի ներկայացնում էին հետեւյալ պատկերը\*):

Ախալ Բայաթ — ազգաբնակչութեան ընդհանուր թիւն էր 107.173 հոգի, որից հայ՝ 75.725, վրացի՝ 10.324, ուսու՝ 7.542, թուրք՝ 5.431, քերդ՝ 904 և այլն : Ախալքալաք քաղաքի բնակիչներէ ընդհանուր թիւն էր 7.055, գաւառի՝ 100.118 :

Ախալցխա — ընդամենը 96.952 բնակիչ, որից քաղաքում 25.475, գաւառում՝ 71.477 : Ըստ ազգութեան ամբողջ դաւառում կար 28.225 հայ, որից 18.165 հոգի ապրում էր քաղաքում, 45.492 վրացի, որից 35.212 մասնատականներ, 16.680 թուրք, 3.246 հրէա, 1.800 քերդ և այլն :

Մատուրապէս նոյն թւերն է հաղորդում և 1917 թիւ դեղատնտեսական վիճակագրութիւնը\*\*):

Այս թւերից երեւում է, որ Ախալքալաքի դաւառում հայերը կազմում էին ճնշիչ մեծամասնութիւն, գրեթէ երեք-քառորդը ընդհանուր բնակչութեան : Եթէ ի նկատի ունենանք, որ վրացի արձանագրածներն մի մասն էլ հայ կաթողիկէներ էին, որոք թիւր էլ աւելի կր մեծանայ : Ընդհակառակը, Ախալցխայում հայերը, համեմատաբար, փոքր թիւ էին կազմում — ընդհանուր ազգաբնակչութեան մէկ-հինգերորդը : այնտեղ առաջնութիւնը պատկանում էր վրացիներին կամ, աւելի ճիշտ, մասնատականներին, որովհետև վրացի մասնատականներն իրենց աւելի մօտ էին զգում թիւրքերին, քան վրացիներին : Ամէն պարագայի տակ, Ախալցխայի շրջանի ազգաբնակչութեան հոծ մեծամասնութիւնը հայերի վերաբերմամբ տարածութ դիրք ունեցող տարր էր : Եթէ զեկուցարեւը լինենք 1916-ի թւերով, Ախալքալաքի կցումը Ախալցխային նշանակում է համարեա զուտ հայաբնակ Ախալքալաքի ինքնուրոյն դէմքի աղջատումն ու հայկական մեծամասնութեան թուլացումը : Նման քայլ կարելի էր անել միայն ազդային-նաւաճողական քաղաքական նպատակներով :

Այսօր կայութիւնը աւելի էն աղաղակող է :

Դժբախտաբար, մեր ձեռքի տակ չկան 1926 թ. դեկտեմբերեան ընդհանուր մարդահամարի արդիւնքները Ախալքալաքի և Ախալցխայի գաւառների ազգաբնակչութեան մասին, և մենք ստիպուած ենք հիմնել թէև նոյնպէս պաշտօնական, բայց մի քանի տարի առաջայ տեղեկութիւններէ վրա : Այսպէս, ըստ 1922

\*) «Закавказье», Ст.-Экон. Сборник. 1925. Тифлис.  
\*\*) «Кавк. Календарь». 1917.

թւի համավրացական քաղաքային վիճակագրութեան, Ախալքալաք քաղաքում կար 2.737 բնակիչ, որից 2.376 հայ, 217 վրացի, 102 ուսու և այլն : Նոյն ժամանակ Ախալցխա քաղաքում կար 10.153 բնակիչ, որից 6.904 հայ, 2.173 վրացի, 652 հրէա, 183 ուսու, 129 յոյն և այլն\*) : Այս թւերը ցոյց են տալիս, թէ ինչպիսի խոշոր փոփոխութիւն է տեղի ունեցել յիշեալ վայրերի բնակչութեան թւական վիճակի մէջ : Այս փաստը հաստատում է և Ախալքալաքի ու Ախալցխայի դուրսական ազգաբնակչութեան թւերով : Համաձայն 1924թ. վիճակագրութեան Ախալքալաքի գաւառում կար 69.319 բնակիչ, իսկ Ախալցխայում՝ 37.628\*\*) : Այս բնակչւնները ազգային պատկանելիութեան մասին տեղեկութիւն չունենք, բայց քաղաքական հանդամանքներն աչքի առաջ ունենալով՝ սխալ չի լինի ենթադրել, որ ազգաբնակչութեան կրճատման խոշոր մասը պէտք է արձանագրուի ի հաշիւ հայերի : պատերազմի և յեղափոխութեան տարիներին մասնատականներն ու վրացիները աւելի քեչ վնասուցին այդ շրջաններում :

Այս տեղեկութիւնները անկասար են : Նրանցից տոկոսային համեմատութիւններ հանելը անհնար է : Բայց մի բան ակնհեր է. երկու գաւառներում էլ հայ ազգաբնակչութիւնը զգալապէս պակասել է : Ընդհակառակը, մասնատական և վրացի տարրը եթէ չի աւելացել, դէթ պահել է նախկին վիճակը : Այս պայմաններում Ախալքալաքի միացումը Ախալցխային ուժեղ հարած է հայկական Ախալքալաքին, Ախալքալաքը ապահանջանելու մի ազդու միջոց : Ազգային ո՛չ մի արգարացում կարելի չէ առաջ բերել յօդուտ այդ միացման : Միակ արգար և լինինեան դաւանաբանութեան էլ համապատասխան կարգադրութիւնը կը լինէր Ախալքալաքի միացումը Հայաստանին կամ, ծայրայեղ դէպքում, ինքնավարացումը : Եթէ Հարաւային-Օսեստան 75-80.000 ազգաբնակչութեանը կարող է լինել ինքնավար, ինչո՞ւ 72.000 բնակիչ ունեցող հայկական Ախալքալաքը չի կարող : Ի՞նչ արգելք կայ, բացի վրացի բուլեկեներէ չովինիզմից :

Բայց զուցէ ազգային յատկանիչից բացի աւելի բարձր նկատում է հաշիւ անուած : Գուցէ, օրինակ, աշխարհազարկական կամ տնտեսական պայմաններն էին հարկադրում Ախալքալաքը կցելու Ախալցխային : Զ՞ ո՞ր շրջանացման հիմքը, ըստ Մարտարձկի, շտնտեսական սկզբունքն է : Գարձեալ ո՛չ : Աշխարհազարկական պայմաններով Ախալքալաքը օրգանական շարունակութիւն է Եփրակի, մեկչեւն Ախալցխան աւելի շուտ նման է Վրաստանին, աւելի ճիշտ, Վրաստանի և Հայաստանի միջին տեղն է գրաւում : Տարածութեամբ Ախալքալաքի կենտրոնը աւելի մօտ է Եփրակին : Տնտեսական հակումով էլ ուղղուել է դէպէս հայկական Եփրակը : ախալքալաքցիներ իր առևտուրը անում է Եփրակի հետ և ո՛չ Ախալցխայի կամ Թիֆլիսի : Բնակաւնաբար, և նրա վարչական յարաբերութիւններն էլ պէտք է լինէին Եփրակի հետ, բայց ոչ երբեք Ախալցխայի :

\*) «Закавказье», 1925. Тифлис . Стр. 156-7.  
\*\*) «Сов. Закавказье», Справочная Книга. Тифлис.

Ախալքալաքի կցում աղաղակող բռնութիւն է այդ զուտով ազգաբնակութեան վերաբերմամբ և ոչնչով չի տարբերում վարչական այն արհեստական սահմանագծումներից, որ անում էր ցարական բերդերատիան: Որո՞րդային բերդերատիան չի կարող առաջ բերել ոչ մի հիմնաւորում արդարացիելու համար իր կամայականութիւնը, բացի մէկ հիմնաւորումից. այդպէս են կամեւում վրացի կոմունիստները: Պէտք է խնդրել Ախալքալաքի հարցը. անհրաժեշտ է հայերի տոկոսը ինչնչել այդ շրջանում. հարկաւոր է այնպէս անել, որ Ախալքալաքի անունն իսկ շմայ մէջտեղը: Եւ թիֆլիսի շովինիստները դիմում են նախկին փոխարքաների ու գեներալ-գուբերնատորների միջոցին. սրանք Հայկական Ղարաբաղն ու Զանգեզուրը աշխատում էին խնդրել դաշտային թրջութեան մէջ, Լուին յանձնում էին թրջական Բորչալուին, բուլեիկ փոխարքանները Ախալքալաքը փորձում են մարտել Ախալքալաքի միջոցով: Եւ ինչպէս առաջ ցարական ծառայութեան մէջ գտնուող հայ շինովնիկները կուրորէն ենթարկում էին վերից եկած հրամանին, այսօր էլ հայ կոմունիստները շինովնիկները ծառայական հլու կամակարարութիւն են ցոյց տալիս Մոսկուայից ու թիֆլիսից արձակուող հրամանների նկատմամբ: Երկու դէպքում էլ միևնոյն երևույթը. յուսանք նոյնը կր լինի և արդիւնքը...

Երկրորդ օրինակ — Լեռնային Ղարաբաղը:

Թէև Վրաստանի նորակազմ շրջանների ազգաբնակչութեան միջին զանալը լինելու է 360,000 մարդ, բայց Հարաւային Օսեթիան, որ հազիւ 80,000 բնակիչ ունի, ինքնավար է և մնալու է ինքնավար: Շուրջ 125,000 բնակիչ ունեցող Աջարիստանը առանձին հանրապետութիւն է: Հանրապետութիւն է և ինքնուրոյն հանրապետութիւն էլ պէտք է մնայ 100,000-ից պակաս բնակիչ ունեցող Նախիջևանը, իսկ Հայկական Ղարաբաղը իր 125,000 հայ բնակիչներով\*) որոշած է միացնել Ադրբէջանի հոծ թրջութեամբ բռնած մի շրջանի: Եւ այն էլ — ի՞նչ կեղծակտորութիւն — զարաբացիների «յօժար կամքով»: Որո՞րդային աշխարհում յայտնի է ինչ ասել է յօժար կամք. վերելից կը հրամայեն, Գեպէուի աւելներն ու մաուզերները դործի կը դրեն — ահա ձեզ «յօժար կամք»: Մախարաձէները շատ լաւ գիտեն, որ է՞նք թիֆլիսում որոշած է Ղարաբաղը միացնել թրջական շրջանի, կը միացնի, թէկուզ և ոչ մի զարաբացի չկամենայ. «յօժար կամքը» անհրաժեշտ է արտաքին աշխարհը յիմարացնելու համար...

Նոր սահմանագծման նպատակը աւելի խոշոր ու կենսունակ վարչական միաւորներ ստեղծելն է. այդ նպատակով են Ախալքալաքն ու Ղարաբաղը կցում ուրիշ շրջանների: Այն ժամանակ, մտում է անհասկանալի, ինչո՞ւ են դուրս թողնում Հար. Օսեթիան կամ Աջարիստանը: Եթէ վարչական ու տնտեսական նկատումներից գատ Աջարիստանն ու Հար. Օսեթիան պահւում են ինքնուրոյն, ինչո՞ւ նոյն սկզբունքը չի կիրառւում և ինքնավար Ղարաբաղի վերաբերմամբ,

մանաւանդ որ կեանքի փորձն էլ հաստատել է, որ ինքնավար Ղարաբաղը կենսունակ վարչական միաւոր է: Ինչ կողմից էլ մտնեալու լինենք, մտում է անհասկանալի այս երկու չափն ու երկու կէտը:

Բայց եթէ այնուամենայնիւ Ղարաբաղը չպէտք է թողնուէր առանձին և անպատճառ պէտք է կցուէր որևէ շրջանի, աւելի բնական, աւելի արդար ու տրամաբանական չէ՞ր լինի, որ միապէս Զանգեզուրի հետ. չէ՞ որ այդ երկու շրջանները ամէն բանով՝ թէ՛ ազգաբնակչական, թէ՛ աշխարհագրական և թէ՛ տնտեսական տեսակետից կազմում են մէկ ամբողջութիւն: Եթէ ազգբնակչական շրջանները սկզբունքորէն էլ Ղարաբաղի լեռնազանգաւածը դաշտային թրջական շրջանների միացման օգտին, չէ՞ որ հայաստանցու «տնտեսական սկզբունքն» էլ պահանջում է հակառակը: Եւ, վերջապէս, չէ՞ որ «տնտեսական սկզբունքից» գատ «հայ ազգի ու ցեղի հոգևոր զարգացումն» էլ, այսինքն՝ ազգաբնակչական սկզբունքն էլ, որի անուշիկ ճառում է Մախարաձէն, խօսում է յօգուտ Հայաստանի, որովհետև Մախարաձէնին էլ դիտեն, որ զարաբացի հայը իր «կենցաղով ու մշակոյթով» բնական մէկ մասնիկն է Հայաստանի հայութեան և, ի հարկէ, իրեն աւելի հարազատ կը գտայ Հայաստանում, քան Ադրբէջանում:

Եւ, սակայն, Ղարաբաղի առանց այն էլ թերատ ինքնավարութիւնը ուզում են ջնջել և հայկական մեծամասնութիւնը լուծել թրջական բազմութեան մէջ: Եւ այս զորութիւնը հայ կոմունիստները համարում են բոլորովին բնական և կրօնար: Ո՛չ մի հայ կոմունիստ չգտնեց, որ բողոքէր, ըմբոստանար այս վայրենի բռնութեան դէմ:

Երրորդ օրինակ — Նախիջևանը:

Երբ խնդրեք գալիս է հայկական Ղարաբաղին, առաջ է քշում տնտեսական նկատումը: «Այո՛, ճիշտ է, ասում են Բազուի մարդիկ, ազգային կազմով Ղարաբաղը հայկական է, բայց տնտեսական տեսակէտով նա Ադրբէջանի է պատկանում»: Ոտելու ձևը կտրուկ կերպով փոխում է, երբ դուում է Նախիջևանի հարցը. «ձիշտ է՛, ասում են նոյն Բազուի մարդիկ, քրտեսական կեանքով Նախիջևանը Հայաստանի անքաժանիկ մէկ մասն է, բայց չէ՞ որ նրա ազգաբնակչութեան մեծ մասը թուրք է, ուրեմն պէտք է մնայ Ադրբէջանի սահմաններում»:

Այս տրամաբանութիւնը շատ է յիշեցնում Աբրիկէի վայրենիների ծանօթ դատողութիւնը...

Եթէ միայն տնտեսական նկատումներով Լեռնային Ղարաբաղը աւելի ևս ամրացում է Ադրբէջանի սահմաններում, Նախիջևանը առանց վէճի ու կասկածի պէտք է կազմէր Հայաստանի մաս. իր ամբողջ տնտեսութեամբ Նախիջևանը կապւած է Հայաստանին. փորձեցէ՛ք փակել Հայաստանի դռները, և Նախիջևանը շնչահեղձ կը լինի իր սահմաններում: Այս փաստը այնքա՛ն հանրաճանախ է, որ նրա օգտին ապացոյցներ բերելն իսկ ամօթ է: Այդ բանը յայտնի է ամենքին և՛ Երևանում, և՛ Բազուում, և՛ թիֆլիսում, բայց և այնպէս Նախիջևանը մտում է Հայաստանից դուրս, միացած է Ադրբէջանին, որի հետ ընդհանուր սահման իսկ չունի: Մինչդեռ և՛ ասուածային, և՛ մարդկային, և՛ նոյնիսկ բուլեիկական օրէնքներով Նախիջևանը պիտո՛ւ

\*) «Осетское Закавказье»-ն Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութեան քիւր ցոյց է տալիս 149,000:

լինէր Հայաստանի մէկ շրջանը: Եւ այն ժամանակ գոյութիւն չէին ունենայ այնպիսի անհեթեթ երևոյթներ, որոնցից «Իւրայատուկ ու տարօրինակ» մի նմոյշ, ամաչելով, առաջ է բերում և Մախարաձէն. «Հայաստանում, առում է նա, Մեղրիի շրջանը պէտք է լինում, Նախիջևանի հանրապետութեան վրայով, կայել Երեւանի հետ»: Մինչդեռ Մեղրիի իր աշխարհագրական, կլիմայական ու տնտեսական պայմաններով մէկ մասնիկն է Նախիջևանի ինչպէս և այս վերջինը մէկ մասնիկն է Հայաստանի: Մախարաձէն չի համարձակուում ստեղծ, որ Նախիջևանը անհրաժեշտ է մտցնել Հայաստանի մէջ, ինչպէս համանման պայմանները ներկայացնող Աջարիտանը մտնում է Վրաստանի մէջ:

Ներկայ յօդուածում մենք չենք անդրադառնալու շրջանացման ներքին սահմաններին. այդ մասին արդէն գրւած է «Իրօշակ»-ում\*): Մեր նպատակն էր ցոյց տալ, որ Անդրկովկասեան Խորհուրդների Երդ Համագումարի հաստատած շրջանացման ծրագիրը, Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող մասերով, բոլորովին հակասում է ընդունւած սկզբունքներին, կեանքի պահանջներին և հասարակական տարրական արդարութեան:

Մախարաձէն պնդում է, որ Անդրկովկասը «ազ-

դային տեսակէտից սահմանադժեւէլ-վերջացել է» — Ախալքալաքի ու Ղարաբաղի օրինակով մենք տեսնք, որ այս հաւաստիացումը ճիշտ չէ. Հայաստանի ազգային սահմանները մնում են բնաբարբաւ: Եւ Մախարաձէն խորագրում է փաստերը՝ պնդելով հակառակը: Մախարաձէն յայտարարում է, որ «շրջանացման հիմք ընդունւած է տնտեսական սկզբունքը» — Նախիջևանի օրինակով մենք ցոյց տւինք, որ Հայաստանի վերաբերմամբ այս սկզբունքն էլ չի կիրառւած: Նախիջևանը բունի ուժով պոկւած է Հայաստանի անտեսութեան կենսադի մարմնից և կցւած է Ազրբէջանին:

Մախարաձէն ճառում է «բոլոր ազգերի ու ցեղերի» «հոգևոր զարդացումից», «նրանց կենցաղից ու մշակոյթից», իսկ ախալքալաքցի հայի «հոգևոր զարդացումը» ստորադասուած է Ախալցխայի մահմետականներին ու վրացիներին, յանձնւած է վրացի շինովինիների կամայականութեան, իսկ զարաբաղցի լեռնական հայի «կենցաղն ու մշակոյթը» ուրում են ենթարկել դաշտային թուրքի խնամակալութեան...

Այսպէս է տօրինում խորհրդային իշխանութիւնը իրեն ենթակալ ազգերի ճակատագիրը:

Ս.ՄԱՍՈՒՐԵԱՆ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՍՂԱՆԳՆԵՐԸ

### ՏԻԱՐՊԵՒԻՐԻ ՆԱՀԱՆԳ

Սահման և տարածութիւն. — Արեւելէն՝ Սղերդ, Պիթլիսի նահանգին Փէշերի և Սառուն գաւառակները, արևմուտքէն՝ Ուրֆա նահանգի Սէվէրէկ, հիւսիսէն՝ էլ Ազիզի նահանգի Մարտէն, Բալու և Փէթիւրկէ գաւառակները, հարւելէն՝ Մարտինի Տիրէք գաւառակը: Ընդհանուր տարածութիւնն է 17,747 քառ. զիւրմետր:

Վարչական բաժանում. — Բացի կեդրոնի գաւառակէն՝ բաժնուած է Սիւլան (Մուֆարդին), Լճէ, Ջերմիկ, Օսմանիյէ (Արդնի) և Քոլլ գաւառակներու: Կեդրոնի գաւառակն ունի 8 գիւղախումբ և 643 գիւղ, Սիւլանը՝ 2 գիւղախումբ և 217 գիւղ, Լճէն՝ 2 գիւղախումբ և 150 գիւղ, Քոլլը՝ 116 գիւղ, Արդնի-Օսմանիյէն՝ 154, Ջերմիկը՝ 116 գիւղ:

Մշակելի հող, ցանկ և հաւճաք. — Տիրապէքերի նահանգի տարածութիւնն է 17,737 քառ. զիւ., որուն 500 քառ. զիւրմետրը մշակւած և 17,237 քառ. զիւ.՝ը չէ մշակւած: Անմշակ հողէն 15,000 քառ. զիւ. լեռնոտ և ժայռոտ է, 136 քառ. զիւ. ալ լին ու ճահճ. մնացեալը արօտավայր է:

\* Ս.Վրացեան, «Հայաստանի վարչական բաժանումը», «Իրօշակ», 1928թ. № 12:

### Մէկ տարւան ընթացքին ցանքը ելած է՝

262,650 արտավար ցորեն, 110,200 արտավար դարբի, 14,000՝ սիսեռ, 1,800՝ սոսկ, 7,450՝ պոքչաք, 200՝ եգիպտացորեն, 45,900՝ կորեկ, 4,500՝ սոխ, 1,050՝ շուշմայ, 495՝ սխտոր, 24,000՝ բրինձ, 350՝ բամպակ, 800 արտավար ծխախոտ:

Հումճաք՝ 23,298,400 զիւո ցորեն, 9,594,000 զիւո դարբի, 30,000՝ սիսեռ, 85,000՝ սոսկ, 29,500՝ պորչաք, 24,000՝ եգիպտացորեն, 3,700,000՝ կորեկ, 165,000՝ սոխ, 30,000՝ շուշմայ, 4300՝ սխտոր, 288,000՝ բրինձ, 3,500՝ բամպակ, 5,000՝ ծխախոտ, 232,000 զիւո խաղող:

Ընտանի կենդանիներ. — 1,411 գրաստ, 3,435 մատակ ձի, 16,680 էջ, 1,170 շորի, 180 ուղտ, 79,032 արջառ, 6,214 գոճէջ, 209,783 ոչխար, 218,746 այծ: Բերք՝ 11,033,790 զիւո կաթ, 419,566 զիւո բուրդ, 107,650 զիւո այծի մազ:

Գործարաններ. — 1. — Զարուղի գիւղին մօտ կայ ալիւրի գործարան մը, որ կը պատկանի Նախիկի կրահոխան Ֆէյդի պէյի, հիմնւած է 1896-ին, ջուրով կը դառնայ, 10 ձիու ուժով, մէկ տարւան մէջ արտադրած է 1,296,000 զիւո ալիւր: 2. — Տիրապէքերի Ար-

սպաթաշ թաղին մէջ կայ մետաքսի շործարան մը, որ կը պատկանի Միւֆթի դասէ Հիւսէյին Էֆէնտի, հիմնուած 1912-ին, ձեռքով կը բանին, մէկ տարւան մէջ զործածէ է 1,245 քառակուսի մետր մետաքսեղէն: 3.— Ծաթիւն փաշա թաղին մէջ կայ նոյնպէս մետաքսի շործարան. կը պատկանի Տիւրքեճի Թահիրի, հիմնուած՝ 1914-ին, ձեռքով կը բանին, մէկ տարւան արտադրութիւն՝ 1.268 քառ. մետր: 4.— Ծաթիւն փաշա թաղին մէջ սողաքան—ատողձարծարան. կը պատկանի Ղանիգասէ Րամիլի, հիմնուած է 1927ին, կազով կը բանի, 15 ձիու ուժով, դեռ նոր կը սկսի զործել: 5.— Տիարպէճքի մէջ կայ 24 ալուրի շաղաք, Ղուրով բանող, 3-8 ձիու ուժով. մէկ տարւան մէջ աղացած են 2 միլիոն զիւօ ալուր: 6.— Լճէ քաղաքին մէջ կայ 37 շաղաք. տարեկան արտադրութիւն՝ 3,500,000 զիւօ: 7.— Սիւլան քաղաքին մէջ՝ 40 շաղաք, արտադրութիւն՝ 2,310,000 զիւօ ալուր: 8.— Արդնի Օսմանիէյի մէջ՝ 14 շաղաք, 3,402,000 զիւօ ալուր, Ջերմիկի մէջ՝ 26 շաղաք, 2,415,000 զիւօ ալուր: Գուրիի մէջ՝ 75

Արդնի Օսմանիէյի, Ջերմիկի և Գուրիի մէջ մասնաճիւղեր ունին Կարմիր Մահիլը, Մանուկներու Պաշտպան ընկերութիւնը, Թիւրք Օճաղըն և Սաւառնակի միութիւնը:

Առողջական վիճակ.— Լաւ է: Տեղական հիւանդութիւններն են՝ ջերմ, թրախոմա, Հարկի պալար, մանուկներու փորճարութիւն և կողատապ: Տիարպէճքի մէջ կան դանդաղ հիւանդանոցներ՝ մէկը 50 անկողիններով, միւսը 25 անկողիններով՝ կատաղարոյժ հիւանդանոց. ուրիշ հիւանդանոց մըն ալ յատկացած է վեներական հիւանդութեանց: Ջերմիկի, Գուրիի, Սիւլանի և Լճէի մէջ 5 անկողիններով բուժարաններ կան: Արդնի-Օսմանիէի մէջ՝ թաղապետական դեղատուն մը բացուելու վրա է:

Ջերմուկներ.— Ջերմիկի արևելքը Համաժ Պաշը ըսած տեղը կայ ջերմուկ մը, որ ծծումբ, երկաթ և արսէնիկ կը պարունակէ: Մորթային հիւանդութիւններ և յոլացու կը բուժէ: տարեկան հասոյթն է 30,000 ոսկի:

Սկիզբ—վախճան	երկայնք քիլոմետր	լաւ մասը քիլոմետր	նորոգուող քիլոմետր	նորոգ. չսկսած քիլոմետր
Տիարպէճք—Գարախան	30	—	—	—
Գարախան—Գալլմոնի կամուրջ	43	30	13	—
Ջերմիկ—Օսմանիէ	25	17	18	—
Ջերմիկի սահմանէն Ջերմիկ	8	6	2	—
Սիւլան—Տիարպէճք—Սիւլան—Պաթմանի կամուրջ	107	35	72	—
Տիարպէճք—Լճէ	95	30	65	—
Տիարպէճք—Գուր	38	18	13	17

Շաղաք՝ 3-6 ձիու ուժով, տարեկան արտադրութիւն 2,700,000 զիւօ ալուր:

Դրամատուններ.— Տիարպէճքի մէջ մասնաճիւղեր ունին Երկրագործական դրամատունը (1899-էն ի վեր) և Օսմ. պանթան (1911-էն ի վեր):

Հասոյթներ.— Տիարպէճքի նահանգի ընդհանուր հասոյթն է 378,732 ոսկի, մասնաւոր հասոյթը՝ 568,230 ոսկի:

Բնակչութիւն.— Ընդհանուր թիւն է 193,304, որուն 96,628-ը այր, 96,677-ը կին: Միւսնուղ՝ 4,910, որուն 2,618-ը մանչ, 2,262-ը աղջիկ: Մահ՝ 6,143, որուն 3127-ը այր, 3016-ը կին: Ամուսնութիւն՝ 1496, որուն 746-ը այր, 750-ը կին: Ամուսնալուծում՝ 29:

Դպրոց և միաբնակներ.— Տիարպէճքի քաղաքին մէջ կայ միջնակարգ դպրոց մը՝ 125 աշակերտով, մանչերու վարժարանանոց մը՝ 67 ուսանողով, արհեստի վարժարան մը՝ 54 աշակերտով, մանչերու և աղջիկներու նախակրթարաններ՝ 628 աշակերտով: Նահանգի միւս մասերուն մէջ կան մանչերու և աղջիկներու 12 դպրոցներ՝ 771 աշակերտով:

Կեդրոնին մէջ մասնաճիւղեր ունին ինչքէ կուսակցութիւնը, Թիւրք Օճաղըն, Կարմիր Մահիլը, Սաւառնակի, Մանուկներու Պաշտպան, Ուսուցչական, Շոֆէրներու և մարզական միութիւններ: Սիւլանի, Լճէի,

Թերթեր.— Տիարպէճքի դազէթաքը, հիմնուած 1284 թւականին (1868), նահանգի պաշտօնաթերթն է: շարաթը մէկ անգամ լրջա կը տեսնէ և նահանգային տպարանին մէջ կը տպւի: Խալֆ սէսի, քաղաքական շարաթաթերթ, հիմնուած 1927 օգոստոս 1-ին, արտօնատէր և պատասխանատու տնօրէն՝ Սիւնան օղլու Համիտ պէյ: Նահանգային տպարանին մէջ կը տպւի:

**ՄԱՐՏԻՆԻ ՆԱՀԱՆԳ**

Սահման և տարածութիւն.— Մահմաններն են հիւսիսէն՝ Սիւրիի և Տիարպէճքի, արևելքէն՝ Մուսուլի և Հէքեքարիի, արևմուտքէն՝ Ուրֆայի նահանգները, իսկ հարաւէն՝ Սուրիա և Իրաք:

Ընդհանուր տարածութիւնն է 16,000 քառակուսի քիլոմետր:

Վարչական բաժանում.— Բացի նահանգի կեդրոն Մարսին գաւառակէն, բաժնուած է Միախաթ, Սալուր, Նուսէյի (Մծբին), ձէզրէ, Տիրիք, Կէրճոս և Բէսիւլ-Այն գաւառակներու: Կեդրոնի գաւառակ ունի 148 գիւղ, Միախաթը՝ 129, Սալուրը՝ 94, Նուսէյիքը՝ 83, ձէզրէն՝ 217, Տիրիքը՝ 106, Կէրճոս՝ 106 գիւղ:

Մշակելի հող, ցամփ և հումք.— Մէկ տարւան ընթացքին ցանուած է 671,774 արտավար ցորեն, 320,103՝

գարի, 2,020՝ հաճար, 17,132՝ պուրչազ, 15,010՝ եգիպտացորեն, 61,667՝ կորեկ, 2250՝ շուշմայ, 15,585՝ բամպակ, 1,280 ծխախոտ. տնկած է 427,200 որթատունկ և 14,475 տունկ թզենի:

Հունձք եղած է՝ 29,220,170 թիւ ցորեն, 27,026,555 թիւ գարի, 12,120՝ հաճար, 363,855՝ պուրչազ, 72,450՝ եգիպտացորեն, 2,024,015՝ կորեկ, 1,800՝ շուշմայ, 13,400՝ բամպակ, 38,490՝ ծխախոտ, 5,400,000՝ քիւր իսող:

Ընտանի կենդանիներ — 472 գրաստ, 1002 զամբիկ, 12,646 էշ, 1,477 ջորի, 2,393 ուղտ, 10,976 կով, 16,510 եզ, 53 գոմէշ, 214,008 ոչխար, 164,823 այծ: Բերք՝ 28,748 թիւ թիֆթիֆ, 694,470 թիւ բուրդ, 205,091 այծի մազ:

Բնակչութիւն — Նահանգի բնակչութեան ընդհանուր թիւն է 182,773, որու 90,393-ը այր, 92,780-ը կին: Մէկ տարւան մէջ ծնած են 2,418 հոգի, 1,287-ը մահ, 1131ը աղջիկ: Մեռած են 1591 հոգի, 839ը այր, 752 կին: Ամուսնութիւն՝ 278, ամուսնալուծուծ 37:

Ճամբաներ	Բիւռմետր
Մարտի-Սալուր	54
Միտիաթ-Սալուր	50
Ագնիկ-Սալուր	15
Միտիաթ-Հասանքիֆ	45
Միտիաթ-Քէլպորան	40
Ուարտէ-Կէրճու	30
Միտիաթ-Ճէզրէ	105
Ուարպչէրէֆ-Հազազ	3
Ճէզրէ-Քիւնտճէտտ	20
Միտիաթ-Պասըրըն	7
Բէսիւլպայտար-Կուրս Էլյաթ	8
Մարտի-Տիրիկ	50
Ճոզաթ-Շէմբաի	15
Շէմբաի-Տիւան	10
Տիրիք-Սէլմի	20
Սէլմի-Հին Թիմօ	5
Սէլմի-Հապուտ	12
Այն Տիլէր-Քէտէվէլի	4
Մարտի-Տիարպէթեր	32 խճ.
Մարտի-Սթասիոն	10 ,,
Մարտի-Նուէյպի	62 15ը ,,
Գումար՝	597 թիւ .

Անտառներ — Անտառներու ընդհանուր տարածութիւնն է 5891 հեկտար, որուն 180-ը կաղնի, 1833-ը խոզակաղնի, 50-ը մացառուաք: Մէկ տարւան մէջ կտրած է 1,110,725 կենդինար փայտ, 13,030 կենդինար անուր: Մաս մը միայն ատաղճի համար գործածուած է:

Համբեր ու գործարաններ չկան ամբողջ նահանգին մէջ: Կան միայն ջաղացներ, Մարտիի շուրջ՝ 52, Սալուր՝ 42, Նուսէյպիին՝ 25: Տիրիքի մէջ ձիթահան գործարան մը՝ որուն շարժիչ մեքենան 12 ձիու ոյժ ունի:

Դրամատուններ — Միայն Մարտիի մէջ Երկրագործական դրամատան մասնաճիւղ մը կայ:

Դպրոցներ և միութիւններ — Ամբողջ նահանգին մէջ 16 երկսեռ վարժարաններ կան, 1,362 աշակերտով:

Կան նաև 13 ժողովրդական դպրոցներ՝ 950 աշակերտով: Կեդրոնին մէջ Մանկապաշտպան ընկերութիւնը, Թիւրք Օճազըն, Կարմիր Մահիկը, Սաւառնակի և Ուսուցչներու միութիւնները մասնաճիւղեր ունին: Կայ նաև Առևտրական սենեակ մը:

Առողջապահական վիճակ — Նահանգին և շրջաններուն մէջ կան հետեւալ հիւանդութիւններ — թրախոմա, մալարիա, թանջք, մեծ չափով ծաղիկ, հարսանիթ, կարմրախտ, երբեմն սպանջուկ: Ամբողջ նահանգին մէջ ջրմուկ չկայ:

ՍԵՐԱՍՏԻՈՅ ՆԱՀԱՆԳ

Սահման և տարածութիւն — Սահմաններն են՝ արևելքն՝ Եսպին Գարահիարի և Երզնկայի նահանգները, հիւսիսն՝ Թոքատի, հարաւէն՝ Մալաթիոյ և Ուարբերգի նահանգները, արևմուտքն՝ Կեսարիոյ և Չորոտի նահանգները: Նահանգի տարածութիւնն է 39,450 քառ. թիւրեւոր:

Վարչական բաժանում — Բացի կեդրոնի գաւառակ Սերաստիայէն, ունի հետեւալ գաւառակներ — Թէնուս (Շէհր Գըլլա կամ Եարգըլլա), Հաֆիկ (Գոչհիսար), Ջառա (Գոչիքիթի), Տիլրիկ, Կիւրի, Տարէնտէ, Գանկալ, Ենի Ուան (Երլուրդ էլի): Ունի 29 զիւզախուճեր:

Մշակելի հող, ցամփ և հուճփ — Նահանգի 39,450 քառ. թիւրեւոր տարածութեան 13,150-ը մշակուած է, իսկ 36,300-ը անմշակ: Անմշակ հողէն 17,520 քառ. թիւրեւորը լեռնոտ է և քարուտ, 5800 թիւրեւորը լիճ ու ճահիճ, մնացեալը արօտավայր:

Մէկ տարւան մէջ նահանգին մէջ ցանած է 1,271,344 արտավար ցորեն, 347,730 արտավար գարի, 16,521՝ վարսակ, 145՝ հաճար, 20,591՝ պուրչազ, 625՝ եգիպտացորեն, 600՝ բակլա, 13,447՝ գետնախնձոր, 160՝ կանեփ, պահած է 16,900 մեղուի փեթակ:

Հունձք՝ 58,815,116 թիւ ցորեն, 18,960,549 թիւ գարի, 200,605՝ վարսակ, 48,020՝ հաճար, 649,240՝ պուրչազ, 124,250՝ եգիպտացորեն, 43,000՝ բակլա, 6,227,000՝ գետնախնձոր, 5,000՝ կանեփ, 507,000 թիւ մեղու:

Ընտանի կենդանիներ — 2,025 գրաստ, 6,498 զամբիկ, 13,979 էշ, 6 ուղտ, 60,881 կով, 68,555 եզ, 6,624 գոմէշ, 378,894 ոչխար, 224,233 այծ: Արտածուած է 145,754 թիւ բուրդ:

Անտառներ — Ամբողջ նահանգին մէջ անտառներու տարածութիւնն է 88,500 հեկտար, որուն 3,500-ը Սերաստիոյ կեդրոն գաւառակին, 26,000-ը Ջառա գաւառակին, 16,500-ը Ենի Ուանի և 45,500-ը Հաֆիկի մէջ: Մէկ տարւան մէջ 1,054 խորանարդ մետր ատաղձ չի հանուած է:

Համբեր — Սերաստիոյ գաւառակին մէջ կայ անուխի, մարմարի և դաճի հանք, Հաֆիկ գաւառակի մէջ՝ քարածուխ, Ջառայի մէջ՝ արծաթախան կապար, ծարրաքար և պղինձ, Ենիուանի մէջ՝ երկաթ, Տիլրիկի մէջ՝ կանքածուխ և երկաթ, Գանկալի մէջ՝ երկանաքարի և հանքաքարի հանքեր:

Ամբողջ նահանգին մէջ կան 16 աղահանքեր, որոնք



կանոնադրարար կը բանեցին: Աղի տարեկան հասոյթն է՝ 410,300 ոսկի:

Գործարաններ և ջրաղացներ.— Սերաստիա քաղաքին մէջ կան 21 ջրաղացներ, որոնք տարեկան 95-107000 օխա ալիւր կաղան: Եւրոպոյ էլի գաւառակին մէջ կան 44 ջրաղացներ, որոնք տարեկան 98-106,000 օխա ալիւր կարտադրեն: Հաֆիկի մէջ՝ 52 ջրաղաց, որ տարեկան 12-54,000 օխա ալիւր կաղան, Տարէնտէի մէջ՝ 36 ջրաղաց, տարեկան արտադրութիւն՝ 54-150000 օխա, Գանկայի մէջ՝ 41 ջրաղաց, տարեկան արտադրութիւն՝ 130-200,000 օխա ալիւր: Տիվրիկի մէջ կայ 46 ջրաղաց, Շէհրի Գրչլայի մէջ՝ 62, Կիւրիի մէջ՝ սղոցարան մը և 26 ջրաղաց, Ջաուայի մէջ՝ 88 ջրաղաց:

Դրամատուններ.— Սերաստիոյ մէջ կան Օսմանեան Պանքայի և Երկրագործական դրամատան մասնաճիւղեր, առաջինը հիմնած 1863-ին, երկրորդը՝ 1889-ին: Երկրագործական դրամատունը մասնաճիւղեր ունի նաև Տիվրիկի մէջ (հիմնած 1889-ին), Գանկայի մէջ (1906-ին), Կիւրիի մէջ (1889), Շէհրի Գրչլա (1889), Երևոյոյ էլի (1889):

Ընդհանուր և մասնաւոր հասոյթ.— Նահանգի ամբողջական հասոյթն է 979,745 թրքական ոսկի,

առողջապահական պաշտօնեաներու դպրոց մը՝ 56 դիւքերօթիկ աշակերտով: Ուրիշ երկու աղջկանց վարժարաններ՝ մէկը 152, միւսը 140 աշակերտով:

Սերաստիոյ մէջ մասնաճիւղեր ունին Պալք կուսակցութիւնը, Թիւրք Օճաղըն, Կարմիր Մահիկը, Սաւառնակի, Մանկապաշտպան և Ուսուցչական միութիւնները: Սերաստիոյ մէջ կայ նաև Թղթատար-հեռագրական պաշտօնեաներու օդնութեան ընկերութիւնը և ինքնաշարժի վարիչներու միութիւնը:

Գաւառակներու մէջ ալ այս միութիւնները մասնաճիւղեր ունին:

Առողջական վիճակ.— Նահանգին առողջական վիճակը լաւ է: Տեղական հիւանդութիւններն են՝ ժանտատենդ, հարսանիք, կարմրախտ և թանջը: Կայ տիպար հիւանդանոց մը, զինուորական հիւանդանոց, առողջապահական գրասենեակ մը, կատարութեան և Փրանկախտի բուժարաններ ու աշխատանոցներ:

Կեդրոն գաւառակին մէջ կայ Սօվուզ Ջերմիկ անուն ջերմուկը, որ տարեկան 500 ոսկի հասոյթ կը բերէ: Երևոյոյ գաւառակին մէջ կայ տաք ջերմուկ մը (Սըճազ Ջերմիկ անունով), որուն տարեկան հասոյթն է 3,113 ոսկի: Ասոնցմէ գատ՝ Գանկայի Գավազ դիւ-

Սկիզբ—վախճան	Երկայնք քիլոմետր	լաւ մտք քիլոմետր	ճորոզուղ քիլոմետր	ճորոզ-չսկսած քիլոմետր
Սվազ—Սամսոն (Ջամլը Գէյ)	62	42	10	8
Սվազ—Կեսարիա (Թուրք Գէյ)	125	67+268	11	46+732
Սվազ—Մալաթիա (Կամուրջ)	125	5	29	101+500
Սվազ—Երզնկա (Գարա Գալըր)	112	35	20+500	56+500
Ենի Պան—Ազատաղ Մարէն	48+75	—	—	48+750
Թէճէր—Կիւրի	96+500	—	8+500	88
Կիւրի—Տարէնտէ	35	—	20	15
Ջաուա—Տիվրիկ	107+500	10	20	77+500
Տիվրիկ—Արարկիւր	30	—	—	30
Տիվրիկ—Գանկալ	60	—	—	60
Սվազ—Երջար	50	5	—	45
Սվազ—Սօվուզ Ջերմիկ	15	15	—	—

մասնաւոր հասոյթը 948,130 ոսկի: Կեդրոնի Թաղապետութեան հասոյթն է 144,371 ոսկի:

Բնակչութիւն.— Նահանգի բնակչութեան ընդհանուր թիւն է 329,740 հոգի, որուն 154,910-ը այր, 174,831-ը կին: Սերաստիոյ գաւառակն ունի 56,180 բնակիչ, 27,325-ը այր, 28,855-ը կին: Թէնուր (Շէհրի Գրչլա կամ Շար Գրչլա)՝ 50,207 բնակիչ, Հաֆիկը՝ 37,726, Տիվրիկը՝ 25,172, Տարէնտէ՝ 23,081, Ջաուա՝ 47,771, Գանկալ՝ 33,408, Կիւրիին՝ 18,768 և Ենի Պանի գաւառակը՝ 37,428 բնակիչ:

Գայրոցներ և միութիւններ.— Սերաստիոյ գաւառակին մէջ կան 18 նախաընթացներ, 1,749 աշակերտով, լիսն մը՝ որ ունի 288 աշակերտ, 100-ը դիւքերօթիկ, 188-ը ցեղեկայ: Կայ այլերու վարժապետանոց մը՝ 150 դիւքերօթիկ աշակերտով, աղջկանց վարժապետանոց մը՝ 250 դիւքերօթիկ աշակերտներով,

զախումբին մէջ կայ Երանլը ջերմուկը և Շէհրի Գրչլայի Օրթաքէօյ ըլած տեղը Կլաք Ջերմիկի, որուն շուրջ դեռ չէ տարբարուծւած:

Ոճիւր.— Մէկ տարեկան ընթացքին գործւած է 2108 ոճիւր, որուն 74-ը սպանութիւն:

Մամուլ.— Գրքը Որմաք քաղաքական թերթը՝ հիմնւած է 1925 ղեկտ. 3-ին. կը հրատարակէ շաբաթը երկու անգամ: Պատասխանատու տնօրէնն է Սըլըր-ճը գատէ Պայրի պէյ: Կը սպել նահանգային տպարանին մէջ:

Սվազ թերթը, որ նահանգի պաշտօնաթերթն է, հիմնւած է 1888-ին: Շաբաթը մէկ անգամ կը հրատարակէ: Վարիչն է տպարանի տնօրէնը:

Տուրքու վէ տիւշիւճէ մէնուսաք (Հանդէս գաջուճի և մտածման): 15 օրը անգամ մը կը հրատարակէ Սերաստիոյ Ուսուցչական Միութեան կողմէ: ՀՐԱՆՏ-ՍՍՄՈՒԷԼ

# Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Վերջերս յաճախ ձայներ կը լսին Անաստուրի խորերէն, երկտող նամակներով կամ ճամբորդներու միջոցաւ: Ձայներ, որոնք ամբողջական գաղափար չեն տար տիրող կացութեան մասին, բայց կը պարզեն շարք մը ուշադրաւ երևոյթներ:

Առաջինը այն՝ որ քեմալական կառավարութիւնը զանազան շարժումներ կը փորձէ, ժողովուրդը քշելու համար դէպի ամայի տարածութիւնները:

Տակաւին, չգտան կախարդական խօսք մը, որ գունդագունդ « արեւելեան նահանգները » հոսեցնէր: Մէջմէտծիքները: Ընդհակառակն, բուն տեղացին, որ հեռացած էր 1914—1922, միշտ կը դժգոհակի վերագրանալ, իսկ արտասահմանէն փոխադրած գաղթականները բնականաբար աւելի պահանջկոտ են և խարխուս կը նետեն մտաւոր շրջաններու մէջ: Քանի մը տարի առաջ, Յուկուլախայէն հասած գաղթականներ նոյնիսկ Պոլսէն ցիրուցան եղան, երբ տեսան որ իրենց ուղած տեղերը չպիտի կրնան երթալ: Իսկ համեմատաբար բախտաւոր շրջան մը, Ռարբերդ փոխադրած 7000 գաղթականներ իրենց բաշխած սերմցուն վատնելէ յետոյ, կէս աւ հէս փախեր են վերջերս, ձգելով տուն և հող, այսինքն հայկական աւարները:

Գիտելի է որ, այս տարի Բալկաններէն սպառած գաղթականներուն իրարեք տրւեր է զիրենց փախաբան վայրերուն մէջ՝ հաստատուելու, ինչպէս կը հաղորդէր Անաստուրի Գործակալութիւնը:

Ներքորդ երևոյթն այն է, որ ինկիւրի ջանքեր կը թափէ նստակեաց դարձնելու, հողին կապելու Քիւրտերը, նոյնիսկ աշիբէթներու անդամները, որպէսզի ազատէ զխողարարներու ազդեցութենէն: 1925—էն ի վեր կատուցած կախաղանները, սարքած ջարդերն ու հրկիզումները բաւական չեղան հեռացնելու ջրտական վտանգը, որ մտիլիի տակ թաղած կրակի մը կը նմանի: Եւ հիմա կը փորձեն «բարենորոգումներու» ճամբան, ուրիշ խօսքով՝ խաղաղ թրջացումը:

Այս առաջադրութեամբ, արդէն մասնաւոր պտոյտ մը կը կատարէ ներքին գործավարը: Իսկ տեղաւորման համար յատուկ ծրագիր մը պատրաստւած է, որ պիտի գործադրուի մինչև 1930 Մայիս: Քւէարկւած օրէնքին համաձայն, արեւելեան նահանգներու կալուածները պիտի բաժնուին գիւղացիներու և աշիբէթներու պատկանող անհատներու, ջրաւազոյն կենսել մը ապահովելու համար անոնց»: Օրէնքին գործադրութիւնը յանձնուած է Քիւրտիստանի մարզպան Իպրահիմ թալի պէյին, որ համբոսան շրջանի Եաքիբ փաշային զերը կը կատարէ երեք տարիէ ի վեր, մերթ շոյեով, մերթ ահ ու սարսափ տարածելով: Անոր արամարբութեան տակ զրւած է 300,000 ոսկի, այս տարւան ելմտացոյցն է:

Յրջական իշխանութիւնը փորձով հաստատած է թէ բաւական բարեյոյս դարձած են այն Քիւրտերը, որոնք տուն-տեղ ունեցան, շնորհիւ Հայերու տեղահանութեան և ոչնչացման: Մասնաւորապէս այն Քիւրտերը, որ առատ բաժին ստացած են հայկական աւարէն, պատճառ չեն տեսներ զենք բարձրացնելու «բարեխնամ» կառավարութեան դէմ: Արդարև, շրջաններ կան, ուր հարիւր Քիւրտէն հաղիւ տասը սեփական տնտեսութիւն ունէր պատերազմէն և հայաջինջ սարսափներէն առաջ, իսկ այսօր զերթէ բոլորն ալ ունին մի քանի, հող կամ լճկան: Ուրիշ խնդիր թէ, ինչպէս Քիւրթերը, ստուգ ալ շատ բան փճացուցած են տարիներու ընթացքին, և միշտ կարօտը կը քաշեն նոր աւարներու:

Այս քաղաքականութիւնը մասնաւորապէս կը գործադրուի Ռարբերդի շրջանին մէջ, խոնարհեցնելու համար Տէրսիմը, որ միշտ մտահոգութեան աղբիւր է: Մէզրէ քաղաքին մէջ տուններ և խանութներ բաժնած են ջիւրա բէկերուն, որոնք սակայն չեն հեռանալ լեռներէն և միայն տրւած աւարին վարձքերէն կողտին: Յետոյ, վերջերս Ամերիկայէն զրկւած 40,000 ոսկի գումարէ մը 30,000—ը Քիւրտերուն բաժնեց կուսակալը, որպէսզի աղօթեն Մ. Քեմալի արևաշատութեան համար:

Երբորդ երևոյթը՝ Անաստուրի խորերը մնացած հայկական ղեկորներուն նոր խոճապն է:

Որե՛ն նոր դէպք չէ պատահած: Այս մնացորդները, մեծ մասով կիներ և մանուկներ, ահ ու սարսափի տակ սմբած, նոյնիսկ իրաւունք չունին մէկ գիւղէն միւսը երթալու: Եւ սակայն, կառավարութիւնը այնպիսի ճամբայ մը բռնած է, որ կը հարկադրէ կա՛մ ձգել հեռանալ, և կամ թրջանալ: Ամիսներէ ի վեր այս պատմութիւնն է որ՝ կարճապահուէ բերնի բերան, և արդէն խոճաբ-խոճաբ-կը հասնին Պոլիս կամ Մուրթա. ինչ որ մնացած էր այս խեղճերուն ձեռքը, իբրև մասնիկ մը հայրենական ժառանգութեան կամ իբրև նոր վաստակ, կը խլի մեկնած օրը, իսկ մինչև որ երթալը տեղը հասնին, ցնցոտիներ միայն թողած կըլլան:

Իրազեկները 30—40,000 կը հաշուեն այս բեկորներուն թիւը, ցիրուցան՝ Անաստուրի ամբողջ տարածութեան վրա, ընդհանրապէս զիւղերու մէջ և խտտութիւն անշատուած՝ իրարմէ: Զուրի՛ և՛ եկեղեցիէ և՛ դպրոցէ, չհաշուելով մէկ երկու փոքր բացառութիւններ: Քիչ-շատ բախտաւոր կը համարէր Կեսարիան, իր խեղճուկ ստանդորդարանով և որբանոցով, բայց ան ալ հաշուարդարի կենթարկուի աստիճանաբար: Արաբիկի մէջ մնացած են 800 հոգի, մեծ մասով աւուր հացի կարօտ: Քանի մը տարի առաջ մինչև 2000 կը հաշուէին, բայց

աստիճանաբար հերացան և բարեբախտութիւն է, որ մեզ մաղբ փոխադրեցաւ Հայաստան, Նոր-Արարիկը, Տեղբանակերտ զապաքին մէջ մնացած են 200 տուն Հայեր, իսկ շրջաններուն մէջ 400 տուն, մեծ մասով օտարազած կամ Բիւրոսերու հնա խառնեալ: Այստեղ ալ ոչ գարոց, ոչ եկեղեցի: Ասորի քահանաներ կը կատարեն կրօնական արարողութիւնները:

Տնտեսապէս և Ֆիզիքապէս զերի, զրկեալ՝ մտաւոր և հոգեկան կեանքէ, միշտ ա՛ն ու զողի մէջ, այս խեղանկերը, ինչպէս բարեք, հարկադրեալ են կամ ձգել-հեռանալ, կամ թրջանալ: Այս վերջին պարագան կը հաստատէ թիւրք թիւրք մը, էրէյիթի մասին (Պոնիա): «Մեր տեղեկութեանց համաձայն, էրէյիթի բոլոր Հայերը սկսած են միւֆթիին դիմել, կրօնափոխ ըլլալու համար: ձևուսն զիմողը՝ Սարգիս էֆենտին, արդէն ընդունեալ և Մէհմետ Նիպոկի կոչուած է»:

Կոտորած չկայ, բայց նոյն ճամբան կառայնորդեն, մաս-մաս հալեցնելով թրջական կաթսային մէջ: Այս քաղաքակառուցիչներ յայնքան բացորոշ է որ, ոչ միայն սենեակի մը մէջ աղօթելու իրաւունքն անգամ կը խափանէ թիւրք լաւուկներու կողմէ, զարով և փայտով, այլ և, եթէ պատահարբ մնացած տէրտէր մը Պոլիս երթայ, այլևս թոյլ չեն տար վերադառնալու: Կամ եթէ մեռնի, այլևս ոչ մէկուն թոյլ կուտան յարողելու: Եղածը ինքն իր մէջ պէտք է հասնի ու հալի, — ա՜հա մեծագոյն շնորհը...

Իսկ անշարժ կալուածներու աւարը կը շարունակել կատարելաբար բարբարոսութեամբ: Ինչ որ աղապիսի էր, գաղթականներու բաժնեւած կամ քանդուած է արդէն: Նոր օրինակ մը՝ Խարբերդէն:

— «Քաղաքի Ս. Յակոբ եկեղեցին, որու դպրոցին մէջ կուսուցանէր թլիսախնցին, անցեալ տարի քանդեցին և քարերը ծախեցին: Այժմ ալ Ս. Կարապետ եկեղեցին կը քանդեն, անոր քարերով պատանդան մը շինելու համար Մ. Քեմալի արձանին»:

Բայց և այնպէս, թիւրք ժողովուրդը անօթի է նորէն, նոյնիսկ միջին շրջաններու մէջ: Ճամբորդ մըն է որ կը պատմէ. — «Անօթութեան հետեանքով հիւանդութիւնները ծաւալած են և մահերը շատցած Խարբերդի նահանգին մէջ: Մալաթիոյ մէջ օրական 40-50 հոգի կը մեռնի: Մէզրէ՝ 8-10: Զմչկածաքի մէջ խիստ շատ են մահերը, և ամենասուղ գնով իսկ ուտելիք չի գտնուիր»:

\*\*\*

Վերջերս աչքի կը զարնէ տեսակ մը վճատութիւն՝ բարեկրօնական շարժման հետեանքներուն հանդէպ: Թիւրք մամուլը այլևս չի տնջար սպառարած ճարտարանութիւններով: Եւ ընդհակառակն իր սե օրը կուլայ, օրինակ, տառերու յանկարծական փոփոխութեան առթիւ:

Փաստ է, որ ահագին վնասներ կրած են թիւրք թերթն ու գիրքը՝ տառերու փոփոխութեան պատճառով: Եւ ամենէն աւելի պաշտօնական թերթերն են, որ խնդիրը կարծարծեն ուշադրաւ համարձակութեամբ:

Այսպէս, կրօնապաշտօնական «Միլիէթ»-ը (Պոլիս) պարբերաբար կը հնչեցնէ ահազանքը: Բանի մը հատուածներ՝ իր առաջին ողբերէն (Մայիս) .

— «Թիւրք ազգին մէջ մտաւոր պահանջները արդէն շատ քիչ էին, իսկ տառերու փոփոխումէն յետոյ գերայի իջան: Այդ պահանջներուն չափանիշը կը ներկայացնէին հինգ-տասը ժողովրդական պարբերաթիւթեր: Արդ, Բանի մը ամիս առաջ 20-30,000 սպառող թերթեր յանկարծ իրար հազարի, հազարի, միեւն իննգ հարիւրի իջան և իրարու ետեւ փակեցան:

«... Եթէ պետութիւնը չտեսնանէ տպագրական և հրատարակչական գործերը, ամուլթեան պիտի դատապարտուի ինչ որ կը սպասէինք տառերու յեղափոխութենէն: Միջին անգամ կրնանք բանի թէ՛ թիւրք ազգը գիտութեան և դատարարականութեան մէջ պիտի իյնայ այնպիսի ստիգմանի մը, ուր ինչպէս չէր պատմութեան որևէ մէկ շրջանին: Ի՞նչ որ մեր տեսածները և յաճ-ները ցոյց կուտան թէ այս մուր վախճանը մեզի կը մտնենայ հսկայաբալայ»:

Ինչպէս թիւրք թերթերը, հրատարակիչներն ալ իրենց յոյսը գրած են կրթական գործադարութեան վրա, և բացառիկ վարկեր կը պահանջեն: Կառավարութիւնը որոշ գումար մը յատկացոյց նախապէս, միև կողմէ մաքսապտուրքէ ազատ հոյակելով նոր տառերու և մեքենաներու ներածումը: Սակայն, առաջին օրերու զինովութիւնը ցնդելէ յետոյ, մարդիկ սկսան շահ ու գէնէ հաշիւներ անսելու, և ամէն օր արտունջներ կը ուղարկեն, հետզհետէ աւելի բարձրամայ: Յայտնապէս ողբալի է դրամաճանոններուն և հրատարակիչներուն վիճակը: Դեզերով զիրք ունին արարատառ, որոնք փոշիներու մէջ կը մնան, իսկ ամէն ինչ լատինատառ սպելու համար գրած չկայ: Տպակներն ալ դժուար կը սպառին: Կը զուին այնքան որքան պէտք է նոր տառերը ճանչնալու և ընթերցանութեան վարժելու համար: Հրատարակիչները մասնաւոր պատուիրակութիւն մը զրկած էին էնկիւրի, ճար մը խնդրելով, իսկ հիմա որ շատ մը խոստումներ մտնցւած են, կը սպառնան դատարան կրթական գործադարութեան դէմ, 80,000 ոսկի հատուցում ստանալու համար...

Կը թի թէ օրւան վարիչներն ալ բժրունած են կառութեան փափկութիւնը և այսօր խորտոն նալածք մը ունին անոնք, որ կառաջարկէին աստիճանաբար, և տասնըհինգ տարւան ընթացքին կատարել տառերու փոփոխութիւնը: Մ. Քեմալ հրամայեց, քմայքի մը պահուն, և այսպէս ալ պիտի քաշքշի, թերևս մինչև անոր մահը կամ պարտութիւնը:

Ամէն պարագայի մէջ, այն օրաթերթերը որ կը շարունակէին, գտած են հասոյթի զարմանազան աղբիւրներ, և երբեմն մինչև 8-12 էջով լոյս կը տեսնեն: Եւ անոնք ոչ միայն լրագրի պաշտօն կը կատարեն, այլ և այբբենարան-ընթերցարանի, մասնաւորապէս չհազարգուելով նոր սերունդն ու կիները, — քեմալապետութեան երկու ապահով խաբիսները: Փարիզեան թերթի մը բոլոր ասանձնախառնութիւնները կարելի է գտնել այսօրւան թիւրք թերթերուն մէջ, ծաղրանկարներէն մինչև ցնծուհիներու նկարները: Եւ կառավարութիւնը յատկապէս ոչ չի կուտայ ստորին մամուլին: Վերջերս երեսփոխան մը կառաջարկէր թերթերուն տարեկան 5000 և 1500-ական ոսկի պարգև տալ, հինգ տարւան համար, և Ազգ. Մեծ Ժողովը լրջօրէն քննութեան առաւ խնդիրը:

Երկար ձգագումներէ և նոյնիսկ փոխադարձ սպառնալիքներէ յետոյ, Ելքի մը յանգեցան Ֆրանսեթիւրք բանակցութիւնները, և յունիս 22-ին կնքեցաւ համաձայնութիւնը, զանազան պայմանագիրներով:

Ինչպէս կերևնայ պաշտօնական տեղեկութիւններէն, Ճրանսան այնքան ալ մեծ դիմումներ չէ ըրած մինչդէռ կարծողներ կային թէ կրնայ պարպել Անտիոքն ու Իսթէնտէրունը, ամէն գնով համաձայնելու համար, ինչպէս ըրաւ 1921-ին, լքելով Կլիբիան:

Այս համաձայնութեամբ, կը ճշուի թիւրքահարկական սահմանագիծը, որ միջազգային իրաւարար ատենի մը վճռին յանձնած 1926-ին, սակայն, մերժւած էր թիւրքիոյ կողմէ: Երկու կողմերն ալ յանձն կառնեն նսկել վաչկատուն ցեղերու և հրոսախուժներու վրա, որպէսզի արչաւանքներ չկատարեն մէկ երկրէն մեւ: Թիւրքիան կը ստանայ Մերսին—Ատանա երկաթուղին, որ Ֆրանսական սեփականութիւն էր: Յետոյ հասկարդութեան զետիւն մը գտնւած է թիւրքիոյ կամ Սիւրիոյ հպատակութիւնը ընդունած քաղաքացիներու կալածական վէճերը կարգադրելու համար: (Հայերն ալ մեծապէս շահագրգռւած են այս խնդրով):

Չանց աննելով ուրիշ մանրամասնութիւններ, այս համաձայնութիւնը մեր ուշադրութիւնը կը գրաւէ երկու գլխաւոր տեսակէտներով.—

Առաջին՝ Ճրանսա կրնայ աւելի սեղմել Հայերու մուտքը դէպի Սիւրիա և և նաննիւր ալ կան: Թիւրքերը երբեք արտրժած չեն Հայերու համախորձմէն, մանաւանդ Հալէպի, Անտիոքի և Իսթէնտէրունի շրջաններուն մէջ: Եւ ոչ միայն պարբերաբար թունաւոր սլաքներ կողղեն թերթերու միջոցաւ, այլ և մղում կուտան հրոսախուժներու գործունէութեան, խուճապ ստեղծելու համար: Անոնք բաւական ազմուկ հանեցին դաղթականներու տեղաւորման ձեռնարկին առթիւ, գիտնալով հանդերձ, որ նախատեսւած 40,000ը արդէն իսկ Սիւրիա—Լիբանան կը գտնուին, և անոնց ալ 8000ը միայն տեղաւորած է: Այս պայքարին մէջ իրենց ետեւէն քաշեցին կարգ մը արաբական թերթեր իսկ: Ճրանսա կրնայ լուեխայն հաւանած ըլլալ նոր սեղմումներու, գոնէ երկար ատենի համար: Չէ՞ որ բոլոր քաղաքական սակարկութիւնները կը կատարուին անձարներու զլտուն: Մանաւանդ կոտորած և հալածական բազմութիւններու զլտուն... .

Երկրորդ՝ Յունիս 22-ի համաձայնութիւնը կուզայ նոր օղակ մը կապել քրտական շարժման բոլորտիքը: Այս համաձայնութեամբ, Էնկիւրին կը լրացնէ իր պաշտողական շարժումը, որ սկսաւ Խորհրդային Միութեանէն, և շրթայ կազմելով Գարսիստանի ու Իրաքի (Անգլիա) հետ, ահա կը հասնի Սիւրիա, — միակ բաց դուռը: Երկար ատեն թշնամական ընթացք բռնելէ յետոյ, Ճրանսա (Սիւրիա) նոր ուղղութեան մը կը հետեւէ վերջին մէկ-երկու տարին, և նոյնիսկ ծրագրուանք քրտական բոյն մը հաստատելու վիճելի սահմանագծին երկայնքը, ձէգիրէ—Նիսեպոյն գիծին վրա, Մարտինի դիմաց: Եւ ոչ թէ արհեստական ձևով, այլ իբրև իսկապէս քրտարնակ շրջան: Նոր համաձայնութեամբ, քանի որ յանձն կառնէ բարեկամութեան և

չէզոքութեան դաշնագիր կնքել և հսկել հրոսախուժներու և վաչկատուն ցեղերու վրա, անուշտ պիտու հետևի ճամբը, որ ամէն պարագայի մէջ նպատաւոր չէ Բիւրտերուն:

Իսյց, Ճրանսան միայն թիւրքիոյ հանդէպ չէ ոչ շահագրգռւած է Բիւրտերով, այլ և Անգլիոյ հանդէպ (Իրաք): Եւ հիմա խնդիր է թէ ինչպէս պիտու արտասայուի անշլեֆրանսական մրցակցութիւնը այս գետնին վրա, մանաւանդ այն օրերուն, երբ արտանանհերկան քրտական նոր պտոթկումի մը: Աւելի ճիշտ՝ Թրքական զրգումի մը: Առ այժմ դժուար է ստուգել ամենօրեայ մամուլին մէջ երեքսոց լուրերը՝ զանազան քաղաքներու գրաման ևայլն, սակայն, փաստ է, որ Բիւրտերը հանդիսա չեն Արարատի, Գայաղիւ—Այաչկերտի, Տէրսիմի, Ղանի և Տիգրանակերտի շրջաններուն մէջ: Որքան ալ ուզեն խուսափիլ ընդհանուր շարժումներէ, ինքնապաշտպանութեան բնագոյր կրնայ գերագոյն կոխի մը մղել ջիւրտ բժրոստները: Եւ այն ստան հարեան բոլոր պետութիւնները ստիպւած են հաշտեցնել իրենց սեփական շահերն ու թիւրքիոյ հետ ստորագրւած յանձնառութիւնները:

Առ այժմ, թէ Թրքական և թէ Ֆրանսական մամուլը մեղրամոր խօսքեր կը փոխանակէ, ինչպէս միշտ, նման առիթներու մէջ: Ալ մոռցած են քանի մը ամիս առաջ, նոյնիսկ պաշտօնական թերթերու բեմէն արձակւած լեղի խօսքերն ու քողարկեալ սպառնալիքները, և փաստարանութիւններ կը լուեն երկու երկիրներու դարտոր բարեկամութեան մասին: Թիւրք թերթերը կնքած համաձայնութիւնը կը համարեն չիստ անկեղծ բարեկամութեան» դործ մը և կառաջարկեն թիւրքեֆրանսական գործակցութիւն՝ ամէն սասարէզի մէջ: Իսկ Ֆրանսական թերթերը, սկսելով պակասնորական «Ռանս»էն մինչև ձախակողմեան «Բոթիտէն»ը, արտասուչ խօսքեր կուղղեն թիւրքիոյ բարորութեան համար: «Թէև կէս դարէ է վեր թիւրքիան դէպի Անատոլու կը քշեն, բայց ան չի հրժարեր իր խօսքն բռնել եւրոպական գործերու մասին»: Համաձայնութեանը դժգոհ է միայն, համայնապարական «Մեմանիթէն»-ն, որ անոր մէջ կը տեսնէ նոր դաւ մը՝ թիւրքիան սահեցնելու հակախորհրդային քաղաքականութեան մէջ, ինչպէս ըրին Անգլիան և Իտալիան:

\* \* \*

Կոմկուսի Ֆրանսական պաշտօնաթերթը ջիւրմ կուսակից ըլլալով Սիւրիոյ պարպումին, ինչպէս իր նմանները, բնականաբար չի կրնար հանդուրժել, որ Ֆրանսա զանազան համաձայնութիւններով մարպպնոց իր դիրքը: Իսյց այս և ուրիշ արտասայառութեանց մէջ կա՞յ նաև խուլ դառնութիւն մը՝ «եղբայրական» քնմալապետութեան դէմ, որ այնքան վարպետութեն լեզու կը գտնէ քաղքենի—այլաբարհակալ պետութեանց հետ, անխնայ կը հալածէ համայնապարական որևէ ձեռնարկ, և միւս կողմէ կը մնայ բարեկամ և զինմակց՝ խորհրդային իշխանութեան:

Յաճախ տաք ու պաղ ջուրեր կանցնին այդ բարեկամութեան վրա: Վերջին ամիսներու ընթացքին շատ սուր հանգամանք ստացաւ ուսնութիւրք առևտրական վէճը: Թիւրք վաճառականները հաւանաբար կատալա-

թեթեան միջամտութիւնը խնդրած են խորհրդային իշխանութեան դէմ, որ ոչ միայն ծանր խոչընդոտներ կը յարուցանէ, այլ և «2,500,000 ոսկի շահատուրք պահանջած է 4,000,000 ոսկի արժող թրքական ապրանքներէ»: Եւ սակայն, ինչպէս թրքական ապրանքները կը մնան ի զօրու, և ոչ յեղափոխական

Ուսաստանը աւելի վստահելի զինակից ունի, ատ աժժ, ոչ ալ ջեմալական թիւրքեան, փոխադարձաբար:

Հանգոյց մը, որ չի քակւեր: Եւ որքան ատեն որ չէ քակւած, արեւելեան հարցը կը մնայ միշտ հարցական:



Խ Ն Կ Օ

Թեհրանից մեզ հաղորդում են յունիս 12-ին.— «Երէկ, հեռու հայրենիքից, այս օտար երկնքի տակ, հողին յանձնեցինք մեր անվեհեր մարտիկներից մէկին՝ խմբապետ Խնկոյն:

Ամսոյս 10-ին ընկերը ինքնաշարժով Ղուսից Թեհրան է ճանապարհուում: Գաղաքից եօթ փարսախ հեռուարութեան վրա ինքնաշարժի անիւնները կտարուած են, ինքնաշարժը շուտ է դալիս, և ընկերը հակերի տակն ընկնելով՝ ջարդուածքներ է ստանում ձախ օտքի և կրծքի վրա: Կրծքի վանդակի ջարդուած ոսկորները թոքերն են մտնում, որով ընկերը զրուցիւնը դառնում է անյուսալի: Զարդուած վիճակում մեր սիրելի Խնկոյն բերում է զազաք և տեղաւարում ամերիկեան հիւանդանոցում, որտեղ ամբողջ գիշեր մահաւան դէմ մաքառելուց յետոյ, ամսոյս 11-ի առաւօտեան ժամը 8-ին աւանդում է հոգին: Յուսերից աւելի ընկերը տանջուած էր այն մտքից, որ մեռնում է մարտիկին ո՛չ յարմար մահով»:

Անհեթեթ, դաժան մահ...

Խնկոյն մահով հայ մարտական սերունդը կորցնում է իր լուսաւոյն դէմքերից մէկին: Լուսաւոյն ո՛չ միայն իբրև ռազմիկ, այլև որպէս մարդ, իբրև ընկեր ու հասարակութեան անդամ: Հէգ, բարեհամբոյր, միշտ ժպտուն, զաջ տղամարդ — այսպէս էր Խնկոյն:

Կոտայքի Բաշ Գառնի գիւղից էր — ա՛յն Բաշ Գառնիից, որ քանի՛ քանի մարտական փայլուն ուժեր է ներել հայ ազատագրութեան: Աշխատաւոր գիւղա-

ցի էր: Վաղ երիտասարդութիւնից մտել էր Գաշակացութեան շարքերը, որին հաւատարմութեամբ ծառայեց մինչև մահ: Զէնքի վարժութիւնը հիմնովին ձեռք էր բերել ուսու բանակում: Պատերազմի տարիները կամաւոր էր Դրօի խմբի մէջ: Եւ ապա՝ Հայաստանի հանրապետական զօրամասերում և պահակախմբերում:

Խնկոյն առանձնապէս ժողովրդական դարձաւ 1921 թվի փետրարեան հակաբոլշեկ պայքարի օրերին: Բաշակոյնիցներէ խումբն էր, նրա առաջնորդութեամբ, որ ջարդ ու փշուր արաւ դէպի Բաշ Գառնի շարժուող բոլշեկեան զնդերը և հեշտացրեց փետրար 18-ի յեղափոխութիւնը: Եւ այնուհետև Ղամարուի ճակատի ամենագործօն դէմքերից մէկն էր: Միշտ՝ ամենավտանգաւոր դիրքերում և միշտ՝ յաղթական: Խնկոյն համակ ետանդ էր ու ողևորութիւն: Երգն ու ծիծաղը նրա անբաժան ընկերն էին ամենավտանգաւոր վայրկեաններին անդամ:

Այդպէս էլ մնաց մինչև վերջ, տարագրութեան մէջ էլ: Երբե՛ք չընկճեց և սպրեց մօտալուտ յաղթանակի յուսով, հակառակ որ ինքն էլ, ընտանիքն էլ մինչև յետին մրուրը քամեցին տարագրութեան դառնութիւնները:

«Յուսերից աւելի ընկերը տանջուած էր այն մտքից, որ մեռնում է մարտիկին ոչ յարմար մահով» — ահա ամբողջ Խնկոյն: Նա երջանիկ կը լինէր, եթէ մեռնէր կուրի դաշտում, հայրենիքի համար: Ափսո՛ս, հագար արիստ իգիթ Խնկոյն...

# Թիւրք - պարսկական ստեղծումովքեր

Ապրիլ ամսին Անատոլի Գործակալութիւնը պաշտօնապէս Հաղորդեց, որ ռուսական զորքերը թիւրքական թիւրքերը թիւրքական Գարսկաստանի միջև վերջացած են: Որոշած է կազմել մի յանձնարարութիւն կայացած վճիռները կեանքի մէջ գործադրելու համար: Միտաձանակ ստորագրած է մի համաձայնագիր, որով դաշնագիր կողմերը պարտաւորուած են միջոցներ օժտել առնել՝ ապահովելու համար սահմանադիւրս անորոշութեան պահպանութիւնը:

Այս հաղորդագրութիւնը գրեթէ նկատուեց մեծ մասով ու հասարակութեան կողմից, այն ինչ նոյնի է չափազանց լուրջ հետևանքներով: Քրդական վերջին շարժումները հարկաւոր է քննել հենց այս հաղորդագրութեան լուրի տակ:

Սահմանագծման խնդիրը Գարսկաստանի և Թիւրքիայի միջև նոր խնդիր չէ: Մի քանի դար է՝ որ այդ պետութիւններն իրար հետ վիճում են սահմանամերձ կէտերի համար: Վիճելի կէտերը, առաջին հայեացքից, թուած էին մեծ արժէք ներկայացնող, բայց երկու պետութիւններն էլ ահապէս կարևորութիւն էին ընծայում նրանց, մասնաւոր թիւրքերին, որ աչք ունէր Արքայատանի վրա և ձգտում էր բաց պահել իր առջևը դէպի Բագու և Թաշկենտ տանող ճանապարհները: Թէ՛ նախկին՝ համարձական և թէ՛ ներկայ համաթիւրքական Թիւրքիայի համար պարսկական սահմանադիւրս ուսումնական որոշ կէտերի տիրապետութիւնը համարում էր զաղաքական առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի հարց: Այդ է պատճառը, որ հակառակ բազմաթիւ խորհրդատուների ու պաշտպանների, թիւրք-պարսկական սահմանադիւրս միջոց էլ մնացել է բաց: Հենց պատերազմի նախօրեակին, 1914-ին, Թիւրքիայի և Գարսկաստանի միջև, երկար ու ձիգ բանակցութիւններից յետոյ, կայացաւ սահմանային համաձայնութիւն: Իրանից առաջ, համաձայնութիւն էր կնքել 1878-ին, աւելի առաջ՝ 1848-ին, 1823-ին և այլն: Այս բոլոր համաձայնութիւններն ու դաշնագրերը արժանապատիւ լուծում չուրին սահմանային վէճին:

Պատերազմից յետոյ էլ կացութիւնը չփոխուեց: Ոչ իսկ 1926թ. ապր. 26-ի չեղարկութեան և ոչ յարձակման դաշնագիրը Թիւրքիայի ու Գարսկաստանի միջև, ոչ էլ 1928թ. յունիս 15-ի համաձայնութիւնը զաղաքական գործակալութեան մասին՝ չփոխեցին սահմանային խնդիրը: Ընդհակառակը, պատերազմից յետոյ, սահմանային հարցը է՛լ աւելի սուր կերպարանք ստացաւ: Այս պնդած պատճառը քրդական շարժումներն էին:

«Այս բոլորի բանալին դուռնու համար, դրում է պրեզիան գործերի բուլնիկեան հեղինակաւոր մասնադէտներին մէկը՝ Ս. Իրանսկին, անհրաժեշտ է դիմել, նախ և առաջ՝ 1927թ. հոկտեմբերեան վերջնադրին, որ Թիւրքիան ուղղեց Գարսկաստանին: Այդ

վերջնագիրը արդիւնք էր այն սահմանային բարդութիւնների, որոնք տեղի ունեցան Թիւրք-պարսկական սահմանի հիւսիսային մասում (Արարատի ճիւղերին), երբ պարսկական հողերից եկած քրդերը Թիւրքական հողէ վրա գերի առին տեղական ըմբոստ ցեղերի դէմ գործող Թիւրք կանոնաւոր հետևադորի մի շուրջ ամբողջ հրամանատարական կազմի հետ միասին\*): Թիւրք-համապարտութիւնը, դիւանագիտական յարաբերութիւնները խցելու սպանակով, պահանջեց տասնորոշ ընթացքում ապա արձակել գերի առնւած ջոկատը»:

Իրանսկին աւելացնում է, որ պարսից կառավարութիւնը անոյժ էր գործադրելու Թիւրքերի պահանջը և յարաբերութիւնների խզումը, բոլոր ծանր հետևանքներով, թուած էր անխուսափելի, բայց «խորհրդային իշխանութեան բարեացակամ միջամտութիւնը խզումի ստալն առաւ: Թիւրք և պարսիկ կառավարութիւնները հենց այդ ժամանակահից, հանդիստ պայմաններում, ձեռնարկեցին բանակցութեանը՝ կարգաւորելու համար սահմանային գրութիւնը»\*\*):

Այդ բանակցութիւնները տեղեցին երկու տարի և յանդեցին ապրիլեան համաձայնութեան: Ի՞նչ է՝ այս համաձայնութեան բնոյթը — յայտնի չէ՝ բայց թուած է, որ Իրանսկիի յայտնած կարծեք ճիշտ է՝ թէ խնդիրը, իսկապէ՛, վերաբերում է ո՛չ այնքան սահմանագծման, որքան սահմանի երկու կողմը սպորտ «փակառուն ցեղերին», այլ ի սոսցով՝ քրդերին»:

Արևելեան նահանգներում Թիւրքերն՝ մտահոգող ամենահարառապ խնդիրը քրդական փնդիրն է՝ որ արդէն դուրս է եկել ներքին պետական հարցի սահմաններից և ստացել է միջազգային բնոյթ: Ուստի և զարմանալի չէ, որ Անգլոբան ամէն կերպ աշխատում է չեղոցացնել նրա թողած հակապետական ազդեցութիւնը, հենց բնում խնդրել քրդական ազատագրական շարժումը:

Նոյն տեսակետն ունի և Գարսկաստանի կառավարութիւնը իր ներքին՝ պարսկական քրդութեան մասին: Գիւրգ ժողովրդի զարթոնքը չի կարող սահմանափակել միայն մէկ վայրով և, վերջ է վերջոյ՝ Կանգրա-դառնայ և ուրիշ երկրներում անորոշ քրդերի մտայնութեան վրա:

Սակայն, եթէ սեփական, ներքին քրդի վրա Թիւրքի

\* ) Իրանսկին սխալում է կամ խեղաթիւրում իրականութիւնը ինդրի աղաքայ քրդերը պարսկական մասից չէին, այլ՝ Արարատի փնջերին անբացած քրդի յեղափոխականներ: ԽՄԲ:

\*\* ) С. Иранский, «Турецко-Персидское соглашение», «Заря Востока», 10 мая 1929.

ու. պարհիլը նայում են միևնույն աչքով, օտարի, արտաքին քրդու ծեղան վերաբերմամբ հայեացքները քորկուրովն այլ են: Անվիճելի փաստ է, որ Թիւրքերը ամէն դեռով աշխատում են զրգուել պարսկական քրդերին՝ Թեհրանի իշխանութեան դէմ: Թիւրք զործակալները միշտ էլ զործել են և այսօր էլ վխտում են պարսկազրիւրդ սահմանի աշխրէթներէ մէջ:

Իր հերթին, Պարսկաստանն էլ չի կարող գոհունակութեամբ չզիտել քրդական խռովութիւնները Թիւրքիայի ներսում: Կէ՞ որ, ինչ և լինեն դաշինքներն ու համաձայնութիւնները, Թիւրքիան, իր համաթիւրքական իդէալներով և Ատրպատականի վրա ունեցած ծրագիրներով միշտ էլ թշնամի է Պարսկաստանին: Թշնամու թշնամին իմ բարեկամն է — այս ծանօթ ճշմարտութիւնը, անշուշտ, հասկանում են և Թեհրանում, ուր սովորաբար տիրող էրաստե քաղաքականութիւնն է:

Բացի քրդական վտանգից, Թիւրքիայի համար կրնայ և մի ուրիշ կարեւոր նկատում. Պարսկաստանի հետ ունեցած նրա սահմանների հրահայտյի մասերը բունում են ռազմապիտական այն կէտերը, հաղորդակցութեան այն ուղիները, որոնք ուղիղ գծով, թուրք մահմադական դանդաղներէ միջով, պարսից և ռուսական Ազըրբէյջաններէ վրայով, տանում են դէպի կասպից ցով ու Անդրկասպեան երկրները: Պարսկաստանը սահմանակցելով Հայաստանի հետ՝ սեպի պէս ընկած է այդ ճանապարհի վրա: Այստեղից և այն դժուարութիւնը, որով քնորոշում են Թիւրք-պարսկական սահմանային բանակցութիւնները:

Թէ ինչ կը լինի Անատուրի Գործակալութեան աւետած այս վերջին համաձայնութեան արդիւնքն էլ, երևի, շուտով կը տեսնենք: Երկու՝ բան, սակայն, պէտք է ի նկատի ունենալ:

Նախ՝ պատահականութիւն չէ, որ Երկար դարեր կարելի չէ եղել լուծել Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանային վէճը: Այդ վէճը բխում է երկու կողմերէ համար էլ խիստ կենսական համարուող պատճառներից, որոնք ի զօրու են և այսօր: Քանի այդ պատճառները չեն վերացած, այսինքն, քանի Թիւրքիան չի դադարած համաթիւրքութեան պահակը լինելուց, դժուար է ենթադրել, թէ սահմանովէճը հարթուի:

Երկրորդ, դէթ մի որոշ ժամանակայ համար Անգլոբայի և Թեհրանի միջև արայացած համաձայնութիւնը կարող է աննպաստ կերպով անդրադառնալ քրդական պայքարի վրա: Ամենայն հասանակաւնութեամբ, Պարսկաստանը ստիպւած կը լինի յարգել իր յանձնառութիւնը և խիստ միջոցներ ձեռք առնել սահմանադուրը քրդերի առջև փակ պահելու համար: Միւս կողմից, համարեա անկասկած է, որ Թիւրքիան կօչուէ յարմար առիթից՝ հաշտարարի ենթարկելու համար քրդական խնդիրը: Այլ հարց է, թէ կը յաղտի՞:

Մեզ համար պարզ է, որ չի յաղտի: Քրդական հարցը մտել է այլև և այնպիսի փուլի մէջ, որ ոստիկանական-գինեորական միջոցներով կարելի չէ խզողել: Ընդհակառակը, այդ միջոցները է՛լ աւելի կը զրգուեն քրդերին, է՛լ աւելի կը խորացնեն վիճը նրանց և Թիւրքերի միջև: Է՛լ աւելի կատաղի և օրհասական կը դարձնեն պայքարը:

Այսուհետև քրդական հարցի, ինչպէս և հայկական հարցի լուծման մէկ միջոց է մնացել — Թիւրքերի վտարումը Արևելեան Անատուրիայից և Հայաստանի ու Քիւրդիստանի պատուութիւնը: Ուրիշ բոլոր միջոցները անիրական են և սահմանափակուր:

Ս. Վ.

# ԵՐԿՈՒ ՄԱՅ

Յունիս 30-ին Բեյզիայի ընկերվարական կուսակցութիւնը կորցրեց իր ականաւոր ղեկավարներից մէկին. մեռա ժողովի Վոտերը «Պիւպլա»-ի խմբադրպպետն ու խորհրդարանի ընկերվարական հատուածի հեղինակաւոր մէկ անդամը: Վոտերը ծնւել էր 1875 թւին: Համայնարանն աւարտելուց յետոյ նա դարձաւ քիմիազիտութեան պրոֆեսոր և ամբողջ էութեամբ նւիրեց ընկերվարական ու համազործակցական շարժման: Անմահ ջարդիչ էր ընկերվարութեան և տաղանդաւոր կազմակերպող ոյժ: Երկար ժամանակ անդամ էր խորհրդարանի, իսկ 1918-21 և 1925-27 հզաւ կառավարութեան անդամ՝ առաջ որպէս Արդիւնաբերութեան, Աշխատանքի և Պարենաւորութեան, սպա՛ որպէս Արդիւնաբերութեան, Աշխատանքի և Խնամատարութեան նախարար:

Վոտերը ջերմ համակիր էր և հայկական հարցի ու հայ ընկերվարական շարժման Դաշնակցութեան

ղեկավարներից շատերը, մասնաւորապէս Ռոստոմը մտտիկ բարեկամական կապերով կապւած էին հանգուցեալի հետ: Նրա մահը կորուստ է ո՛չ միայն բեյզիական և միջազգային ընկերվարութեան, այլ և մեզ համար: Զ. Յ. Դաշնակցութեան Իւրօսն մի հեռագրով բեյզիական ընկերվարական կուսակցութեան կենտրոնական կոմիտէին իր ցաւը յայտնեց Վոտերի մահւան առթիւ:

\*\*\*

Յունիս 28-ին Փարիզում, մեռա Յրանտիայի արմատական մտաւորականութեան աշէր ընկնող անդամներից մէկը՝ Տիկին Մենար-Դորիանը, որ Մարդու և Քաղաքացու Իրաւունքների Պաշտպանութեան Միութեան փոխ-նախարարն էր: Հանգուցեալը անկաշառ մէկ բարեկամն էր նաև հայկական դատի և, ի մասն

նաորի, Հ. Յ. Դանապետեան, ինչպէս և, առհասարակ, բոլոր Հալածական Ժողովուրդներէ: Նրա սուրբ միշտ բաց էր ամէն ազգի զաղաքական տարագիրներէ առջև:

Տիկին Մենար-Գորիանը երկար տարիներ գործօն ակնկցութիւն էր ցոյց տալիս Հայկական բոլոր զաղաքական ու մշակութային ձեռնարկներին: Հայաստանի անկախութեան օրերին, մեզ հետ միասին, նա էլ ուրախանում ու ոգևորում էր մեր յայտուցութիւններով: Յետագայ տարիներին, ամէն անգամ երբ պէտք էր լինում ձայն բարձրացնել Հայկական Հարստահարու-

թիւնների դէմ և պաշտպանել Հայոց դատը, Տիկին Մենար-Գորիանը միշտ առաջինն էր լինում Հրապարակ ելնողը: Նրա մահը խորունկ ցաւ պատճառեց նրան ճանաչող Հայկական բոլոր շրջաններում: Հ. Յ. Դանապետեանի բերօք և Հ. Հանրապետ. Պատերազութիւնը փութացին իրենց ցաւակցութիւնը յայտնել Հանգուցեալի զաւակին: Յուզարկաւորութիւնը, Տիկ. Մենար-Գորիանի կտակի Համաձայն, եղաւ անշուք, միայն մտերիների ներկայութեամբ, առանց ճառերի ու պատերազութիւնների:

**Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Է**

Կարգ մը քեֆնիկ պատճառներով « Դրօշակ »-ի սոյն քիւր ստիպւած ենք հրատարակել սովորական ծաւալով:

**Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Է**

« Դրօշակ »-ի գործակալներէն կը խնդրուի օր առաջ մաքրել իրենց հաշիւները:

Բաժանորդները պէտք է փութան զրկել բաժնեգիրը:

**Հ.Յ.Դ. ԺԸՆԵՒԻ ԳՐԱՊԱՀՆՍԻ ԿՈՂՄԷՆ**

Հ.Յ.Դանապետեան ժընեի զբաղակցեալ որոշւած է փոխադրել փարիզ: Այդ պատճառով առենի մը համար գիրքերու և նկարներու վաճառքը կը դադրեցուի: «Դրօշակ»-ի յայտուց համարներէն մէկուն մէջ կը դուրս գրապահեալ նոր հասցէն և վաճառման պայմանները:

**« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

« Դրօշակ » - ի տարեկան բաժնեգիրն է՝

Ֆրանսայի, Յունաստանի, Բուլղարիայի, Իտալիայի, Եւրոպական այլ երկրներին և Սիւրիայի համար 25 ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի, ամբողջ Պարսկաստանի և մնացած բոլոր երկրների համար՝ երկու և զոյւ ար:

**ՊԱՐՄԱԿԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ**

Նոր տարեշրջանից — յուլիս ամսից սկսած՝ Պարսկական Ատրպատականի համար ևս «Դրօշակ»-ի տարեկան բաժնեգիրը

Երկու և զոյւ ար է:

**Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի**

Ողբացեալ Տօֆթ. Երանդ Ֆրանգեանի գիրքը

**ՄԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՏՔԸ**

Ս. Վրացեանի յառաջարկով և հեղինակի նկարով Սահմանափակ քիւով տպագրւած

Ստանալու համար դիմել՝ Տիկին Ա. Ֆրանգեանի, Համատան, (Պարսկաստան), Տպարան Navarre, 5 Rue des Gobelins, Paris, և «Յառաջ»-ի խմբագրատունը:

Գին 1 դրար կամ 25 ֆրանկ: Փոստի ծախֆ չկայ:

**Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ե Լ Ա Ի**

« Մատենաշար Դրօշակ »-ի քիւ 67

Վ. Լէվիանի

**ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ**

և

**ՃՆՇԻԱՄ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԸ**

Թարգ. Կ. Սասունի

Գին 10 ֆրանկ

Ստանալու համար դիմել «Դրօշակ»-ի խմբագրութեան:

**ԲՈՎԱՆԻՆԿՈՒԹԻՒՆ**

Աշխատանքական կառավարութիւնը Անգլիայում (Խմբագրական) . . . . .	97
Փաթոնկաձայն Մարգարէն (Մ.Վարանդեան) . . . . .	99
Գաղութային խնդիրներ (Մ. Վրացեան) . . . . .	105
Երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութիւնը (Կ. Սասունի) . . . . .	111

Անդրկովկասի շրջանացումը (Մ.Մասուրեան) . . . . .	114
Արևելեան Նահանգները (Հրանտ-Սամուէլ) . . . . .	118
Թիւրքիոյ շուրջ . . . . .	122
Խնկո . . . . .	125
Թիւրք-պարսկական սահմանափակը (Մ. Վ.) . . . . .	126
Երկու մտ . . . . .	127

**« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի**

Քիւն արժէ 2 Ֆր. 50 սանտ.

**« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝**

M<sup>10</sup> S. AGOPIAN.  
5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)